



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** [CC BY-NC 3.0] license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



923

1807  
205  
—  
17-84

2010






Կ Ո Չ Ո Ւ Մ Ն

Ա. Պ Ա Շ Խ Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

---





205  
7-84

այ.

Կ Ո Չ Ո Ի Մ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՊՐՈՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ա Պ Ա Շ Ի Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

ԱՇԽԱՏԱԻՐԵԱՅ

ԲԱՐՍԵՂ, ԳԱՀԱՆԱՅ ՊՈՊՈՎԵԱՆ

Ի ՆՈՐ ՆԱԽԻՋԵԻԱՆԷ.



Ի ԹԷՈԳՈՍԻԱ,

Ի Տպարանի Խաչիպուան Ուսումնարանի.

1865.

36410-4.1.

1974-59



(4810-50)

2001

ԿՈԶՈՒՄՆ

Ա Պ Ա Շ Ի Ա Ր Ո Ւ Ք Ե Ա Ն



Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն .

Յ Ա Ղ Ա Գ Ս Բ Ա Ր Ի Ի Ո Ր Հ Բ Գ Ո Յ .



արի խորհուրդը՝ բարեգործութեանց հիմն է որ մարդուս արքայութեան ճանապարհ կբանայ, եւ կընմանի փոքր սերման՝ ուսկէց կճնանի մեծ ծառ, եւ կըլլայ գերան (սիրեկ) աներու եւ պալատներու համար:

Այսպէս բարի խորհուրդն ալ բարեգործութիւն եւ առաքինութիւն կճնանի, եւ կընէ զմարդն սիրելի Աստուծոյ եւ արժանի շնորհաց նորա: Սեր միտքը եթէ բարի բան խորհի՝ կգեղեցկանայ, եւ եթէ չար բան մտածէ՝ կազեղանայ:

Մարդուս միտքը, ջազացքի նման է, ինչ որ պատահի զայն կաղայ: Այսպէս ալ սըրտերնիս կշարժի, եւ ինչ որ պատահի՝ զայն կխորհի: Ապա պէտք է որ միշտ մեր միտքը բարի խորհրդով զարթեցնեմք, որպէս զի բարի բարի բաներ խորհի եւ կատարէ:

Ամենակարողն Աստուած ինչպէս հաւին թեւ տուած է որ որողայթէ խալսի, այնպէս ալ մարդկային բնութեանս բարի մըտածմունք տուաւ որ անով սատանայի որողայթներէն ազատիմք եւ անմեղ մնամք:

Շատ մարտիրոսներ եւ ճգնաւորներ Քրիստոսի չարչարանքը մտածելով՝ անտանելի եւ դառնագոյն տանջանքներու համբերեցին, մինչեւ գազանաց կերակուր եղան եւ կրակով այրուեցան: Ինչով էր որ նոքա կհամբերէին քաջութեամբ, եթէ ոչ անով որ սրտերնուն մէջէն նոքա մէկգի դրած էին չարչարողներուն վախը եւ աշխարհիս բոլոր հեշտութիւնը, որովհետեւ ունայն են եւ անցաւոր:

Կան այնպէս մարդիկ որ իրենց օտար կարծիքովը «Ինչպէս կարելի է, կըսեն, որ մէկ բարի խորհրդով մը մարդս յաւիտենական փրկութիւն գտնէ»: Սակայն Աստուած շատ անգամ գործով ալ ցցուցեր է

զայն, ինչպէս Սրբոց պատմութեանց մէջ  
կկարդամք որ մէկ բարի խորհուրդ մը շատ  
մարդոց յաւիտենական փրկութեանը պատ-  
ճառ եղեր է: Ուրեմն պէտք է որ ահիւ եւ  
դողութեամբ եւ զգուշութեամբ ապրիմք.  
վասն զի Աստուած կցանկայ որ մեր սրտին  
մէջը բարի խորհուրդներ ազդէ:

Ի՞նչպէս պէտք է ուրեմն որ արժանի  
ըլլամք Աստուծոյ ազգած բարի խորհուրդը  
ընդունել: Այս բանս զանազան կերպով կըր-  
նայ ըլլալ. երբեմն սուրբ գրեանք կարդա-  
լով, երբեմն աստուածասէր եւ բարեպաշտ  
մարդկանց հետ խօսելով. եւ երբեմն ալ  
մեռելները օրինակ բերելով մեր աչքին առ-  
ջեւը: Բայց որոնք որ իրենց խորհուրդը  
կապականեն վատ մտածմունքներով՝ Աս-  
տուծոյ բարկութիւնը անոնց վրայ կ'իջարկի.  
եւ իրենք իրենց կորստեանը պատճառ կըլ-  
լան. վասն զի նորա անհոգ կենալով՝ բարի  
խորհուրդին տեղը չար խորհուրդ կընդու-  
նին. այնպէսները եթէ չփոխեն իրենց  
խորհուրդը՝ առ Աստուած դառնալով զըզջ-  
մամբ եւ ապաշխարութեամբ, օրհնութեան  
տեղը՝ Քրիստոսի անէծքը կառնուն «եր-  
թայք յինէն անիծեալքը» լսելով վերջի  
դատաստանին օրը: Այսպէս ահա զանպտուղ

Թղենին անիծեց Քրիստոս, հրամայելով  
Թէ «Մի այսուհետեւ իքէն պտուղ եղիցի  
յաւխտեան» . եւ իսկոյն չորացաւ Թը-  
ղենին (Մատթ. ԻԱ, 19) : Վասն զի Աստուած  
երբ կտեսնէ որ իրեն արարածքը բարի  
խորհրդով չեն շարժիր, այն ատեն իրեն  
բարերարութիւնը մեր վրայէն իրաց կառ-  
նու, եւ զանազան կերպով կպատուհասէ .  
եթէ չարթըննան անոնք եւ մեղաց քնով  
Թմրին մնան, մահուան ահարկութիւնը եւ  
դժոխքի զանազան տանջանքները կգնէ ա-  
նոնց սրտերուն մէջը, եւ եթէ անոնցմով  
ալ չխրատուին նոքա, Աստուած անոնց վրայ  
եղած շնորհքն ալ կվերցնէ . այն ատենը ի-  
րենք իրենց կորուստը կերթան կիյնան .  
ինչպէս սանձ չունեցող ձին որ չունենալով  
առաջնորդ՝ ինքզինք կկորսնցնէ, դիմացի  
ելած վտանգներուն մէջ իյնալով յանդգնա-  
բար : Աստուած զայնպիսիները կթողու ի-  
րենք իրենց կամքին, ըսելով նոցա Դաւթի  
մարգարէին բերանովը Թէ «Բարձի Թողի  
զնոսա երթալ գհետ կամաց անձանց իւ-  
րեանց» : Եւ այնպէսները այնքան կմոլորին  
իրենց ցանկութեան ետեւէն վազելով ու չա-  
րաչար մեղանչելով, որ մինչեւ կորստեան  
բաժին կըլլան :

Բայց ամենաբարին Աստուած իրեն բարերար շնորհքովը պատրաստ է միշտ զամենայն մարդ յապաշխարութիւն կոչել եւ իւրաքանչիւրոց սրտին դուռը զարնել ըսելով « Ու՛ր որ իմ ձայնս լսէ եւ ինձ համար սրտին դուռը բանայ, ես նորա սրտին մէջն եմ. եւ նորա օթեւան կրլլամ » : Վասն զի Աստուծոյ ամենախնամ սովորութիւնն է որ մեր հոգին մեղքէ ազատ պահէ. եւ իհանդերձեալն իրեն արքայութենէն չզրկէ որ « եկայք օրհնեալք » օրհնութեամբը հրաւիրէ զմեզ ըսելով. « Ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն իսկզբանէ աշխարհի » :



## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

ՅԱՂԱԳՍ ԲԱՐԻ ՄՏԱԾՄԱՆ.

**Ա**մենայն մարդ՝ ամենայն քրիստոնեայ  
պէտք է մտածէ թէ ինչքան վիշտք  
եւ ճախորդութիւնք կպատահին՝ Աս-  
տուծոյ ծառայութեանը մէջ երկրիս  
վրայ պէտք է սիրով յանձն առնուլ:  
Եթէ այնպէս ջերմեռանդութեամբ Աստու-  
ծոյ ծառայեմք, այն ատեն Աստուծոյ Ամե-  
նակալին հաճոյ կրլլամք՝ եւ յաւիտենական  
երջանկութիւնը կստանամք: Վասն զի պար-  
տաւոր եմք միշտ եւ ամէն ժամանակ Աս-





տուճոյ ծառայել. վասն զի Տէր է նա եւ  
թագաւոր մեր վրայ. ինքն է որ բարերա-  
բու թեամբն իւրով ստեղծեց այս աշխարհս  
մեզի համար բոլոր կենդանիներովն որ մե-  
զի ծառայեն: Ինքը մեզ ալ հանեց յոչինչ է  
եւ ամենայն հայրական խնամօք կհոգայ  
եւ կպահպանէ միշտ եւ հանապազ: Ինքը  
տեսնելով որ մեր մեղքերովը սասանային  
գերութեան տակն ինկանք, գթացաւ մեր



վրայ, ուղեց մեզ արքայութեան գոները բանալ, ուստի յանձն առաւ աշխարհք գալ մարդկային կերպարանքն առնուլ: Ուստի Որդին Աստուծոյ խոնարհեցաւ մեզի համար, ծնաւ աղքատաբար իմսուրն անբանից, եւ աղքատ հովիւներէն միայն երկըրպաղութիւն ընդունեցաւ: Յետոյ մեր սիրոյն համար ինքը չարչարեցաւ, եւ խաչին վրայ մեռաւ, անով զմեզ մեղքէ ազատեց, եւ սատանայի ձեռքէն առնելով՝ յաւիտենական տանջանքէն ալ փրկեց զմեզ, եւ խոստացաւ իրեն արքայութեան անճառելի փառքը շնորհել մեզի:

Անոր համար շատ քրիստոնեայք իրենց բարի մտածմունքներովը աշխարհքիս ամենայն փառքն ու պատիւը ոչինչ համարեցան եւ սկսան Քրիստոսի վարդապետութեանն հետեւիլ եւ նորա չարչարանացը կցորդ ըլլալ, որպէս զի զանճառելի փառսն արքայութեան ստանան իհանդերձեալն, եւ վայելեն սրբոց եւ արդարոց հետ:

Այլ կան այնպէս քրիստոնեայք որ ամենեւին ջերմեռանդութեամբ չեն ծառայեր Աստուծոյ, որ բարի խորհուրդ մտածելու տեղ՝ չարը կմտածեն, եւ Աստուծոյ ամենախնամ մարդասիրութիւնը միաբերնին չբե-

րելով՝ բանիւ միայն զԱստուած կապաշտեն ,  
ինչպէս ինքն Աստուած Եսայի մարգարէին  
բերանովը կասէ թէ « Ժողովուրդս այս շըր-  
թամբք մեծարէ զիս , եւ զործովք՝ հեռի  
են յինէն » . այսինքն սատանայի հետ են  
նոքա իրենց ապերախտութեամբը : Այնպէս  
մարգրիկ կնամանին խլուրդի (գետնի մկան)  
որ միշտ գետնի տակը կքնակի եւ լոյս չը-  
տեսներ երբէք : Այսպէս նաեւ անուամբ մի-  
այն քրիստոնեայք՝ աշխարհիս վայելչու-  
թեան հետ ըլլալով եւ անոնց սէր ձգելով  
իրենց կենդանի ժամանակներն սուրբ գը-  
րեանք կարդալով կամ բարեպաշտ մարգ-  
կանց հետ խօսելով՝ երկնային բարութիւնը  
չեն տեսներ : Սակայն նոցա աչքը մահուան  
ժամանակը պիտի բացուի , եւ իրենց մոլո-  
ութիւնը պիտի տեսնեն ու ճանաչեն . վա-  
սըն զի մահը երբոր մարմնոյն աչքը կփա-  
կէ՝ մտաց աչքը կբանայ . բայց ինչ օգուտ  
այն ատենը աչքերնուն բացուիլը . վասն զի  
ուշ է , եւ օգնութիւն կամ զօրութիւն չու-  
նի ամենեւին :



## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ.

ՅԱՂԱԳՍ ԿԱՐՃՈՒԹԵԱՆ ԿԵՆԱՅ.



Հին աւանդութիւն է որ կրօնն թէ Մաթուսաղայ Հինգ Հարիւր տարի ապրելէն ետքը, հրեշտակ Աստուծոյ երեւցաւ իրեն եւ ըսաւ. «Նինէ քեզ համար մեծ տուն, վասն զի դեռ Հինգ Հարիւր տարի ալ պիտի ապրիս»: Պատասխա-



նեց Մաթուսաղայ եւ ըսաւ, «Քաւ լիցի ինձ այդ քան քիչ ժամանակ յանձն առնուլ»: Այսպէս կրօնէր, վասն զի կեանքը իրեն կարճ

կերեւէր, թէ եւ հինգ հարիւր տարի աւ  
ըլլար :

Գաւիթ մարգարէն ալ նոյնպէս կարճ կը-  
համարէր իրեն կեանքը եւ կըսէր, « Աւուրք  
իմ որպէս հովանի անցին » . (Մաղնու. ձԱ, 12)  
Յակօր նահապետն ալ պանդխտութիւն ա-  
նուանեց իրեն կեանքը :

Մարդկային կարճութեան կեանքը ծաղկի  
նման կ'իթումի . անոր համար կըսէ Աստուած  
Եսայի մարգարէին . « Գոչեա . եւ նա ասէ  
զինչ գոչեցից . Ասէ Աստուած, Ամենայն մար-  
մին խոտ է եւ ամենայն փառք նորա իբրեւ  
զծաղիկ խոտոյ . ցամաքեցաւ խոտն եւ թօ-  
թափեցաւ ծաղիկ նորա » (Եսայի, Ի, 6.) : Այս-  
պէս ամենայն մարդոյ մարմինն ու կեանքը  
իրենց գեղեցկութիւնովն ու վայելչութիւ-  
նովը կանցնի կերթայ թոռմելով : Մահը  
միշտ մեր կեանքը խլել կ'ընայ . վասն զի  
ամէն օր մէկ քար կընկնի կկորսուի մեր կեան-  
քէն . ոչ գանուեցաւ եւ ոչ եւս գանուելու  
է : Ինչպէս որ որդը՝ փայտի մէջ, եւ ցեցը՝  
հանդերձի մէջ կընակի, այսպէս մահն ալ  
մեր մէջը բնակուած կայ՝ որ կրճելով մեր  
կեանքը կ'մաշէ :

Այժմ նայինք մեր անցեալ կեանքը, լամք  
եւ ողբամք եւ մտածեմք թէ ո՛ւր է մեր ար-

ղայութիւնը, սուր է մեր մանկութիւնն ու երիտասարդութիւնը: Յիրաւի այն հասակները կորան եւ մեռեր են մեզի համար. որովհետեւ չեն կարողանար անոնք մեզի գառնալ: Երեկուան օրը անցաւ, չգիտեմք թէ վաղը ինչ պիտի ըլլայ: Այսօր ալ որ կեցած եմք, մինչեւ երեկոյ ինչ ըլլալնիս չեմք գիտեր:

Անոր համար աստուածային սուրբ գրքեանքը՝ ստուեր մահու կիողչեն զայս կեանքը. որովհետեւ մեր մարմնոյն ստուերը՝ մեր ընթանալուս ժամանակը հետերնիս կքալէ:

Եթէ այսքան խախտւտ է եւ կարճ մեր կեանքը, ապա ինչպէս կարող եմք մեծ համարիլ աշխարհիս փառքն ու մեծութիւնը: Ընդունայն են ստուգապէս ամենայն փառք եւ պատիւ. ընդունայն են գանձք եւ ամենայն հարստութիւնք. նաեւ մարմնոյն հեշտութիւնը սնւտ է եւ ստուեր աշխարհիս:

Ազամ 950 տարի ապրեցաւ եւ մեռաւ: Սէթ 912 տարի ապրեցաւ եւ մեռաւ, նոյնպէս եւ ամենայն նահապետքը թէպէտ երկար ապրեցան՝ բայց նոքա ալ մեռան: Մեր ողորմելիքս ապա ինչ պիտի ըլլանք. իհարկէ մեք ալ պիտի մեռնիմք մէկ օր մը. այս տեղը մնալու չեմք: Տղայք եւ երիտասարդք

կհաւատան ծերութեան հասնիլ . ծերերն ալ  
յոյս կզնեն շատ ապրիլ :

Դաւիթ մարգարէն՝ փառաւոր թագա-  
ւորութիւն կընէր, եւ խիտ հարուստ էր  
եւ զօրաւոր թագաւորաց մէջ . շատ քաղաք-  
ներու եւ դաւառներու տէր էր, ճոխ էր



եւ փարթամ . աշխարհի բանին անկարօտ  
էր . ոչինչ կհամարէր զամենայն փառս եւ  
զմեծութիւնս աշխարհիս, այլ միայն երկ-  
նային մեծութիւնը եւ փառքը ճշմարիտ  
կճանաչէր, եւ արքայութեան կիափաքէր :  
Անոր համար միշտ ինքզինք աշխարհիս վրայ  
աղքատ եւ օտարական համարելով կըսէր,  
«Վնայ ինձ զի ընդ երկար եղեւ պանդխտու-

Թիւն իմ» . (Սարգ. ձժԹ, 5) : նա չէր կարողանար ամենեւին արտասուքն արգելուլ, կուլար կողքար միշտ, աղօթք կընէր եւ առ Աստուած կաղաղակէր :

Բայց աշխարհասէր մարդիկ այնքան ընկըզմած են աշխարհքիս բարութեանցը մէջ՝ որ ամենեւին յաւիտենական բարութիւնը չեն յիշեր : Այնպիսիքը կնամանին եղիպտացւոց, որոց աղարակները կջրուին նեղոս գետի ջրով, երկնքի աստուածապարգեւ անձրեւին յոյս չունին : Այսպէս եւ աշխարհասիրաց սիրարը ոչ դժօխքի վախով կշարժի եւ ոչ արքայութեան բարիքով, վասն որոյ եւ չեն կրնար մեղքէ հեռանալ եւ արգարութիւն գործել : Չեն մտածեր անոնք թէ դժօխքի տանջանքը եւ արքայութեան վառքը յաւիտենական են, եթէ այս երկունս ալ յաւիտենական չըլլային՝ զօրութիւն չէին ունենար : Անոր համար աստուածային զօրութիւնը՝ ըրաւ արքայութիւնն ու դժօխքը յաւիտենական :

Դաւիթ մարգարէն յաւիտենականութեան յիշատակը գամած ունէր իրեն սրբտին մէջը, եւ միշտ կմտածէր մահուան եւ յաւիտենականութեան համար, վասն որոյ



կըսէր ահիւ եւ դողութեամբ, «Ժամանեցին պահուց աչք իմ, խռովեցայ եւ սչխօսեցայ»: Արդ ասա ով Ս. մարգարէ, ինչո՞ւ կխռովիս, կամ ինչո՞ւ չես խօսիր լուս կկենաս. եւ ինչո՞ւ անհանգիստ ես ահիւ եւ դողութեամբ: Ահա ցոյց կուտայ իւր տառապանաց պատճառը եւ կըսէ, «Խորհեցայ դաւուրսն զառաջինս, եւ զամսն յաւիտենից յիշեցի»: Կըսէր թէ չեմ գիտեր ինչ վիճակի մէջ եմ, արդեօք յաւիտենական երջանկութիւնը պիտի ստանամ արդարոց հետ, թէ յաւիտենական տանջանքը պիտի առնում դատապարտելոց հետ: Անոր համար տառապեալ հոգւով եւ տարակուսեալ սրտիւ կըսէր. «Միթէ յաւիտենից մերժեսցէ զիս Տէր»: Այսպէս մտածելով ջանք կընէր նոր վարք ստանալ եւ առաքինի ըլլալ:

Մեք ալ սորվելով նոյն Գաւիթ մարգարէէն, պէտք է այս երկու յաւիտենականութեան համար մտածեմք. զի կամ պիտի ունենամք յաւիտենական փառքը յերկինս. կամ պիտի ստանամք յաւիտենական տանջանքը դժոխքի մէջ: Կամ պիտի խնդամք սրբոց հետ, եւ կամ պիտի լամք մեղաւորաց հետ: Այս երկուսին մէկը իհարկէ ան-

պատճառ պիտի պատահի մեզի, բարին  
կամ չարը: Կեանքը եւ մահը դրած կայ  
մեր առջեւը. սրը հարկաւոր է մեզի՝ զայն  
պէտք է ընտրեմք:



Պ Ա Տ Մ Ո Ւ Ք Ի Ի Ն .

Մարդուն մէկը՝ զԱտուած եւ իրեն հո-  
գին մոռացեր էր, ուրիշ բան չէր հոգար.  
միայն կհետեւէր մարմնոյն հեշտութեան  
եւ աշխարհիս փառաց. մէկ գիշեր մը չկա-  
րողացաւ քուն ըլլալ, սկսաւ բոլոր գիշերը  
ասդին անդին քալել: Այն գիշերուան իւ-  
րաքանչիւր ժամը մէյմէկ տարի երեւցաւ  
նորա համար. մեծապէս կցանկար որ առա-  
ւօտաւ լոյսը բացուէր. ուստի սկսաւ մտա-  
ծել ինքն իրեն՝ ըսելով, «Ո՛վ մարդ, այս-  
քան գժուար է մէկ գիշեր անքուն մնալդ-  
փետրալից անկողնի մէջ. ապա ինչ պիտի  
ընես, կըսէր, սով ողորմելի, որ այն ասն-  
ջանքէն չես կարող ազատիլ՝ եթէ այժմ  
վարքդ չուղղես: ժամանակ կուգայ որ պի-  
տի տեսնես քեզ հիւանդ անկողինն ընկած.  
այն գիշերը այս գիշերէն շատ աւելի գէշ  
է: Անկողինէդ ետքը կսպասէ քեզ մահը՝ որ

զմարմինդ պիտի տանի փոսի մէջ ձգէ . այն պիտի ըլլայ քեզ համար տուն կամ անկողին եւ որդերը մարմինդ պիտի ուտեն : Հոգւոյդ համար կարող չես հոգալ , չես դիտեր թէ ինչ պիտի պատահի , եթէ քու անկարգ վարքդ չես ուղղեր՝ ուրիշ տեղ արժանի չես երթալ՝ բայց եթէ դժոխքը , ուր որ պիտի ունենաս հրեղէն անկողին , ոչ երկու կամ երեք տարի՝ եւ կամ տասն ու քսան , այլ յաւիտենական եւ մշտնջենաւոր . եւ ոչ երբէք զԱտուած պիտի տեսնես այն տեղը : Վայ ինձ թշուառականիս որ եթէ չեմ կարողանար մէկ դիշեր մը միայն անքուն մնալս տանիլ , ապա ինչ պիտի ընեմ դժոխքի անքուն տանջանացը մէջ » :

Այս այսպէս մտածելով զղջացաւ նա ամենայն մեղքէն , փոխեց վարքը եւ խիստ ճգնու թեամբ ապաշխարեց , առաքինի մարդ դարձաւ եւ մեռաւ սրբութեամբ :

Ուստի մեք ալ նորա նման մտածելով պարտական եմք զղջալ , ամենայն մեղքէ ապաշխարել եւ ատուածահաճոյ վարք ունենալ , որ սրբութեամբ վճարելով մեր կեանքը՝ երկնից արքայութեանը արժանի լինիմք խիառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ . ամէն :



19744-59

4810-50

## ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ.

ՅԱԳԱԳՍ ԲՈՂՈՐ ԱՒՈՒՐՆ ԸՍՏ ՀՈԳԻՈՅ ԿԵՅՈՒԹԵԱՆ.

**Ս**մենայն առաւօտու որ արթննաս, առաջ ասան, «Տէր իմ եւ Աստուած Յիսուս Քրիստոս որ իձեռն ամենողորմ գթութեան քո առաւօտուն զիս հասուցիր, քու սուրբ անունդ փառաւորելու եւ քեզ ծառայելու համար, կկնդրեմ ինձի օգնական եղիր որ ես չմեղանչեմ: Տուր շնորհ ըստ կամաց քոց խորհիլ եւ խօսիլ. վասն զի դու ասացիր թէ խնդրեցէք եւ առնուցուք»: Ես կաղաչեմ Տէր Աստուած որ առանց մեղքի անցընեմ իմ օրս: Կհաւատամ որ դու եւ քու խօսքերդ ճշմարիտ են. կաղաչեմ բոլոր սրաիւ գոչելով առ քեզ. Յղնեա ինձ ըստ բանի քում եւ մի ամօթ առներ զիս իյուսոյ իմմէ»: (Սաղմ. ձժԸ, 116):

Ապա յանձնէ՛ զքեզ ամենօրհնեալ Կուսին Մարիամու եւ քու սրահապան հրեշտակիդ որ քեզ համար բարեխօսեն միշտ, աղաչէ անոնց որ զքեզ զարթեցընեն, քու ծուլութիւնդ խափանեն եւ մխարդ լուսաւորեն:

Ապա սկսէք թու գործդ ընել, եւ յուսով եղիւր որ յաջողութեամբ կվերջացնես օրդ եւ գործերդ, եթէ նոյն բարի սովորութեամբ վարուիս ամէն օր բոլոր կեանքիդ մէջ:

Ամէն օր տունէդ որ գուրս կելնես՝ մէկ տեղ մը երթալու, առաջ երեսդ խաչակնքէ եւ ասան «Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ»: Պարտական ես ուղղակի եկեղեցի երթալ. եթէ պատարագի օր է՝ պատարագ տես, եւ եթէ հասարակ օր է՝ մինչեւ ժամին վերջը կեցիր, ազօթք բրէ, ճրագ մը վառէ բարեպաշտութեամբ, եւ ապա գործիդ գնա:

Այլ եւ սովորութիւն ունեցիր միշտ հոգեւոր գրեանք կարդալ. եթէ կարդալ չես գիտեր, ուսումնական ու հոգեսէր մարդկանց հետ բարեկամացիր, աստուածային խօսքերը խօսել սորվեցիր, եւ ուրիշ հոգեւոր բաներ խօսողներուն ականջ դիր:

Զգոյշ կեցիր, հեռու պահէ զքեզ այնպէս ընկերներէ որ կկամենան զքեզ գինետուն (մեհակուն) տանել, կամ սրճանոց (խահլիկե) եւ կամ ուրիշ անպատկան տեղեր: Դու միշտ միտքդ առ Աստուած սուր՝ եւ ուղիղ մտքով

աղօթք ըրէ : այնպէս համարէ թէ Աստուծոյ մօտն ես :

Եթէ տանուտէր ես եւ ընտանիք ունիս՝ ընտանեացդ խնամք տար : հոգեւորապէս խրատներ տալով եւ Աստուծոյ ճամբան ձգդելով, որ դու պարտաւոր չմնաս Աստուծոյ առջեւ : Ընտանիքդ ալ պարտական են հնազանդ ըլլալ քեզ՝ որ Քրիստոսի խաղաղութիւնը արմատանայ ձեր տանը մէջ . վասն զի շատ աւելի հարկաւոր է տան մէջ խաղաղութիւնն ու քաղցրախօսութիւնը եւ սէրն՝ հանդերձ հնազանդութեամբ :

Այլ եւ պարտական ես միշտ մահզոյ յիշել . աւելի օգուտ է առողջութեան ժամանակը սգաւոր կենալ՝ քան թէ մահուան ժամանակը :

Երեկոյին ալ երբոր պատրաստուեր ես անկողինդ մտնել, զզջացիր ամենայն մեղքէդ, եւ մտածէ որ համար պիտի տաս Ստեղծողին : Յիշէ Դաւթի մարգարէին խօսքը որ կըսէ . « Զոր ինչ ասէք իսիրտս ձեր՝ յանկողինս ձեր զզջացարձք » . (Սաղմ. Դ. 5) . այսինքն ինչ որ այն օրը անպատշաճ բան մտածեցիր եւ կամ ինչ անարժան գործ որ գործեցիր՝ պէտք է անկողինիդ մէջ զզջալ անոնց վրայ, եւ առաջագրել որ

մէյմ' ալ այն մեղքերուն մէջ չընկնիս :  
Հինգ գործողութիւնն հարկաւոր է քեզ .  
նախ՝ պարտական ես Աստուծոյ շնորհակալ  
ըլլալ որ զքեզ երեկոյի ժամուն հասոյց եւ  
հանգչեցոյց զքեզ յաշխատանաց : Երկրորդ՝  
խնդրել քու Ստեղծողէդ զլոյս շնորհաց , ո-  
րով կարողանաս քննել այն օրուան մէջ ը-  
րած գործերդ : Երրորդ՝ քննութիւն ընել  
այն օրուան գործոցդ համար : Չորրորդ՝  
զըջալ որ այն օրը ընդդէմ Աստուծոյ մե-  
ղանչեցիր , եւ խօսք տալ որ նոյն մեղքերուն  
մէջ ուրիշ անգամ չգտնուիս : Հինգերորդ՝  
անկողին երբոր կմտնես՝ յանձնէ զքեզ Աս-  
տուծոյ , խաչակնքելով երեսդ նշանաւ սուրբ  
Խաչին յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն  
սրբոյ : Այսպէս պարկեշտութեամբ մտիր  
անկողինդ , մեղքերդ եւ գործերդ քննելով  
քուն եղիր խիառս Աստուծոյ . ամէն :



### ԳԼՈՒԽ ՀԻՆԳԻՐՈՐԳ.

ՅԱՂԱԳՍ ՀԵՇՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ.



Հեշտասէբքը՝ աշխարհքիս վայելչու-  
թեան եւ մարմնոյ ցանկութեան հե-  
տեւողներն են, որ Աստուծոյ ամենա-  
կալին բարութիւնը կմուսնան, եւ  
իրենց դործքը այնպէս ցոյց կուտան  
թէ չեն կամենար իրենք Աստուծոյ նայել  
եւ նորա հրամանը կատարել, վասն զի  
աշխարհքի վայելչութիւնը եւ մարմնոյ  
ցանկութիւնը չեն թողուր որ Աստուծոյ  
անհուն բարութիւնը տեսնեն եւ նորա  
քաղցրութիւնը վայելեն: Անոնք ալ որովհե-  
տեւ առանց Աստուծոյ երկիւզի հեշտասիրու-  
թեան հետ կըլլան, իբրեւ ուրացող Քրիս-  
տոսի պիտի դատապարտուին վերջի ընդ-  
հանրական դատաստանին ահեղ Ատեանին  
մէջը, պիտի ուրանայ զնոսա Քրիստոս ա-  
սելով թէ «Ոչ գիտեմ զձեզ»: Ինչպէս  
իրեն սուրբ Աւետարանին մէջը կըսէ թէ  
«Որ ուրացի զիս առաջի մարդկան՝ ու-  
րացայց եւ ես զնա առաջի Հօր իմոյ որ  
յերկինս է»: (Մատթ. Ժ. 35):



Ազգա պարտական են ամենայն քրիստո-  
նեայք որ գործքով ալ Քրիստոսի հետեւող  
ըլլան եւ ոչ եթէ միայն անուամբ, որպէս զի  
Քրիստոս ալ նոցա աղօթքը լսէ եւ խնդր-  
ւածքը կատարէ, եւ իրեն հովանաւորու-  
թեամբը պահպանէ, թէ այտեղի փորձանք-  
ներէն ազատ պահելու համար, եւ թէ այն-  
տեղի յաւիտենական դատապարտութենէն  
փրկելու համար: Խոհեմ մարդը երբոր աս-  
տուածային կողմանէ բարի խօսքեր կլսէ,  
իսկոյն ջանք կընէ որ ինքն ալ հաղորդ գըտ-  
նուի այն բարի խօսքերուն. եւ կսկսի ջա-  
նալ որ զանոնք գործագրէ իփառս Աստու-  
ծոյ: Վասն զի խոհեմը եթէ մեղքի մէջ ալ  
ընկնի՝ վնայ կուտայ միշտ իրեն անձին, եւ  
ապաշխարութեան ճամբան կմանէ՝ որ մեղ-  
քերուն քաւութիւն դոնէ: Բայց սպէտը եւ  
անիմաստը՝ իրեն հեշտասիրութեամբը սուրբ  
գրոց խօսքերը չնւզեր կատարել, եւ չիմա-  
նար թէ մեղքի մէջ է մնացեր. վասն որոյ  
եւ առանց երկիւղին Աստուծոյ՝ հետեւելով  
աշխարհիս հեշտասիրութեան եւ մարմնա-  
ւոր ցանկութեան, յաւիտենական դատա-  
պարտութեան ճամբան կմանէ՝ որ կորուստ  
է իրեն բոլորովին. ինչպէս Եսայի աստուա-  
ծարան մարգարէն կլկայէ, «Մի թէ չէք

գիտեր, կըսէ, որ հուր բորբոքեալ կայ ա-  
նօրէն մեղաւորաց համար» . (Եսայի ժ, 17):

Եզրաս քահանայապետն ալ տեսաւ աշխար-  
հիս մէկ կողմը հրեղէն ծով՝ որ ձայներ  
հանելով կգոռար կբորբոքէր եւ բոցը վեր  
կելլար. հրեղէն վիշապները լերանց նման  
էին. կրակի գետ կվաղէր նոցա բերնէն.  
եւ ըսաւ հրեշտակին՝ որ մօտ էր իրեն.  
«Տէր, ըսէ ինձի թէ այս սոսկալի տեսիլքը  
ինչ է»: Հրեշտակը պատասխանեց եւ ը-  
սաւ, թէ «Այն՝ Աստուծոյ օրէնքը արհա-  
մարհողներուն տանջանաց տեղն է»: Եզրաս  
մարդարէն սկսաւ գանգատել հրեշտակին  
«Եթէ մարդս այսպէս գառն տանջանք պի-  
տի քաշէ՝ ինչո՞ւ համար ապա ստեղծեց  
Աստուած, ինչ շահ եղաւ: Ես կաղաչեմ  
ձեզի, ըսաւ, մի թողուք որ մարդս այս  
տանջանքներուն մէջ մնայ»: Այն ատեն  
հրեշտակը պատասխանեց Եզրին թէ «Ո՛վ  
որդի մարդոյ, լսէ դու եւ միաքղ պահէ,  
նոյնպէս եւ ամենայն մարդկանց կըսեմ. դուք  
դձեղ Աստուծոմէ աւելի իմաստուն կկարծէք  
որ իրեն կուղէք խրատ տալ. ըսէ ինձ թէ  
քեզ համար լու կթուի արդեօք որ թէ  
չարագործն եւ թէ բարեգործը միատեղ  
քնակին եւ մէկտեղ վարձատրուին»:

Եւ յիրաւի, թէ եւ ամենայն մարդիկ Աստուծոյ ստեղծուածներն են, բայց մէկը զԱստուած կրարկացնէ եւ կանարգէ՝ իրեն ամենայն չար գործքովը. եւ միւսը՝ զԱստուած կօրհնէ եւ կուրախացնէ, իրեն բարի գործքովը: Սաղայէլը ուրիշ հրեշտակներէն ինչ պակաս էր եւ ինչու նա կօրաւ, մինչդեռ բարի հրեշտակները կեցած են Աստուծոյ փառք տալով: Այսպէս եւ չար եւ օրինազանց մեղաւոր մարդիկը կը կորսուին, եւ արդարները որ Աստուծոյ երկիւղած են, Աստուծոյ փառք տալով կապրին: Քանզի Աստուած անձնիշխան ըրաւ զհրեշտակ եւ զմարդիկ եւ ցոյց տուաւ անոնց չարն ու բարին, եւ սորվեցուց թէ կորստեան ճանապարհը հեշտասիրութիւնն է, եւ կեցութեան ճանապարհը՝ ապաշխարութիւնն է. եւ թէ որք զօրծեն մարդիկ զայն կժտանգեն: Եթէ բարի հրեշտակք չըլլային՝ եւ բարի մարդիկ ալ չդանուէին, այն ատենը կրնային սատանայն եւ չար մարդիկ արդարանալ: Բայց որովհետեւ հրեշտակք եւ սուրբք կան, ուրեմն սատանայն բերան ունի խօսելու ընդդէմ Աստուծոյ, եւ ոչ մեղաւոր մարդք:


Ամենաբարին Աստուած իհանգերձեալն

զամէնքն ալ արդար իրաւունքով կ'լարձա-  
տրէ. բարի գործողներուն բարի կհատու-  
ցանէ եւ չար գործողներուն չար: « Գիտաս-  
ջիք, կըսէ Պօղոս առաքեալը, զի իՏեառնէ  
սունուցուք զհատուցումն ժառանգութեան  
ձերոյ. (Առ Կորնոս. Գ. 24):



### ԳԼՈՒԽ ՎԵՏԵՐՈՐԴ.

Յ Ա Ղ Ա Գ Մ Մ Ա Ր Մ Ե Ո Յ.

 Եթէ ըստ մարմնոյ կեցջիք՝ մեռանե-  
լոց էք (Հռոմ Ը. 5) կըսէ Առաքեալը.  
այսինքն եթէ միայն մարմնով կապ-  
րիք, մարմնաւոր հեշտութեանց ե-  
տեւէ վազելով հոգեւոր գործքերը  
զանց կառնուք եւ Աստուծոյ արդար դա-  
տաստանը միտքերնիդ չէք բերեր՝ կմեռա-  
նիք՝ կըսէ. յաւիտենական երջանկութենէն  
կզրկուիք որ արքայութեան մէջ պիտի  
վայելէիք, ու անոր տեղ մշանջենաւոր դա-  
տապարտութեան մէջ կմնաք իդժոխս: Ինչ-  
պէս շատ քամիէն ետքը անձրեւ կամ կար-

կուտ կըլլայ, եւ երբեմն ալ մեծամեծ մրրիկք ու փոթորիկք կերնեն, այնպէս ալ՝ սատանայական խարէութենէն եւ միայն մարմնաւոր վայելչութենէն ետքը՝ կհետեւի փորձութիւն, փորձութենէն ետքը՝ դառն մահ, եւ մահէն ետեւ՝ յաւիտենական դատապարտութիւն:

Մարդու մարմինը իբրեւ ձի է եւ ջորի (խարչը). որ եթէ զանոնք անսանձ (առանց սիգկիկի) թողուն՝ սայլն ալ մէջի մարդն ալ կհորուսանեն, փոսերու եւ ձորերու (sterkness) մէջ ձգելով: Անոր համար Դաւիթ մարդարէն կխրատէ զամենայն մարդոյ, ըսելով՝ թէ «Մի լինիք որպէս զձիս եւ զջորիս» (Սաղմ. 1Ա. 12). եւ Պօղոս առաքեալն ալ կպատուիրէ թէ «Հողւով դնացէք, եւ զցանկութիւն մարմնոյ մի կատարէք» (Եփես. Ե. 16): Վասն զի մարմնոյ ցանկութիւնը Աստուծոյ թշնամի է եւ հակառակ հողոյ՝ որ նորա ամենայն զօրութիւնը դուրս կհանէ, հեշտասիրութեան թոյնը կմտնէ հողին ապականելով կցրուէ ամենայն առաքինութիւնները եւ աստուծային շնորհքը. անոր համար մարմնասէր մարդիկ իբրեւ անպտուղ աւազ չեն կրնար առաքինութեան հողեւոր գործքեր պաղարեւել:

Դարձեալ մարմինը հեշտասիրութեամբը երեք կերպիւ վնաս կուտայ հոգւոյն. Առաջինը՝ հոգւոյն վայելչութիւնը կտգեղացնէ. երկրորդ՝ միտքը աշխարհքի հոգսով կխոցուտէ. եւ երրորդ՝ Աստուծոյ շնորհաց քաղցրութիւնը կվերցնէ»:

Ապա պէտք է ամենայն քրիստոնէից օանձել իրենց մարմինները, տանջել պահքով եւ աղօթքով. վասն զի Աստուած բեկեալ եւ խոնարհ սրտով մարդը կսիրէ:

Ս. Յօհանն Ոսկեբերան կըսէ թէ «Ով որ կուտէ եւ կխմէ եւ աշխարհքիս հեշտութեամբը կզմայլի՝ չկրնար խոնարհ եւ բեկեալ սիրտ ունենալ»: Անոր համար սուրբերը երբոր Աստուծոյ աղաչանք կրնէին իրենց հոգւոյ փրկութեան համար, կխոտանային պահք պահել, աղօթք ընել եւ զանազան կերպով մարմիննին տանջել: Պողոս առաքեալը ախորժութեամբ յանձն առնելով զամենայն վիշտ եւ զնեղութիւն վասն Քրիստոսի՝ կըսէր, «Հաճեալ եմ ընդ արկարութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալածանս եւ ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի» . (Գաղ. ԺԲ. 10): Անոնցմով նոցա հոգիները կգօրանային եւ առաջի Աստուծոյ պտղաբեր կըլլային ամենայն առաքինու-

Թեամբ. «Զի յորժամ տկարանամ, կըսէր նոյն առաքեալն, յայնժամ զօրանամ հոգւովս» :

Այսպէս պէտք է եւ ամենայն քրիստոնէից որ սրբոց վարքերուն հետեւող ըլլան, մարմնասիրութիւնը թողցնելով հոգեւոր գործքով պարապին որ Աստուծոյ հաւատարիմ ծառայ անուանին՝ եւ նորա արքայութեանը ժառանգորդ ըլլան յաւիտենական վայելչութեամբ :

ԳՂՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

Յ Ա Ղ Ա Գ Ս Ա Շ Խ Ա Ր Հ Ի .

**Ս**ուրբ Յովհաննէս Աւետարանիչը կը պատուիրէ ամենայն հաւատացելոց թէ «Մի սիրէք զաշխարհ եւ մի որ ինչ աշխարհի է» . (Ա. Յովհ. Բ. 15) . այսինքն թէ Մի սիրէք, կըսէ, զաշխարհ եւ ինչ որ աշխարհի մէջ ընդդէմ Քրիստոսաւանդ պատուիրանաց հեշտասիրութեան վայելչութիւններ կան, զոր սկըզբնաչարն սատանայն կտերմանէ աշխարհիս մէջը՝ զմարդիկ սրաւու համար :

Աշխարհասէր մարդիկ օրինակ են այսա-  
հարներու : Այսահարները եթէ արձակուին  
կիսապանաց՝ սարերը կփախչին : Այսպէս եւ  
աշխարհասէր մարդիկ՝ Աստուծոյ պատուի-  
րանքէն կփախչին, սատանայի հետ կվարուին  
աշխարհիս անապատին մէջ . եւ իբրեւ վայ-  
րենի անպտուղ ծառ՝ բարեգործութեան  
պտուղ չեն բերեր . չդիտեն թէ աշխարհս  
կանցնի եւ ցանկութիւնը կկորսուի : Ով որ  
աշխարհիս վայելչութեանը եւ մարմնաւոր  
ցանկութեանը կծառայէ՝ սատանայի իշխա-  
նութեան տակը կմնայ :

Աշխարհիս բարութիւնը՝ կզրկէ զաշ-  
խարհասէր մեծատունն իհանդերձեալ բա-  
րութեանց, եւ դժուարութեան մէջ կթո-  
ղու զանոնք որ չկրնան արքայութիւն մը ա-  
նել : Անոր համար Քրիստոս ինքը ասաց թէ  
«Դժուարաւ մտցէ մեծատունն յարքայու-  
թիւն երկնից» . (Մատթ. ԺԹ. 25) :

Աշխարհասէր մեծատունները առանց Աս-  
տուծոյ փառք տալու կըսեն թէ՝ հարուստ  
եմք, մեծացանք, բանի կարօտութիւն չու-  
նիմք . այն մեծատան նման որ ըսաւ թէ  
«Քակեմ շտեմարաններս (անպարկերս) ա-  
ւելի մեծերը շինեմ եւ հոն ժողովեմ ամե-  
նայն բարութիւնս, եւ ըսեմ իմ անձիս՝



Ա՛նձն ունիս շատ բարութիւն ժողոված շատ տարուան համար, հանգիւր, կէր, անբ եւ ուրան լեր» : Ատուած ալ ինչ ըսաւ անոր. « Ա՛նմիտ, այս գիշեր հոգիդ քեզմէն կե՛նէ, եւ ինչ որ պատրաստեր ես ս՛ւմ պիտի ըլլայ » : Այսպէս աշխարհասէր մեծատուները աշխարհիս բարութեամբ լցուելով չգիտեն թէ ինչ թշուառութեան մէջ են որ հոգեւորապէս շատ ողորմելի են. կոյր են, աղքատ են, մերկ են, եւ կարօտ ամենայն առաքինութեանց :

Աշխարհիս հետեւողները թէպէտ արտաքուստ պայծառ կերեւին մարդկանց առջեւ մարմնաւորապէս, բայց իներքուստ ունայն են եւ դառնիկ հոգեւորապէս : Այսպիսի մարդկանց վնայ կուտայ Քրիստոս ըսելով « Վնայ ձեզ մեծատանց, զի ընկալայք աստէն զմիսի թարութիւն ձեր » . (Ղուկ. Զ. 24) :

Այլ բարի մեծատուները համբերող եւ խանարհ ըլլալով՝ չեն ուրախանար աշխարհիս բարութիւններով, առանց ազատութեան գործ կղնեն իրենց փարթամութիւնն իձեռն առաքինական գործոց : Հարստութիւն կամ փարթամութիւն ունենալը՝ մեղք չէ, միայն թէ առանց մեղքի ստացուած ըլլայ, առանց գողնալու կամ ուրիշը զրկելու :

Աստուծոյ սէրը եւ աշխարհիս սէրը մէկ սրտի մէջ չեն կրնար բնակիլ. ինչպէս որ մէկ աչքով չէ կարող մարդս թէ երկինք նայի եւ թէ երկրիս :

Աշխարհիս հեշտութիւնը՝ ունի ճշմարիտ արամութիւն եւ սուտ ուրախութիւն. ստոյգ զաւ՝ եւ անստոյգ առողջութիւն, խստագոյն տանջանք՝ եւ երկիւղալի հանգիստ, մանաւանդ եւ մեծ թշուառութիւն :

Աշխարհս կաղաղակէ թէ ես պակասեցայ, սատանայն կըսէ ես կխաբեմ եւ մարմինը կվկայէ թէ ես կապականիմ : Այլ Քրիստոս Տէրն մեր կըսէ ես կնորոգեմ, ես կզարգարեմ եւ ես յաւիտենական բարութիւնը վայելելու արժանի կընեմ յերկինս : Ուրեմն դո՛ւք հաւատացեալք, ընտրեցէք, սրբ կկամենտք : Աստուած մեղաւորը կառէ եւ ապաշխարողը կսիրէ :

Ուստի մարդս Աստուծոյ սիրելի կըլլայ, երբոր իրեն մեղքը զղջայ եւ ապաշխարէ : Այս տեղը աշխարհիս մէջը միայն կարող եմք Աստուծոյ ողորմութիւնը վայելել եւ թողութեան արժանանալ. իսկ յետ մահուան՝ այն տեղը հանդերձեալ ժամանակին ո՛չ զղջալ կարող եմք, ոչ ապաշխարել եւ ոչ մէկ առաքինութիւն մը գործել, այլ

այս տեղը ինչ որ գործեցինք՝ անոնց համարը պէտք է տամք Աստուծոյ ընդհանրական դատաստանին ժամանակը :

Այն տեղը՝ Աստուծոյ ողորմութեանը պիտի չսպասեմք, այլ՝ նորա ահաւոր արդարութեանը. վասն զի արդարութեամբ պիտի դատէ զամենքը. բայց Աստուծոյ ողորմութիւնը անհուն ըլլալով՝ մեք այս տեղը կազաղակեմք սուրբ ներսէս Շնորհալիին բերնովը ամէն ժամանակ ըսելով՝ թէ « Արդարութեամբ մի դատեսցես, այլ գթութեամբ քով քաւեսցես » :



## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԳ.

ՅԱՂԱԳՍ ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑԻՑ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ  
ՎԱՍՆ ՈՒՆԱՑՆՈՒԹԵԱՆՑ ԱՇԻԱՐՉԻ :

Փրկիչն աշխարհի Տէրն մեր Յիսուս  
Քրիստոս կըսէ սուրբ Աւետարանին  
մէջը թէ « Որ գայ զինի իմ՝ ընդ-  
խաւար մի գնացէ, այլ ընկալցի  
զլոյսն կենաց » . (Յովհան. Ը. 12) : Ո՛վ  
որ, կըսէ, իմ պատուիրաններս կպահէ՝  
նա խաւար տեղ չմնար, եւ ամենայն մեղքէ  
ազատ ըլլալով՝ յաւիտենական կենաց լոյսը  
կընդունի ինձմէ :

Եթէ մեր կամենամք ճշմարտապէս լու-  
սաւորուիլ եւ ամէն կուրութենէ ազատ  
մնալ, մեր ծայրագոյն ջանքը (խայրեքը) այն  
պիտի ըլլայ որ Քրիստոսի հետեւող ըլլանք  
եւ նորա պատուիրանները պահող. վասն  
զի Քրիստոսի վարդապետութիւնը ամենայն  
սրբոց վարդապետութենէն դերագնաց է,  
ով որ նորա վարդապետութեանը կհետեւի.  
Նա միշտ երջանկութեան մէջ է հոգեւորա-  
պէս թէ այս տեղը եւ թէ այն տեղը. բայց


կան շատ մարդիկ որ ամենեւին Քրիստոսի աւետարանութեանն ու վարդապետութեանը չեն հետեւիր. այնպիսիք Քրիստոսի հոգին չունին. Քրիստոս ալ անոնց հետ հաղորդակցութիւն չունի. « Որ զհոգին Քրիստոսի ոչ ունի, կըսէ Պօղոս առաքեալը, նա չէ նորա. (Հռովմ. Ը. 9): Ի՞նչ օգուտ է քեզ մարդկանց հետ վիճաբանել Քրիստոսի Աստուածութեան համար, եթէ ինքը՝ նորա հետեւող չըլլաս, եւ խոնարհութիւն չունենաս, խօսքով միայն սուրբ եւ արդար չանուանիր մարդս, այլ ապաշխարութեամբ եւ առաքինական գործքով Աստուծոյ սիրելի եւ արդար կրնայ ըլլալ:

Եթէ բոլոր Աստուածաշունչը բերան դիտնաք եւ ամենայն փիլիսոփայական իմաստասիրութիւնը սովորէք, առանց Աստուծոյ սիրոյն եւ շնորհացը՝ մէկ օգուտ մը չբերեր. « Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է ». (Ժող. Ա. 1): Ունայնութիւն է ուրեմն կորստական փարթամութիւն խնդրել, եւ անոր վրայ յոյս դնել. ունայնութիւնն է պատուոյ ետեւէ ընկնիլ եւ բարձրագոյն աստիճաններու ցանկալ. ունայնութեանն մարմնաւոր ցանկութեանը հետեւիլ. ունայնութիւնն է եր-

կար կեանք խնդրել, ներկային յուսալ եւ  
ապառնիին սպասել. ունայնութիւն է այն  
բանը սիրել որ շուտ կանցնի, եւ չխնդրելը  
զայն որ մշանջենաւոր է: Յիշէ այն առակը  
միշտ թէ « ոչ յագին աչք իտեսութենէ,  
եւ ոչ լնանին լսելիք իլրոյ »: Ջանք ըրէ ու-  
րեմն անցաւոր սէրը դուրս ձգել սրաիգ-  
մէջէն, եւ աներեւոյթ անանցանելին ժո-  
ղովել. քանզի իրենց զգայութեանց հետե-  
ւողները խղճմտանքը կխաւարցնեն եւ Աս-  
տուծոյ շնորհքը կկորուսանեն:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԳ.

ՅԱՂԱԳՍ ԻՆԲՆԱՀԱԻԱՆՈՒԹԵԱՆ.

 Ամենայն մարդ բնականապէս կցանկայ  
ամէն բան գիտնալ. բայց գիտու-  
թիւնը առանց երկիւղի Աստուծոյ  
ոչինչ է. « Սկիզբն իմաստութեան  
երկիւղ Տեառն է ». (Առակ Ա. 1): Ճըշ-  
մարիտն ասեմ, գուեհիկ խոնարհ մարդը  
շատ բարի եւ գիտուն կհամարուի որ Աս-  
տուծոյ ջերմեռանդութեամբ կծառայէ:

բայց ինքնահաւան եւ հպարտ փիլիսոսիայն՝  
շատ վատ եւ անգէտ է, որ Աստուծմէ եր-  
կիւղ չունենալով՝ հոգեւոր գործը զանց  
կառնէ, երկինքի ընթացքը կնկատէ :

Գիտունները յօժարութեամբ կկամենան  
շատ բան տեսնել եւ իմաստուն անուանիլ .  
շատ մարդիկ ալ կան որոնց գիտութիւննե-  
րը շատ քիչ են որ ամենեւին հոգւոյ օգուտ  
չունին . այնպէսները շատ անմիտ են որ ու-  
րիշին դատարկ բաները աւելի գիտնալ կը-  
ցանկան՝ քան թէ իրենց հոգւոյ օգուտը :

Շատ խօսքերով հոգինիս չկշտանար, այլ  
բարի կեանքով կըօրանայ . միտքերնիս ալ  
կըտվանայ . եւ մաքուր խղճմտանքը մեզի  
մեծ յոյս կուտայ առ Աստուած :

Որքան աւելի գիտես՝ այնքան ծանրա-  
պէս պէտք է դատուիս . եթէ սրբութեամբ  
չկենաս՝ մի հպարտանար ունեցած արհես-  
տովդ եւ կամ գիտութեամբ . այլ մանա-  
ւանդ երկիւղ կրէ որ եթէ շատ ծանօթու-  
թիւնները առանց Աստուծոյ երկիւղին գիտ-  
ցար :

Եթէ կարծիք կընես դու թէ շատ բան  
գիտես եւ շատ բան կիմանաս, լնա գիտցիր  
որ դեռ շատ բան կայ որ դու չես գիտեր .  
մի բարձրամտիր, այլ քու տգիտութիւնդ

խոստովանէ : Ինչո՞ւ կուզես քեզ առաջ ձգել , որովհետեւ քեզմէն աւելի շատ գիտուններ կան . եթէ քեզի օգուտ կուզես՝ մէկ բան չգիտնալդ սիրէ՛ , եւ փափաքէ զքեզ ոչինչ համարիլ :

Ահա այս է ամենայն մարդու իրեն ճըշմարիտ ճանաչումը . այսինքն զինքը ոչինչ համարիլը եւ ուրիշին միշտ բարի կամենալը :

Եթէ կատանես մէկը որ յայտնապէս մեղքի մէջ ընկաւ , խրատէ առանց խայտառակելու , ինքզ զքեզ աւելի եւ անարժան մեղաւոր համարելով Աստուծոյ առջեւ , եւ դու մի այնպէս համարիր թէ ուրիշը քան զքեզ յանցաւոր է եւ տկար առաջի Աստուծոյ :





## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԳ.

ՅԱՂԱԳՄ ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՅՈՒՍՈՑ.

Յիմար է այն մարդը որ մարդու վրայ յոյսը կդնէ, ընդդէմ Դաւթի ԱստուածաՏօր մարգարէին պատուիրանաց որ կըսէ, «Մի յուսայք յիշխանս եւ մի յորդիս մարդկան», (Սաղմ. ձԻԵ. 2): Ամօթ, թող չտուի քեզ ուրիշի ծառայել իսէրն Քրիստոսի. կամ իբրեւ աղքատ երեւալ աշխարհի մէջ. քու անձիդ մի սպաւինիր. յոյսդ առ Աստուած դիր. արա միայն ինչ որ քեզ կպատկանի հոգեւորապէս. ամենաբարին Աստուած քու բարեհաճութեանդ օգնական կըլլայ. քու գիտութեանդ մի յուսար. եւ ուրիշ մարդկանց խորամանկութեանը մի հաւատար, չլինի թէ խաբուիս. Աստուծոյ շնորհքը միայն խնդրէ դու, որ ամենայն հեղոց եւ խոնարհաց օգնական է միշտ:

Կայքովդ եւս չպարծենաս եթէ շատ ունիս. բարեկամով ալ նոյնպէս չխնդաս եթէ հզօր են (ուժով են). այլ Աստուծով մի-


այն պարծիր որ զամէն հարկաւորները նա է տուողը: Մի հպարտանար եթէ մեծ ես կամ եթէ մարմնոյ գեղեցկութիւն ունիս որ փոքր տկարութիւն եթէ պատահի պէտք է ապականի եւ ժահահոտի. չիտաս եւս ինքնահաւանութեան տեղիք, եթէ խելօք ես եւ մտացի. մի գուցէ Աստուծոյ հաճոյ չըլլաս:

Մի կարծեր զքեզ ուրիշներէն բարի կամ խոհեմ. վասն զի Աստուած գիտէ քաջապէս ինչ որ կայ մարդու սրտին մէջը. մի հըպարտանար բարի գործոց համար. վասն զի այլ է Աստուծոյ դատաստանը եւ այլ է մարդկան. եթէ ունիս դու մէկ բարի գործ մը հաւասան թէ ուրիշները տահա բարիները ունին, եւ խոնարհութիւն ունեցիր. ոչինչ է վնաս եթէ ամենուն առջեւը խոնարհ կենաս. բայց մեծ վնաս է եթէ մէկ բարեգործութեանդ վրայ հպարտանաս. վասն զի խաղաղութիւնը միշտ խոնարհաց մէջ կմնայ. իսկ նախանձը եւ վրդովը հըպարտաներու սրտին մէջը:



Գ Լ ՈՒ Խ ԺԱ.

ՅԱՂԱԳՍ ՀԱՄԲԵՐԵԼՈՅ ՓՈՐՁՈՒԹԵԱՆՑ.



Որքան այս տեղը աշխարհի մէջ եմք՝  
առանց նեղութեան եւ փորձի չեմք  
կրնար մնալ. ուստի Յօբ երանելին  
կրտէ, «Փորձութիւն է կեանք մար-  
դոյ ի վերայ երկրի». (Յօբ. է. 1):  
Պարտական եմք ամէն մէկս հօգալ փորձու-  
թեանց համար եւ արթուն կենալ աղօթքով  
որ չկարողանայ խաբել զմեզ սատանայն որ



միշտ անքուն է ըստ Առաքելոյն . « Շրջի նա  
խնդրելով թէ զո՞ կլանիցէ » . (Ա. Պես. Ե. 8) :

Չկայ այնպէս կատարեալ մարդ եւ այն-  
քան սուրբ որ չունենայ երբեմն փորձու-  
թիւն . բոլորովին փորձութենէ ազատ մնալ  
չեմք կրնար . բայց երբեմն փորձութիւնը  
մարդուս օգտակար է . թէ եւ կվշտացնէ՝  
այլ մարդս փորձութեան մէջ կխօնարհի  
կվարժուի եւ կմաքրուի :

Սուրբերը ամէնն ալ նեղութեամբ եւ  
փորձութեամբ ապրեցան եւ համբերելով  
շատ օգուտ ստացան . եւ որոնք որ չկրցան  
համբերել փորձութեանց , փուճ դարձան  
եւ անշխտանացան բոլորովին :

Մէկ տեղ մը չգտնուիր այնպէս կրօն , եւ  
ոչ մէկ տեղ մը այնքան առանձին որ այն  
տեղը փորձութիւն կամ պատերազմ չըլլայ :

Մարդս չկրնար ամենեւին իրեն կեանքին  
մէջը փորձութենէն ազատ մնալ . քանի որ  
ցանկութեան մէջ կփորձուիմք , վասն զի  
երբ մէկ փորձութիւնը կհեռանայ՝ մէկալը  
վրայ կուգայ , որովհետեւ առաջին երջանկու-  
թեան բարութիւնները կորուսինք . շատ  
մարդիկ կկամենան փորձութենէն փախչիլ ,  
բայց շատ աւելի կմնան փորձութեան մէջ .  
չեմք կրնար ամենեւին փորձութեան յաղ-

Թեւ փախչելով, այլ համբերութեամբ եւ  
խոնարհութեամբ կարելի է. սակաւ սակաւ  
համբերութեամբ եւ Աստուծոյ օգնութեամբ  
շատ դիւրաւ կ'յաղթեմք փորձութեան քան  
թէ խստութեամբ:

Շատ անգամ խորհուրդ խնդրէ փորձու-  
թեան մէջ փորձուողներէն եւ անոնց հետ  
խստութեամբ մի վարուիր այլ մի թիթարէ.  
Ընչպէս դուն ալ կ'կամենաս որ ուրիշները  
քեզի ընեն:

Ամէն չար փորձութեանց սկիզբը մտաց  
անհաստատութիւնն է եւ յուսոյ պակասու-  
թիւնը. ընչպէս առանց ղեկի նաւը ծովու  
ալիքէն այս կողմը եւ այն կողմը կ'զարնուի.  
այսպէս անարի եւ վախկոտ մարդը եւ իրեն  
գործի փոյթ շունեցոյր կերպ կերպ կ'փոր-  
ձուի. կրակը երկաթը կ'փորձէ, եւ փորձու-  
թիւնը արդար մարդը:

Շատ անգամ չգիտեմք թէ ինչ եմք մեր.  
բայց փորձութիւնը կ'ցուցնէ մեզի թէ ինչ  
եմք, այլ զգուշ կենալ պէտք է մեզի որ  
մեր թշնամոյն սատանայի թոյլ չտամք  
մեզի մօտենալ եւ շուտով դիմաց ելնեմք  
անոր երբոր նա մեր մտաց դուռը կ'զարնէ.  
Եթէ զգուշ չկենամք մեք շատ հեշտ հը-  
նարներ կ'ունենայ, առաջ կ'հանդիպի մեզի

մտածութիւն, ապա սաստիկ երեւակայութիւն յետոյ հեշտութիւն եւ հաւանութիւն. եւ այսպէս քիչ քիչ կմանէ վնասակար թշնամին մեր մէջը, եթէ սկիզբը նորա ընդդէմ չելլեմք:

Մարդս որքան ծուլանայ հոգեւոր պաշտօնի մէջ օր ըստ օրէ կակարանայ, եւ հակառակօղ թշնամին կղօրանայ. բայց պէտք է մեզի յուսահատիլ. այլ ջերմեռանդութեամբ աղաչանք ընեմք Աստուծոյ որ նա ամենայն նեղութեան եւ փորձութեան ժամանակը օգնութիւն ընէ մեզի. ինչպէս առաքեալը կըսէ. «Տայ ընդ փորձութեանն եւ զշնորհ: զի կարիցուք տանիլ» (Ա. Կորնթ. ժ. 15): Ուղղեմք ուրեմն մեր միտքը առ Աստուած ամենայն փորձութեան եւ նեղութեան մէջ եւ հոգւով խոնարհ ըլլամք Աստուծով կբարձրանամք. «Չխոնարհս հոգւով կեցուցանէ եւ բարձրացուցանէ: (Սաղմ. 19):



Գ Լ Ո Ւ Թ Ժ Բ .

ՅԱՂԱԳՍ ԱՌԱՆՁՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԼՈՒՊԱՀՈՒԹԵԱՆ .

Խնդրէ քեզ համար պարագ ժամանակ  
եւ միշտ Աստուծոյ անհուն բարերա-  
րութիւնը մտածէ . անօգուտ խօ-  
սակցութիւններէ հեռու կեցիր : Եթէ  
աւելորդ խօսքերէ եւ դատարկաբա-  
նութենէ ետ կենաս եւ չսիրես նոր լու-  
րեր եւ նոր համբաւներ լսել , բաւական եւ  
պատճառ ժամանակ կգտնես քեզ համար  
բարի խորհուրդներ մտածելու :

Գերազանց սուրբերը որքան կարողանայ-  
ին մարդկան ընկերակցութենէն կհրաժա-  
րէին եւ առանձնական պաշտօնի կցանկային :  
Ասաց իմաստունին մէկը թէ որքան շատ  
մարդկանց մէջ գտնուեցայ , այնքան փոքր  
մարդ անուանեցայ : Այս մեք շատ անգամ  
կտեսնեմք մեր մէջը երբոր քանի մի ժամ  
դատարկաբանութիւն կընեմք . շատ լաւ  
է բոլորովին լռել քան թէ խօսիլ , եւ  
լաւ է մէկ մարդ տան մէջ կենայ առանձին  
քան թէ գուրսը ուրիշներու հետ դատար-

կարանութիւն ընէ. ուրեմն ով որ կցանկայ  
հոգեւոր գործոց հետեւիլ պէտք է աւելոր-  
դարան մարդէ հեռու կենալ :

Մէկ մարդ մը չկրնար ամենեւին զինքը  
անմեղ պահել եթէ առանձին չկենայ եւ  
Աստուծմէ երկիւղ չունենայ : Սրբոց անմե-  
ղութիւնը կճնանէր միշտ Աստուծոյ երկիւ-  
ղիւ, անոր համար նոքա ամենեւին ոչ աշ-  
խատութենէն թուլացան եւ ոչ խոնարհու-  
թենէն նուազեցան, վասն զի ամենայն առա-  
քինութեամբ եւ Աստուծոյ շնորհօք զարդա-  
րուած էին. իսկ վատ մարդկանց անմեղու-  
թիւնը կճնանի հոյարատութենէն եւ սնա-  
պարծութենէն, չգիտեն անոնք որ վերջը  
կխարուին, ուրեմն ամենեւին անմեղ մի  
ճանաչեր զքեզ այս աշխարհի մէջ թէեւ  
բարեպաշտ կամ առաքինի մարդ մը ըլլաս.  
շատ մարդիկ որոնք որ մարդկանց վկայու-  
թեամբը զիրենք բարի եւ անմեղ կկարծեն,  
ծանրապէս կմեղանչեն անոնք : Երանի էր  
թէ մարդս անցաւոր միսիթարութիւն չը-  
վնատեր եւ աշխարհի իրաց զբաղմունքով  
չպարապէր եւ միայն յաւիտեանական կեան-  
քը մտածէր. այլ եւ իրեն ամենայն յոյսը առ  
Աստուած դնէր որքան մեծ խաղաղութիւն  
եւ հանգարտութիւն պէտք էր ընդունէր :



Արժանի չէ նա ամենեւին երկնային մխիթարութեան, եթէ չկրթէ զինքն առաքինութեամբ եւ ամենայն բարեպաշտութեամբ. եթէ կկամենաս ուղիղ սրտով ապաշխարել. մտիր քու սենեակը եւ դուրս արա քեզմէն աշխարհային ամենայն վրդովմունքը եւ ցանկութիւնը, ինչպէս Քրիստոս կպատուիրէ. «Մուտ իսենեակ քո եւ փակեա զդուրս եւ կաց յաղօթս» . (Մատթ. 23. 6) : Այն ատենը քու սենեկիդ մէջէն կզանես ինչ որ դուրսը կորուսիր : Մարդս որքան աշխարհային վրդովմունքներէն հեռանայ, այնքան Աստուծոյ կմօտենայ եւ կընտելանայ նորա հետ :

«Անցանէ աշխարհ եւ ցանկութիւն նորա» . (Ա. Յովն. Բ. 17) : Այսինքն թէ աշխարհս կանցնի եւ նորա ցանկութիւնը հետը կերթայ. զգայականութեան յօծարութիւնը կբարշէ թէպէտ զմարդն զբոսնուլ, բայց երբոր ըզձի ժամանակը անցնի՝ խղճմտանքը կծանրանայ եւ սրտի ցանկութիւնը կցրուի բոլորովին. շատ կպատահի որ մարդս խնդալով դուրս կուգայ անէն, դարձած ժամանակը ախրութիւն կճնանի եւ երեկոյի զուարճ հսկումը արտմալից առաւօտ կբերէ : Այսպէս ամենայն մարմնական խնդութիւն

Համոզելով կմանէ մարդուս սրտին մէջը, բայց վերջը կխայթէ եւ կսպաննէ չարաչար։

Շատ մարդիկ ալ կցանկան աշխարհի ցանկութիւնով ղիրենք յագեցնել (կշտացնել) բայց չեն կրնար. վասն զի շատ բաներ կայ կտեսնեն եւ կվայելեն. այլ ինչ օգուտ, վախճանը ունայն է. ուրեմն ամենայն մարդ Աստուծոյ թող աղաչէ իրենց մեղաց Համար սնտոի եւ ունայն բաները թողցնելով ա-կանճ դնէ թող անոր ինչ որ Հրամայեց Աստուած Նսայի մարգարէին բերնով թէ. «Փակեան զգուռն քո առաջի երեսաց քոց եւ մուտ իշտեմարանս քո փախիր եւ թագիր առ ժամանակ մինչչեւ անցցէ բարկութիւն Տեառն» . (Նսայի. ԻԶ. 20)։ Այսինքն թէ երբոր մեղանչեցիր կըսէ մտիր քու սենեակը կամ շտեմարանդ փակէ դուռդ սկսէ մեղացդ թողութիւն խնդրել. մի դուրս դար կըսէ անէդ մինչեւ Աստուծոյ բարկութիւնը անցնի։ Այսպէս առանձին կենալով որ Աստուծոյ աղաչեն քրիստոնեայք կրնան այն ատենը խաղաղութեամբ եւ անմեղ մնալ միշտ այս անցաւոր աշխարհի մէջ իրաւուս Աստուծոյ։



Գ Լ Ո Ի Խ Ժ Գ .

ՅԱՂԱԳՍ ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՐԳԿԱՅԻՆ ԿԵՆԱՅ .

Ուր տեղ որ ըլլաս եւ ուր որ գնաս  
ողորմելի ես, եթէ զքեզ առ Աստուած  
չդարձընես եւ վարքդ չուղղես . ին-  
չո՞ւ կվրդօվիս երբոր չես յաջողիր,  
ինչ կկամենաս եւ ինչ բանի կցան-  
կաս . ո՞վ է աշխարհիս մէջը որ իրեն ուզա-  
ծին պէս ամենայն ինչ ունեցեր է . ոչ ես, ոչ  
դու եւ ոչ մէկ ուրիշ մարդ մը :

Եղած չէ աշխարհիս մէջը այնպէս մարդ  
որ վիշտ կամ նեղութիւն չունենայ, թէեւ  
թագաւոր ըլլայ կամ քահանայ եւ կամ  
իշխան : Այն մարդը բարեբաղդ կհամարուի  
որն որ Աստուծոյ համար փորձութեանց  
կհամբերէ : Շատ տկարներ եւ աղքատներ  
նայելով առողջներուն կամ հարուսաներուն  
վրան կըսեն՝ թէ Ահա այս ինչ մարդը ինչ-  
պէս բարի կեանք ունի, որքան առողջ է,  
որքան փարթամ, որքան մեծատուն, որքան  
կարող եւ որքան գերազանց է . բայց չեն  
մտածեր թէ այն ամենայն բարութիւնները  
եւ բարեբաղդութիւնը ամէնն ալ ժամանա-

կաւոր ըլլալով ոչինչ են . այլ եւ սուտ են եւ աւելի վշտացնող . վասն զի առանց վրդովման եւ երկիրին Աստուծոյ չեն սաացուիր :

Երջանկութիւն չէ այն մարդուն առատապէս ունենալ ժամանակաւոր վայելչութիւնը . այլ բաւական է եթէ ունենայ միայն այնչափը աւելի մեծագոյն թշուառութենէն . վասն զի մեր հոգիները կծանրանան մարմնական զբաղմունքներով : Ուստի եւ մարգարէն առնոցմէն ազատելու համար՝ աղօթք կրնէր աղաղակելով առ Աստուած . « Ենեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն յոյժ , եւ իվշտաց իմոց հան զիս » . (Սաղմ. ԽԶ. 17) : Վայ անոնց որոնք որ իրենց թշուառութիւնը չեն ճանչնար . եւ աւելի վայ անոնց որք ապականացու եւ ողորմելի կեանքը կսիրեն . վասն զի անոնք այնպէս սիրահարուած են աշխարհքիս հետ որ հազիւ թէ կարողանան հոգալ իրենց ապրուստը աշխատանքով կամ ուրիշի ողորմութեամբ . եւ որք եթէ կրնային այս տեղը մշանջեանաւորապէս ապրիլ՝ ախորժութեամբ կյօժարէին , եւ արքայութեան մէջի յաւիտենական վայելչութեան համար ամենեւին փոյթ չէին ունենար : Շատ եղկելի են անոնք , վերջը պիտի իմանան այնպէսները իրենց թշ-

շուառութիւնը . իսկ սուրբերը եւ ամենայն առաքինի մարդիկ որ Քրիստոսի բարեկամներն են, ամենեւին չսիրեցին աշխարհիս մարմնաւոր վայելչութիւնքը, այլ ամենայն յուսով եւ սիրով զհետ գնացին մշտնջենաւոր բարութեանց :

Ուրեմն, սիրելի եղբարք, քանի որ ժամ եւ ժամանակ ունիք հողեւոր դործքերնէ դմի թուլանաք : Ինչմէլ այսօրուան բանը վաղուան կձգէք : Ժրացարսւք եւ սկսեցէք ըսել . « Ահա ժամանակ առնելոյ, ահա ժամանակ ընդունելոյ » . (Բ Կորնթ. 2, 2) : Եւ եթէ նեղութեան մէջ ըլլաք այս տեղը՝ ահա ժամանակ է արդիւնաւորելու, պէտք է ընդ հուր եւ ընդ ջուր անցանել . եթէ չաշխատիք, չէք կրնար վատթարութեանը յաղթել :


Որքան այս տկար մարմնոյ մէջ եմք, չեմք կրնար առանց մեղաց ապրիլ . թշուառութեան մէջ եմք անդորրութիւն կուզեմք, չեմք մտածեր թէ կորուսեր եմք մեր անմեղութիւնը եւ մեր ճշմարիտ երջանկութիւնը : Վասն որոյ պարտաւոր եմք համբերութեամբ Աստուծոյ ողորմութեանը սպասել մինչեւ այս անօրէնութիւնները անցնի եւ այս մահկանացութիւնն ջնջուի իկենաց » . ( Սաղմ. ԺԶ. 2 : Ա. Կորնթ. Է. 4 ) :

Ափսոս, սրբան մեծ է մարդկային տկարութիւնը որ միշտ խլատթարութիւն կդիմէ: Այսօր կխոստովանուի մեղքերը, վաղը դարձեալ կգործէ խոստովանածը: Այժմ կյառաջագրէ որ զգոյշ կենայ, մէկ ժամէն ետքը դարձեալ կնորոգէ չարութիւնը՝ որպէս թէ ոչինչ էր յառաջագրած: Այս ինչ կենցաղավարութիւն է որ մեք ունիմք, եւ այսպէսով կկարծեմք որպէս թէ խաղաղութեան մեջ եմք եւ անմեղութեան վիճակի մէջ կապրիմք, մեք որ ամենեւին սրբութեան նանապարհ ունեցած չեմք. շատ բարի էր եթէ նորավարժներու նման կրթութուէինք եւ բարի վարքով կենալ սովրենայինք, որ մեր երկնաւոր Հայրը անտես չառնէր զմեզ եւ չմերժէր իրեն արքայութենէն եւ մեր յաւիտենական վայելչութենէն:



Գ Լ Ո Ի Խ Ժ Գ .

ՅԱՂԱԳՍ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԱՐԳԱՅԻՆ ԿԵՆԱՅ .



Առաջինը մտածէ թէ սրբան թշուառ  
եւ եղկելի է մարգուս կեանքը կար-  
ճութեանն համար . վասն զի կեանքի  
երկարութիւնը աւելի չէ քան զ80  
տարի . անկէց ալ եթէ քանի մի տա-  
րի աւելի ապրիս , այնքանն ալ ցաւօք եւ  
հեծութեամբ պէտք է ըլլայ , Դաւթի մար-  
գարէին վկայութեամբը . « Թիւք աւուրց  
ամաց մերոց եօթանասուն ամ . ապա թէ  
առաւել եւս՝ ութսուն ամ , եւ որ ինչ աւելի  
է քան զայն՝ ցաւօք եւ հեծութեամբ » . (Սաղմ.  
2թ. 8) : Տես թէ սրբան կմոլորին անոնք ,  
որոնք որ այս աշխարհիս կարճ կեանքը  
վայելելու համար յաւիտենական անվերջա-  
նալի կեանքը եւ երանութիւնը կկորսընեն :

Երկրորդ՝ տես թէ սրբան անհաւատալի  
է մարգոյս կեանքը . շատ քիչեր կան որ եօ-  
թանասուն կամ ութսուն տարի ապրին .  
ուրիշ շատերն ալ գեռահասակութեան ժա-  
մանակին կմեռնին ծաղկի նման թողմելով .  
« Ոչ գիտէք կըսէ Քրիստոս , թէ երբ Տէր

տանն գայցէ, յերեկորեայ, եթէ իմէջ գիշերի, եթէ իհաւախօսի եւ եթէ ընդ առաւօտն. (Մարկ. ԺԳ. 35):

Երրորդ՝ չկայ այնպէս անօթ (աման) որ մարդոյս կեանքէն բարակ եւ խախտւա ըլլայ: Ամանը սուր տեղ որ կուզես՝ գիրք, եթէ մարդու ձեռք չհասնի անոր՝ հազար տարիէն աւելի ամբողջ կմնայ. բայց գիրք զքեզ ուր տեղ որ կամենաս. բնակէ այն տեղը եւ ունեցիր քեզ համար շատ գանձ, ինչպէս ալ ուրախութիւն վայելես, մահը քեզ համար պատրաստ է, որ քու կեանքդ պէտք է վերցնէ մէկ օր մը:

Չորրորդ՝ տես թէ սրբան փոփոխական է մարդոյս կեանքը որ ամենեւին մի եւ նոյն կացութեան մէջ չմնար. այլ ծովու նման տատանեալ կայ միշտ. ոչ այլ ինչ է մեր կեանքը, եթէ ոչ մէկ ճրագի նման բան մը. ճրագը սրբան աւելի վառի եւ ճտուագայթը շատնայ, այնքան շուտով կպակասի. այսպէս մարդն ալ սրբան աւելի ապրի, այնքան շուտով ծաղկի նման կվերջանայ. ինչպէս ծաղիկը առաւօտուն կբուսանի, կէս օրին կթռամի, երեկոյին կչորանայ: Անոր համար Աստուած Եսայի մարգարէին բերնովը կըսէ. «Ամենայն մարմին խոտ է եւ ամենայն փառք



նորա իբրեւ զԾաղիկ խոտոյ . ցամաքեցաւ խոտն եւ թօթափեցաւ ծաղիկն նորա» . (Եսայի . Խ . 6) :

Հինգերորդ՝ տես թէ սրբան խաբող է այս կեանքը . վասն զի ինքը տգեղ ըլլալով՝ մեղի գեղեցիկ կերեւայ , դառն է ինքը՝ մեղի քաղցր կերեւայ , խիստ կարճ է՝ երկար կթուի մեղ համար , եւ ատելի է խիստ , բայց մեղ սիրելի կհամարուի :

Վեցերորդ՝ մտածէ թէ այս քիչ եւ կարճ կեանքը սրբան լի է թշուառութեամբ . կատնես աշխարհիս քակտումը եւ թշուառութիւնը՝ թագաւորութիւնները ինչպէս կկործանուին . եւ ոմանք ալ ինչպէս թըշնամիներու ձեռք կընկնին : Մէկ տեղ հարսնիք կընեն , ուրիշ տեղ սուգ կպահեն . այս տեղը — զոր օրինակ — մէկը կծնանի . այն տեղը միւսը կմեռնի :

Այլ եւ ոմանք հարուստ են եւ ոմանք աղքատ մուրալով կքալեն . այսպէս մոլորական են մարդիկ եւ մոլորեալ կշրջին . քիչ ժամանակէն ետքը ոչինչ պիտի դառնան : Այս ամէն թշուառութենէն ետքը կհետեւի վերջի թշուառութիւնը , որ է մահը . տես թէ սրբան թշուառական է եւ կարճ այս կեանքը . եւ որքան քիչ եւ փոքր է այն որ

աշխարհ կխոստանայ տալ մարդոյս. տեսնօք  
արդեօք որքան կոյր են աշխարհասէր մար-  
դիկ որ այսքան խախուտ անցաւոր աշխար-  
հի մէջ մնալ կուզեն այն յիմարին նման,  
որ իւր տան հիմը փոխանակ քարի վրայ  
շինելու, աւազոյ վրայ կգնէ, որոյ կործա-  
նումը խիստ շուտ կըլլայ. (Մատթ. է. 27):



### Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե.

Յ Ա Ղ Ա Գ Ս Ծ Ո Ւ Լ Ո Ւ Ք Ե Ա Ն.



Մուլութիւնը մահացու մեղքերուն մէկն  
է. որին վրայ որ թագաւորէ՝ չթո-  
ղուր անոր աշխատել. վասն զի եթէ  
գործ մը սկսելու ըլլայ, կարգիլէ եւ  
կամ սկսածը վերջացընել չտար, այլ  
անկատար կթողցընէ:

Մուլութիւնը երկու կերպ կըլլայ, մէկը  
մարմնաւոր եւ միւսը հոգեւոր: Մարմ-  
նաւոր ծոյլը շարունակ ամէն օր չկրնար  
իրեն ծուլութիւնը պաշտել, որովհետեւ  
աշխատութեամբ պիտի գտնէ իւր ապրուս-  
տը. վասն որոյ կամ իրեն որովայնին համար

եւ կամ ընտանեացը բռնադատութենէն  
քիչ աւելայ՝ կաշխատի իրեն օրերը անցու-  
նելու համար, եւ այն՝ շատ աւամայ. եթէ  
գործելէն ձանձրանայ, մուրացկանութիւն  
կընէ սլատառ մը հացի համար :

Հոգեւոր ծոյլն ալ չկամենար ամենեւին  
հոգւոյն համար աշխատիլ բարեգործու-  
թեամբ, որովհետեւ բռնութիւն չկայ իրեն  
հոգւոյն՝ անխնամ մնացածը չիմանար. անոր  
համար բարին գործելու չսկսեր կամ սկսածը  
չկրնար վերջացնել. անկատար կթողու :

Մոյլը կնամնի նախ՝ քուն մարդու, ինչ-  
պէս քուն եղողը կթուլանայ ամենայն զգայա-  
բանքներով, այսպէս ծոյլն ալ (քեւպէրութեան)  
քնով կուշանայ, թուլանալով չկրնար առա-  
քինութիւն գործել: Երկրորդ՝ օրինակ է  
ծոյլը յիմար կուսանաց. յիմար կուսանքը  
ինչպէս ծուլութեան քնով մնացին հետերը  
իւզ չառին իրենց լապտերին համար, որ  
իմաստուն կուսանաց նման Քրիստոսի առ-  
ջեւը ելնէին, անպատրաստ գանուեցան  
գալտեան անմահ փեսային Քրիստոսի ի-  
րենց խաւար լապտերներովը. ուստի եւ  
զրկուեցան Քրիստոսի սուրբ անտութենէն :

Ուրեմն չէ պարտ քրիստոսնէին զծուլու-  
թիւնը սիրել որ բարեգործութենէն չձան-

ձրանայ . վասն զի ծուլութենէն կիսափանին  
ամենայն առաքինութիւնները եւ բարեգոր-  
ծութիւնները :

Անվայելուչ է քրիստոնէին արեգական  
ճառագայթը անկողինին մէջը խնդրել ծու-  
լութեամբ . չունիմք այս տեղը այնպէս քա-  
ղաք որ մեք անոր մէջը մնամք , այլ հան-  
դերձեալը խնդրեմք առանց ծուլութեան  
որ այն տեղը պիտի մնամք . « Յաւիտեանս  
յաւիտենից փութասցուք , կրսէ Պօղոս ա-  
ռաքեալը , այսուհետեւ մտանել յայն հան-  
գիսան » :

Հոգին բարեաց ամենայն առաքինու-  
թեամբ կաճի , իսկ հոգին չարեաց եւ ծու-  
լից կնուազի ամենայն չարագործութեամբ :

Երբորդ՝ ծոյլը կհամեմատի անապատ եր-  
կրի որ այն տեղը չեն սերմաներ . փուշերը  
գազանները եւ սողունքները կբազմանան :  
Այնպէս ծոյլին ալ չարութիւնները կշատա-  
նան , տներու մէջ անապատի նման փուշ  
կբուսանին :

Ծոյլը թող մըջումէն օրինակ առնու . որ  
նա ինչպէս ժիր է , բոլոր ամառը աշխատու-  
թեան մէջ է , ձմեռուան համար կերակուր  
կպատրաստէ : Սողմոն իմաստունը յան-  
դիմանելով կրսէ ծոյլին . « երթ առ մըջիւն

ով վատ, եւ նախանձեաց ընդ ճանապարհս նորա» . (Առակ. 2. 6) : Բայց ծոյլը ամենեւին հոգս չունի իրեն հոգւոյն համար կերակուր պատրաստել բարեգործութեամբ այս աշխարհիս մէջ՝ որ ամառուան օրինակ է, հանդերձեալ կենաց համար՝ որ ձմեռուան օրինակ է :

Չորրորդ՝ ծոյլը կնամանի քնարեր օձի որ կճած ժամանակը մարդու քուն կբերէ եւ կսպաննէ . ծոյլը օրինակ թող առնու ժրագլուխ կնոջէն, որուն համար Սողոմոն կըսէ թէ « Զհաց դատարկութեան ոչ եկեր » . (Առակ. 1Ա. 27) :

Ծոյլին ամենայն ճանապարհը փակուած է, որ չաշխատելով՝ աղքատութեան մէջ կմնայ եւ կչքաւորի . ինչպէս այս սեղը աղքատութիւն կբաշէ, այնպէս ալ հանդերձեալ կենաց մէջ յաւիտենական բարեաց կկարօտանայ :

Հինգերորդ՝ ծոյլը օրինակ է հեթանոսաց կուռքերուն . կուռքը ինչպէս աչք ունի՝ չտեսներ, ականջ ունի՝ չլսեր, եւ ամենայն զգայարանքները եւ անդամները ունի, բայց գործի չեն եւ չեն շարժիր, այնպէս ծոյլն ալ թէպէտ կատարեալ բանական մարդ է՝ բայց ոչ աչքովը բարին

կտեսնէ, ոչ ականջովը հոգեւոր խօսքեր կլսէ; եւ ոչ մէկ ուրիշ զգայարանքներով եւ անդամներով կրնայ բարեգործութիւն ընել որ առաքինի մարդ ըլլայ եւ Աստուծոյ սիրելի անուանի:

Ապա պէտք է ամենայն մարդ ոչ մարմնաւորապէս ծուլանայ, որ երկրի բարութենէն կարօտ չմնայ. եւ ոչ հոգեւորապէս ծուլութիւն ընէ; որ յաւիտենական երկնային ժառանգութենէն չզրկուի:



## Գ Լ Ո Խ Խ Ի Զ.

Յ Ա Ղ Ա Գ Ս Ք Ն Ո Յ.

Քունը մահու պատկեր է եւ ծուլութենէն կճնանի շատ քնանալը. անոր համար Սողոմոն իմաստունը կպատուիրէ; «Մի տար քուն աչաց քոց եւ մի նիրհումն արտեւանաց, զի ասորեսցիս իբրեւ այծեամն իհազրից եւ իբրեւ զհաւ յորոգայթից». (Առակ. Զ. 5):

Գարշելի է քնանալը եթէ քնելու ժամանակը չէ; այսինքն աղօթքի ժամանակ;

սուրբ Գրոց կարգացմունքի ատեն արթուն  
կենալ հարկաւոր է, ինչպէս Պետրոս առա-  
քեալը կպատուիրէ. «Զգատտացարուք եւ  
եղերուք զուարթունք յաղօթս». (Ա. Պետր.  
Գ. 7):

Իտրձեալ առաւօտու ժամանակը պէտք  
չէ քնել շան նման, ինչպէս նոքա գիշերը  
հասցելով արթուն կկենան առաւօտուն կքնեն:  
Քրիստոնեան պէտք չէ որ գիշերը թղթով  
կամ ուրախութեամբ պարտալի ու առա-  
ւօտուն քուն ըլլայ. վասն զի առաւօտուն  
խիտ օգտակար ժամանակ է, որ եթէ  
քրիստոնեայն այն ատենը աղօթքի կանգնի  
եւ Աստուծոյ փառաբանութիւն տայ՝ ան-  
տարակոյս թող գիտնայ այն աղօթողը թէ  
ինչ հեղեւոր բարիք որ խնդրէ, անխափան  
պէտք է առնու. «Զոր ինչ եւ խնդրիցէք,  
կըսէ Քրիստոս Տէրն մեր, յաղօթս՝ հաւատով  
առնուցուք». (Մատ. ԻԱ. 22)։ Մանաւանդ ե-  
թէ գիշերի մէջ զարթի եւ սուրբ գրոց  
կարգացմունքով աշխատի. ինչպէս Դաւիթ  
մարգարէն կընէր. «Իմէջ գիշերի յառնէի  
խոստովան լինել առ քեզ». (Սաղմ. ձժԲ. 62):

Անուամբ քրիստոնեայ են անոնք որ ըս-  
տը գիշերը կարճ կհամարին առաւօտուն  
մինչեւ արեգակը ծագի. մանաւանդ ծա-

դելէն ետքն ալ քանի մի ժամ անցնի քնով  
հեշտանան, որով առաւօտուն աղօթքն ալ  
մոռնալով բոլորովին Աստուծոյ ատելի կը-  
դառնան եւ անվարձ մշակ կըլլան. վասն զի  
Աստուծոյ շնորհքը ընդունելու ժամանակ  
է քրիստոնէից այն ժամը որ մեծ օգնու-  
թիւն եւ մխիթարութիւն կառնուն Աս-  
տուծմէ թէ ըստ հոգւոյ եւ թէ ըստ մարմ-  
նոյ. ինչպէս Իսրայելի որդիքը ամենայն  
առաւօտու աղօթքով կ'ոգոյնէին իրենց օ-  
րական ուտելիքը զմանանայն, որ կնշնա-  
կէր թէ Հոգւոյն սրբոյ քաղցրութեան եւ  
ողորմութեան ժամանակն է :





Գ Լ Ո Ւ Խ Ժ Է .

Յ Ա Ղ Ա Գ Ս Ա Ր Բ Ե Տ Ո Ւ Թ Ե Ա Ն .



Արբեցութիւնը մարդուս բանականութեան ապականիչ նիւթն է . թէպէտ եւ ոչ սպանանէ՝ բայց մտաց լոյսը կմթնեցնէ . եւ զմարդն կփոխէ անասուն անբան կրնէ կամ այլանդակ դադան կշինէ : Արբեցողը մարդ չըսուիր , անոր համար որ բանականութենէն զրկուած է . վասն զի ոմն խելագարի նման կցնորի , ոմն դիւահարի նման կկատաղի , եւ ոմն գայլի նման կչարանայ եւ կամ մեռելի պէս անզգայ կգառնայ :

Այլ եւ աչացաւ մարդու նման բարեկամը եւ թշնամին չկրնար տեսնել . խուլի նման խրատական խօսքեր չլսել . անոր համար այս օրէնքը ամենայն ազգի մէջ պահուեցաւ որ արբեցողը չեն խրատեր մինչեւ արբեցութեան քնէն չարթըննայ :

Գինին թէպէտ ըստ ինքեան չար չէ , բայց չարաչար գործածութիւնը մեծամեծ չարիքներ կգործէ . խռովութիւն , ատելութիւն , մարդասպանութիւն եւ գեռ շատ

ուրիշ անկարգութիւններ անով կըլլան, ինչպէս Յովհաննու տեսիլքը կվկայէ Բաբելոնի համար. «Անկաւ Բաբելոն մեծն իգինւոյ արբեցութենէն, իցասմանէ, իսրոնկութենէ իւրմէ, որ արբոյց զամենայն հեթանոսս». եւ թէ «Պոռնկեցան թագաւորք երկրի եւ արբեցան ընակիչք երկրի իգինւոյ արբեցութեան սրոնկութեան նորա». (Յայտ. ԺԴ. 8, ԺԷ. 2): Վասն որոյ սարտաւոր են քաղաքապետները եւ իշխանները քաղաքին ժողովուրդները արբեցութենէ հեռու պահել որ չարութիւններ չպատահին:

Գինին ընկերական սիրոյ պատճառ է, եւ տրտմութեան փարատիչ տրուեցաւ մարդուս. իսկ արբեցողները կռուոյ եւ տրտմութեան նիւթ ըրին զայն:

Բժիշկները յօժարացան զգինին տալ ուժաթափ հիւանդաց, իբրեւ գեղ զօրացուցիչ եւ առողջացուցիչ. իսկ արբեցողները իրենց առողջութիւնները կկորսընեն եւ անբժշկելի ցաւ կտտանան:

Արբեցութիւնը վնասակար է խիստ. որ զմարդն անխելք շուայլ եւ անարգ կընէ. վասն զի արբեցողը իրեն խելքը կորսնելով իրեն պատիւն ալ եւ ունեցածն ալ կկորսընէ. երբեմն ուրախութեան, խնջոյքի մէջ ինչ

որ ունի ծոցը՝ շուայլաբար անարժաններուն կրաշխէ. մէկը սրտին մէջի գաղանի խորհուրդները կհրատարակէ, որ իրեն անձին վնաս եւ անարգանք կբերէ. միւսը քուն կըլլայ, մէկալը կխաղայ, մէկը կուլայ, մէկը կծիծաղի, մէկալը կպտպանձի եւ անզգայ կգառնայ, մէկ ուրիշն ալ շաղվաղ-փութիւն ընելով կկրուցէ, կհակառակի եւ կկըռուի: Անկարգութիւն չկայ որ արբեցողները չգործեն, որով եւ կըլլան անարգ եւ նախատելի քան զամենայն մարդիկ:

Ամենայն մոլութիւնք թէպէտ չար են եւ վնասակար, բայց միայն զմարդս կծրուեն, այլ չեն կորսըներ. ինչպէս գողը շատ ճարտարութիւն ի գործ կղնէ գողութիւն ընելու եւ ձեռք չընկնելու համար. շնացողը պէսպէս հնարքներով կվարուի որ չըխայտառակուի, ստախոսն ալ յարմար պատճառներ կգտնէ որ իրեն ստութիւնը չըյայանուի. ուրիշ չարագործներն ալ ամբողջ միտք ունին, այլ ոչ առողջ. բանաւորապէս կգործեն, այլ ոչ բարեպէս. իսկ արբեցութիւնը կկորսընէ մարդուս միտքը, եւ մարդկութենէն կհանէ. վասն զի մարդս մտքովն է մարդ: Իսկ արբեցողը ինչ է արդեօք. անզգայ գոյացութիւն ալ չէ.

վասն զի անոնք յաւիտենական օրէնքով կը-  
շարժին անդադար աշխարհիս օգտին հա-  
մար՝ ինչպէս չորս տարեքը, յորոց են ան-  
զգայ արարածքը. իսկ արբեցողը չարաչար  
կվնասէ իւր անձին եւ ընկերին: Անասուն չէ,  
վասն զի նոքա հլու հնազանդութեամբ կը-  
ծառայեն մարդկանց, իսկ արբեցողը մէկին  
ալ պիտանացու չէ. գաղան չէ, որ նոքա  
բնաւ չեն վնասեր անոր՝ որոյ հետը ընտե-  
լացեր են. իսկ արբեցողը՝ բարեկամ եւ ըն-  
տանի չճանչնար: Տէրը եւ բարերարը չը-  
գիտեր, զամէնքը կհայհոյէ, ամենուն կը-  
բարկանայ, ամենուն հետ կկըռուի. վասն  
զի միտքը կորուսեր է, եւ այլանդակ հրէշ  
մը եղեր է: Երանի թէ մտքին հետ ի միա-  
սին ինքն ալ կորսուէր. վասն զի ո՞ր ական-  
ջը կգիմանայ նորա անկարգ անվայել խօս-  
քերը լսելու. ո՞ր աչքը կգիմանայ նորա  
անշնորհք շարժմունքը տեսնելու. ո՞ր քիթը  
չզըզուիր նորա բերնի գարշահոտութենէն:

Ահա քոսակին մէջ եզած արծաթը վեր-  
ջացաւ, ինքն ալ անպիտան ազրի նման գի-  
նետունէն դուրս ընկաւ, գլուխը բաց, գօ-  
տին քակած, ստքի ամանները փողոցն ըն-  
կած. կուրի նման պատէ պատ զարնուելով  
եւ խողի նման ցեխով շաղախուած՝ ուշէն

ուչ կուգայ իրեն տան դրանք մօտ կհասնի :

Այն ատենը կտեսնուին հին հարսանեաց նոր հարսնեւորներ, վասն զի այնտեղը դեւերը կխաղան՝ երբոր էրիկ կնիկ իրարու միտ կուտեն, տունը մութ ու խաւար, իւզ չկայ, մոմ՝ չկայ. աղայքը անօթի կուլան, կարտասուեն. հաց չկայ, պանիր չկայ. կինը խռոված կամ ծեծ կերած, սրախ նեղութենէն զաւակներուն կղարնէ. տունը վայով վայնասունքով կլցուի, արբեցողն ալ իբրեւ վիրաւոր արջ (այռ)՝ հայհոյանքներով կյարձակի կնկանը եւ զաւակացը վրայ, գլորելով վար կընկնի : Դրացիները կտեսնեն այս թշուառութիւնները, կցաւին կախտասան, ոմանք ալ անտանելի հայհոյութենէն ձանձրացած՝ առաւօտուն դատաստան կերթան դանդատ կընեն. դատաւորն ալ զհարածը բերել կուտայ, միանգամ եւ երկուս կխրատէ կյանգիմանէ, եւ դործի կղըրկէ. երբոր կտեսնէ թէ անով ալ չզգաստանար՝ կծեծէ, բանտ կձգէ :

Ի՞նչ կըլլայ այնուհետեւ. նպարտվաճառը (պախաղը) տուկու եւ բրինձ՝ իւզ եւ մոմ չտար. մանաւանդ թէ կուգայ կնկանը կընեղէ, եւ առաջին պարտքերը կպահանջէ : Օժիտը (անկեզը) որ կնիկը հօրը անէն բե-


րեր էր՝ վերջացաւ, եւ պղնձէ անօթները  
հետ զհետէ պակօտեցան տնէն :

Շատ անտանելի ախտ է արբեցութիւնը,  
եւ անկից ամենայն թշուառութիւնները եւ  
չարութիւնները առաջ կուգան. պէտք է  
ամենայն քրիստոնեայ զգաստ կենայ այն  
ախտէն, ինչպէս Քրիստոսի սուրբ Աւետա-  
րանը կապարէ ամենուն՝ թէ « Զգոյշ եղե-  
րուք անձանց, դուցէ ծանրանայցեն սիրտք  
ձեր շուայտութեամբ եւ արբեցութեամբ »:



### Գ Լ Ո Ի Խ Ժ Ը.

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՐԿՈՒԹԵԱՆ.

 Տէրն մեր Յիսուս Քրիստոս առաքինու-  
թիւն չվասարկող դատարկ քրիստո-  
նէին իրեն աւետարանին մէջը առա-  
կով յանդիմանութիւն կուտայ եւ կը-  
սէ. « Ընդէր կայք զօրն ցերեկ դա-  
տարկք » (Մատթ. Ի, 6): Այսինքն թէ ինչո՞ւ  
բոլոր օրը մարմնաւոր դործի հետ ըլլալով՝  
հոգեւորը զանց կառնէք եւ դատարկ կը-  
կենաք, առաքինութիւն չէք վաստակիր.

վասն զի մարդս եթէ միայն մարմնաւոր  
գործով պարապի : Քրիստոս գատարկ մարդ-  
կանուանէ զնա . անոր համար կըսէ , « Ինչո՞ւ  
գատարկ կկենտք » : Աշխարհս հանգստեան  
տեղ չէ : այլ աշխատանաց տեղ է : ինչպէս  
Սողոմոն մարմնաւոր աշխատութեան հա-  
մար կըսէ . « Որ գործէ զերկիր՝ լցցի հա-  
ցիւ , եւ որ երթայ զհեռ գատարկութեան՝  
լցցի աղքատութեամբ » . (Առակ. ԻԲ, 19) :  
Ինչպէս մարմնաւոր աշխատութիւնը հար-  
կաւոր է մարմնաւոր ապրուստի համար ,  
հոգեւոր աշխատութիւնն ալ՝ բարեգործու-  
թիւններն ալ պէտք են Աստուծոյ կամքը  
կատարելու համար , եւ հոգեւորապէս ա-  
ռաքինութիւններ վաստրկելու համար :

Երկինք երկիր եւ տարերքը ոչ թէ ի-  
րենց համար աշխատութեան մէջ են , այլ  
Աստուծոյ հրամանովը մեզի համար միայն  
կաշխատին . այսպէս մարդն ալ օրինակ աւ-  
նելով անոնցմէ՝ պէտք չէ հոգեւորապէս  
գատարկութիւն ունենայ : այլ պարտաւոր  
է միշտ բարեգործութեան աշխատանաց  
հետեւիլ :

Աշխարհս իբրեւ ազարակ Աստուծոյ՝ այ-  
գի է . իսկ մարդս Աստուծմէ վարձով բըռ-  
նուած մշակ է . պարտական եմք ամէնքս ալ

առանց դատարկ կենալու հողեւոր աշխատութիւններ ընել եւ առաքինութեան պատուէնքը պատրաստել Աստուծոյ համար :

Ապա ուրեմն դարշելի է այս կեանքին մէջ դատարկ կենալը, որովհետեւ խիստ կարճ է եւ անցաւոր. պէտք է միշտ բարեգործութիւն ընել եւ չարութիւններէ հեռանալ. վասն զի շատ պատուական խմատութիւն է որ մարդս այս աշխարհիս մէջ քիչ ժամանակով յաւիտենական կեանք ստանայ, եւ շատ յիմարութիւն է որ աշխարհիս մէջի պատուական ժամանակները դատարկ անցընելով կորսընեմք, չկրնամք մեր մեղքերուն վրայ ապաշխարել : Աստուած մեզի ապաշխարութեան ժամանակ տուեր է. մենք անփոյթ ըլլալով՝ կկորսընեմք զայն հարկաւոր ժամանակները դատարկութեամբ. չեմք մտածեր թէ ժամանակը որ կորսընեմք՝ յաւիտենական կեանքն ալ հետը կերթայ :

Ուրեմն աշխատիմք չուշանալ մեղքի մէջ. զղջալ եւ ապաշխարել պէտք է. յիմարութիւն կընէ այն մարդը որ իրեն պարտքը քիչ ժամանակի մէջ չվճարէ. վասն զի քանի ուշացընէ պարտքը, այնքան աւելի կաճի : Այսպէս մեղաւոր մարդը քանի որ



ուշանայ մեղքի մէջ, եւ օրերը դատարկ  
անցընելով չապաշխարէ, այնքան մեղքը  
կաճի եւ կաւելնայ: Չմտածեր իրեն մա-  
հուան օրը, որ յանկարծ գողի նման պիտի  
գայ. եւ չգիտեր թէ ուր տեղ եւ ո՞ր ժա-  
մանակ կսպասէ մահը իրեն: Ամէն տեղ  
սպասել պէտք է մահուան. վասն զի ոչ տեղ  
կիինտուէ, եւ ոչ ժամանակ կնայի: Ամէն  
ժամանակ պէտք է մեղի արթուն կենալ,  
եւ դատարկութիւն չսիրել, այլ միշտ  
հոգեւորապէս պատրաստութիւն ունենալ  
հարկաւոր է, որ մշտնջենական մահէ ազատ  
մնամք եւ յաւիտենական երկնից արքայու-  
թեան ժառանգորդ լինիմք ողորմու թեամբն  
Աստուծոյ:



Գ Լ Ո Ի Խ Ժ Թ .

Յ Ա Ղ Ա Գ Ս Ա Գ Ա Հ Ո Ի Թ Ե Ա Ն .

**Ա**զահու թիւնը անկարգ բաղձանք է արծաթոյ, անոր համար ազահը տանջանքով կապրի. վասն զի միշտ գանձ ժողվելու հետ լինելով կիրքսընէ հանդատութիւնը. ցերեկը միշտ հոգով կմաշի, եւ գիշերը վախով կկենայ:

Աշխարհիս հոգը թոյլ չտար մարդուս ճշմարիտը ճանչնալ: Ազահը Աստուծմէ չը վախնար, եւ մարդէ չամաչեր. հօրը եւ մօրը չխնայեր. բարեկամին հաւատարմութիւնը չպահեր, այրին կնեղէ, որքը կը կողոպտէ, սուտ կվկայէ. եթէ պարտք ունի մէկի մը՝ կուրանայ. առնելիք եթէ ունի՝ կրկնապատիկը կպահանջէ:

Դարձեալ, ազահու թիւնը անյագ եւ անհամեստ ցանկութիւն է փառաց, որ անով հրեշտակները մեղանչեցին, ուղեցին աստուածանալ, բայց չհասան իրենց բաղձանացը, դեւ դարձան. ազահութեամբ մեր առաջին ծնողքը մեղանչեցին եւ թշուառութեան մէջ ընկան:

Փարթամութիւնը մարդուս աչքին պատուական կերեւի, բայց շատ խոտելի է, վասն զի սլ որ արծաթ եւ ոսկի կտիրէ, աստուածասէր եւ եղբայրասէր չկրնար ըլլալ: Ոսկի եւ արծաթ ունենալը թէպէտ մեղք չէ, ըստ որում աշխարհիս մէջ անով կկառավարուի ամէն բան, բայց չափաւորը սիրելն է գովելի. անչափը ատելի է, եւ մահ կրերէ յաւիտենական: Իմաստուններուն խօսքն է որ կըսեն թէ «Մեծութիւնդ եթէ շատանայ, դանձգ սրտիդ մի դներ»: Քրիստոս ալ կհրամայէ. «Գանձեցէք ձեզ դանձս յերկինս, ուր ոչ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ»:

Ազահուութիւնը կռապաշտութիւն է՝ զերկրաւորը անչափ սիրելուն համար: Ինչպէս գարշահոտութիւնը հակառակ է անուշահոտութեան, եւ խաւարը լուսոյ, այսպէս ազահ փարթամութիւնը Աստուծոյ սիրոյն հակառակ է. «Ոչ կարէք, կըսէ Քրիստոս, Աստուծոյ ծառայել եւ մամոնայի». (Մատթ. 23, 24):

Այն փարթամութիւնը որ ազահութեամբ ստացուած է՝ փուշ է, որ աւելի կխոցոտէ, մտօքը կտանջուի, եւ սառանայն նորա միտքը կփակէ որ հանդերձեալ կեանքը չմտածէ:

Ագահը սրչափ շատ գանձ ունենայ, իբրեւ մուրացկան աղքատ՝ միշտ զերկրաւորը կխնդրէ. գանձ ժողովելու կաշխատի, վասն զի ինքը իրեն արծաթին տէրը չէ, այլ ծառայ է անոր, որ ետքը ուրիշի պիտի թողու. ինչպէս Դաւիթ կըսէ. «Ոչինչ գրտին արք ի մեծութեան. այլ թողցեն օտարաց զմեծութիւն իւրեանց» . (Սաղմ.) :

Ո՛վ որ կցանկայ մեծանալ՝ փարթամութեան հասնիլ, նա փորձութեան եւ որոգայթի մէջ կընկնի : Անչափ փարթամութեան ցանկութիւնը կորուստ է ունեցողին. եւ զի Քրիստոս մեծութիւնը կնախատէ, ինչպէս այն յիմար մեծատան ասաց՝ երբոր շատ հոգ կանէր իրեն գանձը սւր ժողովելուն համար, թէ «Այս գիշեր հոգիդ քեզմէ կեննէ, եւ ինչ որ ժողովել ես՝ սւմ՝ պէտք է մնայ» :

Ագահը արծաթին եւ ոսկւոյն կորստեանը կցաւի, հոգւոյն կորուստին համար ամենեւին չցաւիր. ամէն օր զինքը կնորոգէ, եւ հանդերձները կմաքրէ, հոգին աղակզի կըթողու միշտ : Այն բարիքը որ մարդս հետը ասնել կարող չէ, իրեն օգուտ չունի. միայն ողորմութիւնն է իրեն ընկեր եւ օգուտ. վասն զի երկրիս ժամանակաւոր բարիքը մերը չեն. մեք անոնք հետերս տանելու

չեմք, ըստ որում օտարական եւ պանդուխտ եմք այս տեղը. բաց ի բարեգործութենէ ուրիշ բան չեմք կրնար հետերս տանիլ. վասն զի աշխարհիս դռնասպանը, այսինքն մահը, թոյլ չտար հետերս ուրիշ բան տանել:

Ինչպէս մեծատան մէկը խիստ հիւանդացաւ. եւ երբ իրեն փարթամութենէն ոտկիէն եւ արծաթէն օգնութիւն խնդրեց, ոչինչ չշահուեցաւ. ասաց այն ատենը. Ո՛վ խաբերայ մեծութիւն եւ փարթամութիւն, բոլոր սրտովս ձեզի ծառայեցի. այժմ ինձ այս նեղութեան մէջ մէկ օգնութիւն մը անելու չէք. ուրեմն ատելի էք դուք, զձեզ կ'թողում, ըսաւ, այստեղ. եւ այն ամէն դանձն ալ դեռ չվախճանած՝ աղքատաց բաժնեց: Այն մեծատունը իրեն դանձովը երկնից արքայութիւնը գնեց, Քրիստոսի այն խօսքին ահանջ գնելով որ կըսէ. «Արարէք ձեզ բարեկամս ի մամնայէ անիրաւութեան» (Ղուկ. ԺԶ, 9): Նա աղքատներուն ծոցը լցուց դանձը՝ որ իրեն համար ազօթք ընեն եւ թշնամիներուն հետ պատերազմին. վասն զի ո՞վ որ կարօտելոց օգնութիւն կընէ՝ բազմապատիկ կըստանայ փոխարէնը. «Հարիւրապատիկ առցէ, կըսէ Քրիստոս:

եւ զկեանս յաւիտենականս ժառանգեսցէ » :  
(Մատթ. ԺԹ, 29) :

Ազաճին անգթութիւնը զարմանալի բան է . վասն զի իրեն չողորմիր ամենեւին . արթուն կկենայ որ գողը արծաթը չգողանայ . բայց սատանային թոյլ կուտայ իրեն հոգին գողնալ :

Ազաճ մեծատունը կըսէ թէ հարուստ եմ, ունեւոր եմ, եւ մէկ բանի կարօտութիւն չունիմ . բայց չգիտեր որ ինքն է տառապեալ, ողորմելի, աղքատ, կոյր եւ մերկ : Ազաճը դուրսէն լցուած է, ի ներքուստ ունայն, եւ սրտովը կմուրանայ . վասն զի նորա ունեւորութիւնը սուտ երեւակայութիւն է՝ երազի նման . երազին մէջ ուտել խմելու հետ է . երբոր կզարթի՝ քաղցած է եւ ծարաւ . այնպէս ազաճը իբրեւ քաղցած եւ ծարաւ՝ կժողվէ, բայց ամէն բանէն ունայն եւ դատարկ կմնայ :

Ո՛վ որ ազաճաբար արծաթը կսիրէ, իրեն կորուստ է, եւ իրեն կամքովը դժօխք կերթայ :


Այլ եւ ազաճը չուզեր լսել եւ խօսիլ երկնային բաներու վրայ, այլ միշտ երկրաւորաց համար կխօսի, ինչպէս Քրիստոս կըսէ . « Որ յերկրէ ասաի է՝ յերկրէ խօսի » :  
(Յովհան. Գ, 51) :

Ազահը ամենայն օր լի է ցաւօք եւ թը-  
շուառութեամբ: Գիշերը միտքը հանգիստ  
չէ. շատ մտածելով նեղութիւն եւ անձկու-  
թիւն կճնանի. ետքը խոցոտելով մահու  
կհանգիալի, եւ կմեռանի յանկարծ այն մե-  
ծատան սէս՝ որ մեռաւ յանկարծ եւ գը-  
ժոխք գնաց. իրեն գանձը օգնութիւն չը-  
րաւ ամենեւին. «Ոչինչ օգնեսցեն գանձը  
անօրէնութեան. այլ արգարութիւն փրկէ  
ի մահուանէ» (Առակ ԺԱ, 4): Վասն որոյ պար-  
տաւոր է ամենայն մեծատուն իրեն գանձը  
ազքատին գողը լեցնել ողորմութեամբ, եւ  
ոչ թէ ազահութեամբ պահել, որ իրեն  
օգնութիւն չունի ամենեւին:



Գ Լ Ո Ի Խ Ի .

Յ Ա Ղ Ա Գ Ս Յ Ա Փ Շ Տ Ա Կ Ո Ի Թ Ե Ա Ն .

 Յափշտակութիւնը ուրիշի մէկ բանը կամ՝ ապրանքը բռնութեամբ առնուին է : Այս մեղքը շատ ծանր է : Եւ ընդդէմ է աստուածային օրինաց՝ որ կրսէ : « Ինչ որ քեզ չես կամենար՝ դու ուրիշի մի՛ ընէր » :

Հին օրէնքը կհրամայէր չցանկանալ ուրիշի ունեցածներուն . իսկ նոր օրէնքը կհրամայէ ոչ միայն չյափշտակել եւ չցանկալ ուրիշի ունեցածին , այլ եւ կխրատէ իրենն ալ թողուլ . « Որ կամիցի ոք , կրսէ՝ Քրիստոս : դատել եւ առնուլ զշապիկ քո՝ թող ի նա եւ զբաճկոնքո » . (Մատթ. Ե, 40—42) : Եւ թէ « Որ ոք խնդրէ ի քէն՝ ասուր . եւ որ կամի ի քէն փոխ առնուլ՝ մի՛ դարձուցաներ զերեսս » :

Յափշտակողը կնմանի սատանայի որ ուղեց Ասատուծոյ բարձրութիւնը խլել՝ ասելով : « Եղէց նմանող Բարձրելոյն » : Եւ ահա մինչեւ ցայսօր կջանայ ետեւէ կըլլայ սատանայն որ զմեզ խարէ եւ դժոխք իջեցընէ :



Զարմանալի յիմարութիւնն է աշխարհիս իշխանաց յիմարութիւնը՝ որ քիչ մը բարութիւն եւ վայելչութիւն կրնդ ունին աշխարհէս, Աստուծոյ մեծութիւնը եւ խնամքը չեն մտածեր, եւ նորա ամենայն տուրքը եւ բարերարութիւնը՝ որ անհուն է՝ կմուռանան. աղօթք չեն ըներ, հոգեւոր խրնդրուածքները կմուռանան, Աստուծոյ ողորմութենէն զրկուելը չեն հոգար ամենեւին. նոքա այնպէս անողորմ մնալով՝ միայն յափշտակութեան հետ կըլլան, ուրիշինը իրենց սեպհական ընել կցանկան, եւ Աստուծոյ ողորմութենէն ալ ետ կմնան, Աստուած ալ անոնց սղորմութիւն չըներ ամենեւին:

Չեն մտածեր թէ իշխանութիւն կամ հարստութիւն որ ունին՝ սէր տեղէն է. միթէ Աստուծմէ չէ, որ նոքա նորա ամենախնամ բարերարութիւնը մոռնալով՝ ոչ զԱստուած կյիշեն, եւ ոչ նորա բարերարութիւնը կմտածեն, որ սլարտաւոր են ահիւ եւ տազնապալ գնալ ըստ կամացն Աստուծոյ:

Ուրեմն սլարտաւոր է ամենայն մարդ, ինչ յիշակի մէջ ալ ըլլայ, Աստուծոյ փառք տալ. եթէ բարերարդ է հարստութեամբ

եւ կամ իշխանութեամբ, Աստուծմէ տուրք  
եւ պարգեւ է իրեն. հպարտանալ պէտք  
չէ, կամ ուրիշ փառքի ցանկանալով ու-  
րիշինը չյափշտակէ. այլ գոհութեամբ հան-  
դերձ թող վայելէ: Եւ եթէ տարաբաղդու-  
թեան մէջ է, աղքատ է կամ չքաւոր է,  
կամ մէկ տկարութիւնով մը վշտացած է,  
այն ալ Աստուծոյ խրատն է իրեն. «Զի զոր  
սիրէ Տէր՝ խրատէ. տանջէ զամենայն որ-  
դի զոր ընդունի» . (Առակ. 9, 12): Եւ միայն  
իրեն մեղքերը թող մտածէ. եթէ չար է,  
թող ջանայ չարագործութենէ ետ կենալ  
եւ Աստուծոյ ճանապարհը մտնել ասպշխա-  
րութեամբ. գոհանալ պէտք է Աստուծմէ,  
եւ ոչ տրանջալ: Յափշտակութիւն ալ նոյն.  
պէս չընէ: Եթէ նոր օրէնքով չվարուի, որ  
իրենն ալ ձգել կհրամայէ, գոնէ հին օրէն-  
քով թող վարուի որ ուրիշի ունեցածին  
աչք չդնէ, եւ չցանկայ յափշտակելու ուրի-  
շինը, ընդդէմ աստուածային սուրբ Օրինաց:



Գ Լ Ո Ի Խ Ի Ա.

Յ Ա Ղ Ա Գ Ս Վ Ն Ա Ս Ո Ւ Յ Մ Ե Ղ Ա Յ .



Մեղքը իժի ծնունդ կկոչուի : Իժը օձ է՝  
քնուժեամբ խայթող կենդանի, որ  
ծնողքը կսպաննէ : Մեղքն ալ երբոր  
մարդուս մտքին մէջ կմտնէ, հաւա-  
նական սէր ցոյց կուտայ անոր, որ  
իրմով հեշտանայ, եւ հեշտացընելէն ետքը՝  
մարդուս հոգին եւ մարմինն ալ կսպաննէ :

Սուրբ վարդապետաց մէկը կըսէ : Մի է  
ծայրագոյն բարին, որ է Աստուած, եւ մի  
ծայրագոյն չար, որ է մեղքն. ո՞րքան Աս-  
տուած. բարի է, այնքան մեղքը չար է : Եթէ  
ամենայն թագաւորք, իշխանք եւ հնարա-  
գէտք ըզրոր աշխարհիս միաբանին, չեն  
կրնար մէկ հոգի դժօխք դրկել, այլ մէկ  
մահացու մեղք միայն հաւանական կամ-  
քով հազարաւոր եւ բիւրաւոր հոգիք դը-  
ժօխք կզրկէ՝ յաւիտենական տանջանաց  
մէջ. ինչպէս յայանի է չար հրեշտակնե-  
րէն, որք մեծամտութեան մեղքով երկնքէն  
անդունդը ընկան եւ յաւիտենական կորուս-  
տը մատնուեցան :

Մեզաց առաջին վնասը եւ չարութիւնը այն է՝ որ կքակէ եւ կկործանէ ամենայն վարձք եւ բարեգործութեան արդիւնքները, որ մարդս ստացած կլինի մեղանչելէն առաջ: Եթէ այն մեղքով կմեռանի մարդս, բարեգործութեանց արդիւնքը կփոխուի յաւիտենական տանջանք դժոխոց. վասն զի եթէ մէկ հոգիի մէջ չար մեղքը որ մտնէ՝ կսպաննէ ամենայն առաքինութիւնները. կըկողոպտէ ամենայն սրբութիւնը. մէկ բարեգործութիւն ամենեւին չթողուր: Ուրեմն մեղաւորը քանի որ մեղքի մէջ է՝ ինչ բարեգործութիւն որ ընէ՝ անօգուտ է եւ անշահ:

Գարձեալ, մեղքը մարդուս միտքը կկուրացընէ, եւ նորա բարի կամքը կարգելէ. առաջ ազօթքի ժամանակ կթուլացընէ, եւ ծուլութիւն կսփրեցընէ. անոր սրահք սահել չթողուր. որկրամուլութիւն սաշտել կուտայ, եւ ամենայն առաքինութիւններէ զրկելով՝ մեղաւորին սիրտը կքարացընէ, եւ Աստուծոյ շնորհքէն կհանէ բոլորովին:

Մեք ամէնքս ալ Աստուծոյ շնորհօքը որդիք Աստուծոյ կանուանիմք. եթէ կորսնեմք աստուածային շնորհքը, շօրն երկնաւորի սրգեգրութենէն կզրկուիմք: Ինչպէս Եսաւ իրեն անգրանկութիւնը վաճառեց Յա-

կորին, գրկեցաւ նա հօրը օրհնութենէն եւ ժառանգութենէն. բայց ետքը սկսաւ գոռալ լալ եւ արտասուել, մինչեւ կրկին հօրը օրհնութեանն արժանացաւ. իսկ անդեղջ մեղաւորները որ կզրկուին Աստուծոյ որդեգրութենէն՝ ամենեւին սուգ չեն ունենար, չեն ողբար եւ չեն ապաշխարեր՝ որ կրկնակի երկնաւոր ժառանգութիւնը ստանան: Այս ինչպէս կուրութիւն է մեղաւորաց կուրութիւնը, որ երկնաւոր Հօրէն կզրկուին, Քրիստոսի եղբայրութենէն կբաժանուին, եւ հրեշտակաց եւ սրբոց ընկերակցութենէն կորոշուին. չեն լար՝ չեն ողբար եւ սուգ չեն պահեր ամենեւին: Երկինքը կուլայ, երկիրը կողբայ այնպիսի մեղաւորներուն վրայ. իրենք իրենց համար հոգ չունին ամենեւին լալու եւ ապաշխարելու մեղքերը: Ո՛ւմ համար արդեօք կը պահեն արտասուքները. այսօր՝ քանի որ ժամանակ ունին՝ վտակի (սեղի) նման չեն թափեր. ինչո՞ւ կխնայեն՝ չեմ գիտեր իրենց արտասուքը:

Մեղքը երբ զմեղաւորը Աստուծոյ որդեգրութենէն կզրկէ, որք եւ առանց հօր կը մնայ մարդ, չարը չարին վրայ կաւելնայ, եւ սատանայի որդի կլինի. երկնից արքայ-

ութենէն կգրկուի, գժոխըի ժառանգ կլինի:  
Քրիստոս այն հոգին որ իրեն արիւնովը  
գնեց, անզեղջ մեղաւորները զայն սաատ-  
նայի կլաճառեն՝ մարմնաւոր եւ անցաւոր  
ուրախութեան համար:

Այլ հարկաւոր է ամենայն քրիստոնէին  
աղօթքով, պահքով, ողորմութեամբ, խոս-  
տովանութեամբ եւ ապաշխարութեամբ  
պատրաստ կենալ որ մեղքը չմանէ սրտե-  
րուն մէջ, եւ չվնասէ հոգւոյն, եւ հոգին  
Աստուծոյ սրգեղբութենէն եւ յաւիտենա-  
կան ժառանգութենէն չգրկուի:



Գ Լ Ո Ի Խ Ի Ֆ.

ՅԱՂԱԳՍ ԽՈԿՄԱՆ ՄԱՀՈՒ.

Կարծածէ՞ք աւելի շուտ կհասնի քեզ մահու օրը. բայց ինչ պիտի կրնաս ընել, ոչինչ. այսօր կտեսնես որ մէկը կայ, վաղը նա չերեւար. վասն զի երբօր մէկը կհեռանայ աչքերուս գիմացէն, մտքերէս անօր յիշատակն ալ կվերնայ: Ափսոս մարդուս թմրութեան եւ սրբտի ամբուլթեանը, որ միայն ներկային համար կմտածէ, եւ ապառնիլն համար հողչունի: Պէտք էր դուն ամէն օր մտածմանդ մէջ այնպէս ունենայիր՝ որպէս թէ այսօր պիտի մեռնիս. եթէ բարեգործութիւն ունենայիր, մահէն այնքան չէր վախնայիր: Շատ աղէկ է մեղքէ զգոյշ կենալ՝ քան թէ մահէն վախնալ: Եթէ այսօր պատրաստ չես, վաղը ինչպէս կլինիս. չգիտես որ վազուան պիտի հասնիս թէ չէ: Ինչ օգուտ է երկար կեանքը՝ եթէ պատրաստ եւ զգաստ չկենանք ու մեր մեղքերը աւելցընենք: Երանի անօր որ մահուն օրը միշտ աչքին առջեւը ունի, եւ պատրաստութեամբ մա-

հուն կսպասէ : եթէ տեսար մէկին մահը , միտքդ բեր որ դուն ալ պիտի անցնիս այն ճանապարհէն :

Երբոր առաւօտ կլինի , այնպէս կարծիք արա որ երեկոյին հասնելու չես . իսկ երեկոյին եթէ հասնիս , մի յուսար թէ առաւօտ պիտի տեսնես : Միշտ ուրեմն պատրաստ եղիր , եւ այնպէս զգուշութեամբ կենցաղավարէ որ մահը անսպարաստ չգտնէ զքեզ :

Շատ մարդիկ շուտ եւ յանկարծ կմեռնին , վասն զի ի ժամուն յորում ոչ կարծեմք՝ գայ որդի մարգոյ :

Քանի որ առողջ ես՝ կարող ես բարեգործութիւն ընել . ապա երբոր տկարութիւն պատահի քեզ՝ ինչ պիտի կրնաս ընել : Բարեկամիդ եւ կամ մերձաւորիդ մի յուսար , եւ քու հաշեւօր կեցութիւնդ ապառնի ժամանակին մի ձգեր : Եթէ դու քու փրկութեանդ կցանկաս , այժմ պատշաճ ժամանակին լաւ է բարի գործքեր ունենաս , քան թէ այլոց օգնութեանը յուսաս : Եթէ դու այժմ քեզ համար չհոգաս , վերջը ո՞վ պէտք է հոգայ : Այժմ շատ աղնիւ ժամանակ է , այժմ է փրկութեան օրը , այժմ ժամ է ընդունելութեան . ժամանակ կուգայ որ մէկ օր կամ մէկ ժամ կցանկաս ունենալ զգաս :



ասնալու, չեմ կարծեր թէ այն օրը կամ  
ժամը գանես: Տես ուրեմն, սով սիրելի, սր-  
քան փորձութենէ զքեզ պիտի ազատես,  
եւ սրքան մեծ երկիւղէ պէտք է փրկուիս,  
եթէ միայն մահէ վախենաս եւ զարհուրիս.  
Չանք ըրէ ուրեմն այժմ՝ այնպէս կենալ՝ որ  
մահուան ժամանակը ուրախանաս քան թէ  
տրամիս: Սովրէ այժմ՝ աշխարհիս մէջ մեռ-  
նիլ՝ որ ետքը Քրիստոսի հետ կենդանանաս:  
Սովրէ այժմ՝ այս տեղը ամենայն ինչ ար-  
համարհել, որ այն տեղը ազատապէս կա-  
րողանաս Քրիստոսի հետ լինել: Տանջէ մար-  
մինդ այժմ՝ ապաշխարութեամբ, որ այն  
տեղը ճշմարիտ յոյս ունենաս: Ո՞վ պիտի  
յիշէ զքեզ՝ մահուանէդ ետքը, եւ սով քե-  
զի համար աղօթք պէտք է ընէ այն ատենը:  
Արի այժմ, արի սիրելի եւ դործէ ինչ որ  
դործելու ես. վասն զի չգիտես թէ երբ  
պիտի մեռնիս. այլ եւ չգիտես թէ ինչ  
պիտի հանդիպի քեզ մահուանէ ետքը:  
Քանի որ ժամանակը ձեռքդ է՝ անմահա-  
կան դանձ ժողովէ քեզի համար, քու փրկ-  
կութենէդ ի զատ ուրիշ բան չհոգաս: Ա-  
նոր միայն փոյթ ունեցիր, որ Աստուծոյ է  
հաճելի: Քեզի բարեկամ ունեցիր Աստուծոյ  
սուրբերը. անոնց պատուելով՝ նոցա վար-

քերուն հետեւէ, որ եթէ խեղճ մնաս՝ նա-  
քա կընդունին զքեզ իրենց օթեւանը: Պա-  
հէ զքեզ երկրիս վրայ իբրեւ պանդուխտ  
եւ օտար, սիրող ալ նոյնպէս ազատ պահէ՝  
առ Աստուած ուզելով, վասն զի այս տեղը  
մնացական քաղաք չունիս, աղօթք եւ աղա-  
չանք զրկէ երկիրքը միշտ, որ հոգիդ ար-  
դիւնաւոր եւ երջանիկ երեւայ առաջի Աս-  
տուծոյ զկնի մահուանդ:



Գ Լ Ո Ւ Խ Ի Ի.

ՅԱՂԱԳՍ ՄՏԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԱՍՏԱՆԻ.

**Ս**մէն գործքիդ վերջը նկատէ թէ ինչ-  
պէս պէտք է կենաս անաչառ դատա-  
ւորին առջեւը, յօրմէ մէկ բան չը-  
ծածկուիր. ոչ քնճանկերով կհամոզ-  
ուի, եւ ոչ պատճառներով կխաբուի.  
այլ միայն իրաւունքով եւ արդարութեամբ  
կդատէ:

Ո՛վ յիմար եւ ողորմելի մեղաւոր, ինչ  
պատասխան պիտի տաս Աստուծոյ՝ որ ամե-  
նայն չարութիւններդ գիտէ: Դու երբեմն

բարկացող մարդու երես նայիլ կվախնաս,  
ինչո՞ւ այժմ՝ չես սլափարաստուիք դատաս-  
տանի օրուան համար :

Այժմ՝ քու աշխատանքներդ արդիւնաւոր  
են, ընդունելի են, եւ ամենայն աղօթքդ  
լսելի կլինին առ Աստուած, որ անոնցմով  
մեղքերէդ կմաքրուիս եւ կսրբուիս :

Այն տեղը աւելի ծանր է մէկ ժամ մը  
սլափի մէջ կենալ՝ քան թէ այս տեղը  
հարիւր տարի ծանր ապաշխարութեան մէջ  
մնալ : Այժմ՝ այս տեղը զգոյշ կեցիր եւ  
ցաւէ քու մեղքերուդ յիրայ, որ դատաստա-  
նի օրը անմեղ լինիս արդարոց հետ . ըստ  
այնմ, « Յայնժամ արդարն կացցէ բազում  
համարձակութեամբ հանդէպ նեղչաց իւ-  
րոց, եւ որոց անդոսնէ ինն զվաստակս նորա » :  
Այն ատենը անօնք չեն դատաստարտուիք՝  
օրօնք որ այս տեղը խոնարհաբար մարդ-  
կանց դատողութեան տակ ընկան : Այն ա-  
տենը մեծ համարձակութիւն կունենայ աղ-  
քատը եւ խոնարհը : Ամօթով կմնայ ամէն  
կողմանէ հպարտը եւ ամբարտաւանը :

Այն ատենը կհամարուի նա իմաստուն  
կեցած այս աշխարհիս մէջ՝ որ սովրեր էր  
յիմար եւ խոտան լինել վասն Քրիստոսի :  
Այն ատենը վշտազնեալ մարմինը աւելի


կղուարճանայ՝ քան զՏեշտութեամբ միշտ  
անուցածը: Այն ատենը խոտելի հանդերձ-  
ները կփայլին, եւ ազնիւները կխաւարին:  
Այն ատենը աւելի կգովուի աղքատին տու-  
նը՝ քան թէ ոսկեհար պալատը. այն ատե-  
նը աւելի կհամարուի մաքուր խղճմտան-  
քը՝ քան զհմուտ փիլիսոփայութիւնը: Այն  
ատենը աւելի կխնդաս լռապահութեանդ  
համար՝ քան թէ երկար առասպելաբանու-  
թեանդ: Սորվէ ուրեմն այժմ՝ քիչ մը նե-  
ղութիւն քաշել, որ այն ատենը մեծ տան-  
ջանքներէ ազատիս: Այս տեղը փորձէ  
դքեզ՝ թէ ետքը այն տեղը ինչ կարող ես  
ընել: Եթէ այժմ՝ քիչ նեղութիւն մը չես  
կրնար քաշել, ինչպէս ապա կարող ես մըշ-  
տանջենաւոր պատիժը կրել: Եթէ այժմեան  
քիչ չարչարանքը անհամբերութիւն կըբ-  
րէ, այն ատենը դժոխքին մէջ դառն տան-  
ջանքներու ինչպէս պիտի համբերես: Ճըշ-  
մարիտ կըսեմ, չես կրնար ամենեւին մի-  
անգամայն երկու խնդութիւնն ալ ունենալ.  
այսինքն այս աշխարհիս մէջ զուարճանալ,  
եւ այն տեղը Քրիստոսի հետ թաղաւորել:  
Ո՛վ որ զՍտուած յամենայն սրտէ կսի-  
րէ՝ նա ոչ մահէ, ոչ տանջանքէ, ոչ դա-  
տաստանէ եւ ոչ դժոխքէ կվախնայ. վասն

դի անմեղ համարձակութիւն կունենայ առ Աստուած այն տեղը, եւ նորա սիրելի եւ հաւատարիմ ծառայ կոչուելով՝ յաւիտեանական երջանկութիւնը պիտի վայելէ արքայութեան մէջ սրբոց եւ հրեշտակաց հետ:



### Գ. Լ. ՈՒԽ ԻԳ.

ՅԱԳԱԳՍ ԳԻՄԵԼՈՅ ՅԱՊԱՇԻԱՐՈՒԹԻՒՆ.

 Ապաշխարութիւն հարկաւոր է, եւ պէտք է առանց ուշացնելու կատարել. բայց ինչ ժամանակ, եթէ ըսեմ, յետ մահուանս ապաշխարեմ, այս անկարելի է, որ այն ատենը ամենեւին ժամանակ չէ ապաշխարելու. միայն այս տեղը ունիմ կարողութիւն ապաշխարելու. վասն զի յետ մահու մէկի մը ամենեւին թոյլ արուած չէ ապաշխարել. եւ եթէ ըսեմ՝ մահուան ժամանակս կապաշխարեմ, այս ալ աւելի դժուար է. վասն զի այն ատենը միտքս զբաղեալ կլինի մարմնոյս ցաւին եւ վերջին նեղութեան հետ. ուստի պէտք է ժամանակ դանեմ որ

մի ըստ միտջէ ամենայն մեղքերս խոստովանիմ, եւ ինչ ապաշխարանք որ դնէ խոստովանահայրս՝ սիրով յանձն առնում կատարել, վասն զի կվախնամ խիտա՝ թէ մահուան ժամանակս չեմ կրնար ապաշխարել:

Մեք ամէնքս ալ պէտք է հասկընանք որ եթէ մեղաւորը չկամենայ այս աշխարհիս մէջ իրեն ըսլոր մեղքերը խոստովանութեամբ քաւել, եւ չկրնայ կատարեալ ապաշխարութեամբ մարմինը տանջել եւ խրատուիլ, ետքը ի հանդերձեալ ժամանակին Աստուծոյ արդար իրաւունքովը կը խրատուի եւ յաւիտենական պատուհասովը կպատժուի դժոխքին մէջ՝ որ մշանջենաւոր է, այսինքն վերջ չունի:

Ուրեմն շատ լաւ է որ մենք այս տեղը այս աշխարհիս մէջ քիչ մի ժամանակ ողբամք մեր մեղքը, եւ ապաշխարեմք որ այն տեղը յաւիտենական տանջանքէ ազատ մընամք: Յիշեմք Քրիստոսի անսուտ խօսքը. եթէ չապաշխարէք, կըսէ, կկորսուիք: Այս Տէրունական խօսքը մտքերուս մէջը տպուորելով՝ փոյթ ունենալ պէտք է որ ապաշխարութենէն ետ չկենանք, որ ետքը յաւիտենական երջանկութեան արժանի լինինք:



Գ Լ Ո Ի Խ Ի Ե.

Յ Ա Ղ Ա Գ Ս Յ Ա Ի Ի Տ Ե Ն Ա Կ Ա Ն Կ Ե Ն Ա Յ.

Ամենայն մարդ օր մը իրեն յաւիտե-  
նական տունը պիտի երթայ որ ինքը  
շիներ է այս կեանքիս մէջ իրեն հա-  
մար. այլ դեռ չգնացած՝ չգիտէ  
թէ արդեօք ուրախութեան տուն է  
այն թէ սգոյ տուն. Բայց երբ կլսենք սուրբ  
գրքերէն որ կը արողեն միշտ թէ ուրախու-  
թեան պատճառը սուգն է, եւ սգոյ պատ-  
ճառը ուրախութիւնն է, ասով կհասկընանք  
որ մարդս եթէ այս աշխարհիս մէջ կեանքը  
միշտ մեղքով անցուցեր է, եւ ամէն ժամա-  
նակ ուրախութեան մէջ լինելով՝ սուգ չէ  
մտած մեղացը համար, եւ յաւիտենական  
կեանքը միտք չբերեր, յայտնի է որ նորա  
յաւիտենական տունը՝ սգոյ տունն է, եւ  
վերջը այն տեղը պիտի երթայ, այսինքն  
դժոխքը, որ այս տեղը ինքը իրեն անուղիղ  
վարքովը շիներ է. Իսկ եթէ բարի վարքով  
եւ ապաշխարութեամբ կեցեր է այս տեղը,  
ի հարկէ նորա յաւիտենական տունը ուրա-  
խութեան տունն է, այսինքն արքայութիւնն

է, եւ այն տեղը պիտի երթայ՝ զոր ինքը  
բարի գործքովը շիներ է այս տեղը :

Երբոր կմեղանչենք եւ անգեղջ կմնանք  
առանց ապաշխարելու, այն ատենը դեւը  
(սատանայն) կհրաւիրէ զմեզ մեր յաւիտե-  
կան տունը շինել դժօխքին մէջ. եւ եթէ  
զգջմամբ եւ ապաշխարութեամբ կենանք  
այս տեղը, Քրիստոս Տէրն մեր ինքը կհրա-  
ւիրէ զմեզ շինել յաւիտենական տուն եր-  
կինքը արքայութեան մէջ :

Վայ է մեզի՝ եթէ անցաւոր հեշտութեան  
համար անանցանելին եւ յաւիտենական ե-  
րանութիւնը կորսնենք. եւ վայ այն մար-  
դուն որ կյուսայ թէ Աստուծմէ հեռանալով՝  
աշխարհիս մէջը ուրիշ պատուական բան  
կգտնէ. չմտածեր թէ Աստուած որ այս աշ-  
խարհս իրեն բարութիւնով տուեր է մեզի,  
կսպասէ որ օր մը անոնց շահը պիտի պա-  
հանջէ, որ շատ ծանր է. վասն զի այն ատե-  
նը մանրամասնաբար պիտի ուզենայ մեզմէ  
հաշիւը՝ ոչ թէ ողորմութեամբ, այլ ար-  
դարութեամբ պիտի քննէ եւ հարցնէ : Յի-  
շենք Քրիստոսի խօսքը որ կըսէ. « Ամենայնի  
որում շատ տուաւ՝ շատ խնդրեցի ի նմա-  
նէ, եւ որում քաղում աւանդեցաւ՝ առա-  
ւել եւս պահանջեցեն ի նմանէ » : Ուրեմն



պէտք է Քրիստոսի սուրբ աւետարանին հետեւինք, եւ մեր ժամանակը ի դուր չանցընենք, մարմիններս ապաշխարութեամբ տանջենք, եւ հոգիներս առաքինութեամբ եւ ամենայն բարեգործութեամբ զարգարենք, որ կարողանանք Քրիստոսի առջեւ պարզերես համար տալ ահեղ դատաստանին ժամանակը: Չլինի թէ անապաշխար մնալով՝ չարագործութեամբ մտնենք այն ահեղ ատեանը, եւ չկարողանանք համարձակապէս համար տալ Քրիստոսի հրապարակին մէջ:



### Գ Լ Ո Ի Խ Ի Ձ.

Յ Ա Ղ Ա Գ Ս Ս Ի Բ Ո Յ Թ Շ Ն Ա Մ Ե Ա Ց.



Աստուածային մեծ եւ առաջին պատուիրանքն է թշնամին սիրել, դոր Քրիստոս Տէրն մեր ինքը սովրեցուց մեզի եւ ասաց թէ «Սիրեցէք զթըշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց». Ինքն ալ իրեն խաչահանուաց համար թողութիւն խնդրեց երկնաւոր Հօրէն ասելով. «Հայր թող դոցա, զի ոչ գիտեն

դինչ գործեն » : Մենք ալ օրինակ ունենալով աստուածային ներողամտութիւնը, պարտաւոր եմք ընդդէմ մեզի մեզանչող եղբարց ներել ի փառս Աստուծոյ ; որ մենք ալ աստուածային ներողութեանը արժանանանք . վասն զի այն ատենը Աստուած մեր մեզաց պարտքը կ'իծողու՝ երբոր մենք մեր պարտապանին պարտքը կամ մեղքը թողումք : Ինչպէս եղբայրսիրութեամբ մարդըս Աստուծոյ սիրելի կ'լինի ; այնպէս ալ եղբայրատեցութեամբ Աստուծոյ ատելի կը գառնայ : Քրիստոս հրամայեց մեզի միայն զգեւը ատել, եւ ոչ զքրիստոնեայն : վասն որոյ ուղղել պէտք է մեր սիրտը առ խաչեալն Յիսուս ; որ նորա նայելով անսխալալ լինիմք միշտ՝ եւ եթէ մէկի մը համար ոխ պահած լինիմք ; հեռացընեմք այն ոխը մեր սրտէն . եւ թէ ունիմք կարողութիւն ; բարեբարութիւն անեմք անոր՝ թէ մեզի չարահամութիւն արած ունի ; եւ ոչ թէ ատել զնա ; յիշելով Յովհաննու խօսքը , « Որ ատէ զեղբայր իւր , մարդասպան է » :

Շատ մարդիկ ի զուր ակզը մեծ հոգ եւ զբաղմունք կ'ունենան առեւտուրով եւ աշխարհային հեշտութեամբ . բայց հազիւ երբէք կ'գտնուի այնպիսի մարդ որ Քրիստոսի

վարքը եւ ճանապարհը օրինակ բռնելով  
կենցաղավարի աշխարհիս մէջ:


Իշխանաց պաշտօնեայքը ջանք կընեն  
միշտ որ իրենց տիրոջը հրամանը կատա-  
րեն. բայց մենք չենք խոնարհիր ամենեւին  
Քրիստոսի պատուիրանաց հետեւիլ եւ նո-  
րա հրամանը կատարել: Ափսոս մեզի որ  
մեր հոգւոյ կացութեան հոգ չունինք ամե-  
նեւին. ինչ պիտի պատասխանենք արդեօք  
դատաստանին օրը, կամ ինչպէս համար  
պիտի տանք Քրիստոսի: Քրիստոնեայ կա-  
նուանինք, բայց հեռի ենք քրիստոնէու-  
թենէ: Մկրտուեր ենք, բայց սատանայի գե-  
րի ենք դարձեր՝ ընդդէմ Աստուծոյ մեղան-  
չելով: Քրիստոսի խաչափայտովը կտարծե-  
նանք, բայց մարմնաւոր ցանկութեան կհե-  
տեւինք: Ի՞նչ կմնայ մեզի ընել այնուհե-  
տեւ, եթէ ոչ՝ սրտի մտօք Քրիստոսի վար-  
դապետութեանը հետեւիլ, որ մեր քրիս-  
տոնէութիւնը չկորսուի եւ յաւիտենական  
երանութեանը արժանի ըլլանք:



Գ Լ Ո Ւ Խ Ի Լ Է .

ՅԱՂԱԳՈ ՉԶԱՒԱՏԱՅՈՂԱՅ ԹԷ ԳՈՅ ՅԱՐՈՒԹԻԻՆ,

ՄԵՌԵԼՈՅ, ԵՒ ԴԺՈՒՔ ՄԵՂԱՒՈՐԱՅ.

 Ո մանք մարմնասէր եւ հեշտասէր մարգիկ, միայն անուամբ քրիստոնեայք, չեն հետեւիր Քրիստոսի վարդապետութեան, եւ կըսեն թէ չկայ յարութիւն մարգկան միւսանգամ, եւ ոչ գործոց հատուցումն : Բայց Հոգին սուրբ զանոնք ամօթ ըրաւ, եւ գրել տուաւ մարգարէից եւ առաքելոց եւ հայրապետաց, եւ հաստատեցին թէ կայ յարութիւն մեռելոց, եւ գործոց հատուցումն չարեաց եւ բարեաց : Եթէ չկայր յարութիւն եւ հատուցումն գործոց, ապա ինչո՞ւ Քրիստոս ինքը սուրբ Աւետարանին մէջ կըսէ թէ « եկեսցէ ժամանակ՝ յարում ամենեքին որք ի գերեզմանս կայցեն՝ լուիցեն ձայնի նորա եւ եկեսցեն արտաքս . որոց բարիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց, եւ որոց զչար արարեալ՝ ի յարութիւն դատաստանաց » . (Յովն. Ե, 28) :

Այլ եւ եթէ ըսեն ոմանք ի հեշտասէր մեղաւորաց՝ թէ մի վախնաք դժոխքէն, եւ քրիստոնեայն թէեւ մեղանչական լինի՝ դժոխք չխմաներ, գիտացէք որ այնպիսիքն կարապետ են դժոխոց, եւ սատանայն նոցա բերնովը կխօսի, որպէս զի ագէա եւ հեշտասէր մեղաւորները համարձակ մեղանչեն՝ առանց մտածելու Աստուծոյ ահը եւ երկիւղը:

Այնպիսի թերահաւատ մարդկանց ըսելու է թէ ո՛վ ողորմելիք, Քրիստոս եւ ամենայն սուրբերը կըսեն եւ կհաստատեն վկայութեամբ՝ թէ դժոխք կայ. ինչպէս կըրնան անոնք չկայ ըսել: Քրիստոս մէկ դժոխքը քակեց, Ադամ եւ ուրիշ նահապետները փրկեց. չարագործ մեղաւորաց համար ինչ շահ կամ օգուտ է այն՝ որ իրենց համար հաստատուն դժոխք կշինեն իրենց չար գործերովը:

Ապա ուրեմն ամէն օր եւ ամէն ժամ մըտածէ դժոխքի տանջանքը, որ ինչպէս դառն է եւ անտանելի. որպէս զի անով Աստուծոյ ահը եւ երկիւղը հաստատ մնայ սրտիդ մէջ, չարէն հեռանաս եւ բարեգործութեանց հետեւիս:

Վնայ մեղաւորաց որ ամենայն զգայարանք-  
ներով եւ բոլոր մարմնով անտանելի տան-  
ջանաց մէջ պիտի մնան, զրկուելով աստուա-  
ծային սուրբ անսութենէն, մինչգեռ ար-  
դարոց հանդիստ է եւ ուրախութիւն, տիւ  
եւ գիշեր չկայ որ ժամանակը չափեն:

Այն ատենը կմտածէ եղկելի մեղաւորը  
թէ սրբան կարճ է եղեր մարդոյն կեանքը.  
կմտածէ ժամանակը ապաշխարելու, ինչ  
օգուտ որ չապաշխարեց. կմտածէ որ կա-  
րող էր ազատիլ այն տանջանքներէն եւ  
չկամեցաւ. բարեգործութեան ժամանակը  
անցաւ, յաւիտենական տանջանաց մէջ  
մնաց:



Գ Լ Ո Ի Խ Ի Ը .

ՅԱՂԱԳՍ ԱՐԲԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԿՆԻՑ .



Ա մէն օր մտածէ արքայութեան փառքը զոր սուրբերը եւ արգարները կը վայելեն անտրտում ուրախութեամբ, որպէս զի այնպիսի մտածմունքներով քու կամքդ ալ շարժի, աշխարհիս ունայն վայելչութիւնները արհամարհեա եւ արքայութեան փառքին փափաքիս :

Այժմ աչքերդ վեր ձգէ եւ նայէ երկրների աստեղաց բազմութիւնը . ասով իմացիր թէ սրբան մեծ եւ պատուական է այն տեղը . եւ ետքը մտածէ այն տեղի բնակիչներուն պատուական վայելչութիւնը, որ ունին առողջութիւն՝ առանց տկարութեան, ազատութիւն՝ առանց ծառայութեան, գեղեցկութիւն՝ առանց տգեղութեան, անմահութիւն՝ առանց ապականութեան, հանգիստ՝ առանց աշխատութեան, խաղաղութիւն, առանց խռովութեան, իմաստութիւն՝ առանց տգիտութեան, ուրախութիւն՝ առանց տրտմութեան, եւ պատիւ՝ առանց անպատուութեան :

Տէր իմ Յիսուս Քրիստոս, կաղաչեմ  
զքեզ, թէպէտ ես անարժան եմ՝ չարա-  
չար մեղանչելովս, այլ քու աստուածային  
գթութեամբդ ներելով իմ մեղքերս, ար-  
ժանի արա զիս քու արքայութեան փառքը  
վայելել սրբոց հետ:

Յետ այսորիկ կմտածեմ սրբոց պարգե-  
ւը, որ Աստուծոյ շնորհիւր ունին այս չորս  
տեսակ պարգեւները. նրբութիւն, թե-  
թեւութիւն, անկրելութիւն եւ պայծառու-  
թիւն. եւ այս պայծառութիւնը այնքան  
մեծ կլինի որ ամէն մէկ սուրբերը արեգա-  
կի նման ճառագայթ կուտան:

Ուրեմն, սլ ամենագութ Տէր, կրկնեմ  
իմ աղաչանքս, աղերսելով առ քեզ՝ որ  
այնպէս ցանկալի տեղ պատրաստեր ես քը-  
րիստոնէից համար. ես ալ այսուհետեւ կը-  
խոտանամ վարքս փոխել եւ ուղղել ըն-  
թացքս, որպէս զի արժանի ընես զիս ալ  
քու արքայութեան ուրախութիւնը վայելել  
սրբոց եւ արդարոց հետ:





Գ Լ Ո Ի Խ Ի Թ .

ՅԱՂԱԳՍ ՓԱՌԱՅ ԱՐԲԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԿՆԻՑ .

Եթէ մեք ապաշխարելով մեզքերս , առաքինի վարքով անցընենք կեանքերնիս , եւ այնպիսի վիճակի մէջ վճարենք մեր կեանքը , յայտնի է որ ի հանդեձեալն ինչպէս երջանիկ պիտի ըլլանք . պիտի ունենանք այնտեղը իսկոյն ամենայն բարութիւնները անխառն ի չարեաց . պիտի վայելենք մեր հոգւոյն ամենայն բազմալին . պիտի զմայլինք ամենաքաղցր տեսութեամբ Աստուծոյ , Ամենօրհնեալ սուրբ Աստուածածնին , հրեշտակաց եւ ամենայն սրբոց հետ ընկերակցութիւն պիտի ունենանք . այնպիսի ցանկալի վայելչութեան մէջ պիտի ըլլանք որ անպատմելի է : Պօղոս առաքեալը միայն կարողացաւ անոր համար լուսութեամբ գրել թէ « Զոր ակն ոչ ետես , եւ ունկն ոչ լուաւ , եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ , պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց » :

Մեր մտածելով արքայութեան փառքը՝  
Չանանք մտքերուս մէջը յիշատակը գամել-  
այն ատենը կրնանք աշխարհիս բարութիւն-  
ները արհամարհել, եւ ամենայն վիշտ եւ-  
նեղութիւն արքայութեան սիրոյն համար  
տանիլ առանց տրտնջանաց: Կաւ մտածելով  
հարցընենք մեր անձին եւ ասենք թէ ո՞րն  
է արքայութեան յատկական ճանապարհը:  
Կպատասխանէ թէ երկու է, անմեղութիւն  
եւ ապաշխարութիւն: Անմեղութեան վիճա-  
կը կորուսեր ենք ի ձեռն մահու չափ մե-  
ղաց, եւ արքայութեան ճանապարհը փակեր  
ենք. վասն որոյ անհնար է անմեղութեամբ  
այնտեղը երթալ. իսկ միւս ճանապարհով՝  
այսինքն զլջմամբ եւ ապաշխարութեամբ  
կարող ենք երթալ արքայութիւն, այլ վնայ  
է մեզ եթէ չենք ապաշխարեր. բայց այս-  
քան գիտեմ որ մենք աշխարհիս նեղու-  
թիւններէն կփախչինք, եւ մարմնաւոր հեշ-  
տութեան կհետեւինք, Չանք կընենք միշտ  
հանգստութիւն փառք եւ պատիւ ունենալ:

Ափսոս մեր կուրութեանը որ աշխարհիս  
անցաւոր փառաց եւ պատուոյ հետ ըլլա-  
լով՝ անանց փառքը եւ պատիւը միտքերս  
չենք բերեր, եւ առաքինութիւն չենք  
վաստըկիր, որ չզրկուինք յաւիտենական


երջանկութենէն : Արդեօք մտքով խաւարած ենք որ կկամենանք արքայութիւն երթալ, բայց չենք կամենար անոր ճանապարհով երթալ, այսինքն առաքինութիւն եւ բարեգործութիւն ունենալ չենք ուզեր. եւ այսպէս կնամանինք այնպիսի խելագարի որ յօժարութեամբ կկամենայ քայլել, բայց չըկամենար սոքը շարժել : Արքայութիւնը, ինչպէս Քրիստոս կըսէ, կնամանի պատուական մարգարտի զոր Աստուած կկամենայ մեզի վաճառել, եւ անոր գինը շատ սակաւ կպահանջէ մեզմէն Աստուած : (Մատթ. ԺԳ, 45). այն է իրեն ամենայն օրէնքները պահել ճիշդ պահպանութեամբ՝ ինչ որ ի ձեռն մարգարէից առաքելոց եւ հայրապետաց աւանդեց : Ուրեմն մեծ յիմարութիւն է եթէ այսպիսի վաճառը կորսընենք. վասն զի այն քիչ դժուարութիւնը զոր մեր պէտք է կրեմք՝ աստուածային օրէնքները պահելու՝ մշտնջենաւոր չէ, այլ ժամանակաւոր է. բայց Աստուծոյ արքայութիւնը որ պիտի երթանք, այս քիչ գնովը պիտի ստանանք, այն յաւիտենական է : Ո՛վ երանելի վաճառ եւ երջանկաւէս վաճառականութիւն, որ այսպիսի ազբատ գնով հարստութիւն կգնուի :

Ո՛վ անիմանալի կշիռ, որ ժամանակաւոր բարեգործութեանց աշխատութիւնը յաւիտենական հանգստութեան հետ կկշռես: Վասն որոյ պարտաւոր ենք մեք ամէնքս ալ Աստուծոյ փառք եւ ջերմեռանդն դռհու-թիւն տալ որ այսպէս ժամանակաւոր քիչ ապաշխարութեան տեղը՝ մեզի մշանջենաւոր եւ յաւիտենական արքայութեան բարիքը կպարզեւէ, եւ է օրհնեալ յաւիտեանս ամէն:



### Գ Լ Ո Ի Խ Լ.

ՅԱՂԱԳՍ ԲԱՐԵԲԱՐՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ.

 Իմաստուններուն խօսքն է որ կրտսն՝ « Թէպէտ ամենայն առաքինութիւն սուրբ է, բայց երախտագիտութիւնը աւելի սուրբ լինելով՝ աւելի մեծ առաքինութիւն կհամարուի, եւ Աստուծոյ բարերարութիւնը ճանչնալն է »: Այս ստոյգ եւ ճշմարիտ վկայութիւն է. ինչպէս ահա Յուդա՝ թէպէտ Քրիստոսի աշակերտ կանուանէր, բայց նորա անհուն

բարերարութիւնը չճանչնալով՝ չկրցաւ երախտագիտութեան առաքինութիւնը ունենալ, այլ սիրեց երախտամոռութիւնը, որով իրեն Տէրը եւ սուրբ Վարդապետը ըզֆրկիչն աշխարհի մասնեց, ինքն ալ կորաւ յաւիտեան: Անոր համար պէտք է միշտ մարդս Աստուծոյ բարերարութիւնը չմոռնայ, եւ մտածէ առաջինը, թէ մարդս ինչ էր՝ եթէ ոչ հող եւ մոխիր. այլ այժմ հրեշտակաց հետ բանական է, անասնոց հետ զգայական է, բոյսերու հետ աճողական է. քարերու եւ փայտերու հետ զոյացութիւն ունի: Երկրորդ, մտածել պէտք է Աստուծոյ բարերարութիւնը՝ նորա պահպանողութեան վրայ. որ եթէ աստուածային խնամքը մեր վրայ չըլլար, մէկ րոպէ չէր կարողանայինք կենալ, ոչ շարժիլ կրնայինք, ոչ քայլել եւ ոչ բարի բան մը ընել: Կնկատենք արդեօք որ Աստուած զմեզ ստեղծելովը ինչ բարերարութիւն ըրաւ մեզի. երկինքը երկնայիններով եւ երկիրս երկրայիններով Աստուծոյ հրամանովը մեզի կճառայեն: Եթէ շատ մարդիկ թշուառութեան մէջ կգըտնուին, զանազան նեղութիւններ կը աշեն, մեծամեծ տառապանաց մէջ են, եթէ Աստուած զմեզ չպահէր, մենք ալ անոնց պէս

Թշուառութեան մէջ կմնայինք : Ո՛րքան կոյրեր կան , ս՛րբան մունճեր , խուլեր , կաղեր , ցաւազարներ , աղքատներ եւ չքաւորներ , որոնց մէջ մեք ալ պէտք էր ըլլայինք՝ եթէ Աստուած իրեն բարերարութեամբը չպահպանէր զմեզ :

Երրորդ , մտածել պէտք է մարդոյս Աստուծոյ բարերարութիւնը , որ զմեզ ուղղափառ եւ սուրբ հաւատոյ շնորհին արժանի բեր է՝ մեր հոգւոյն փրկութեանը համար : Արդեօք ինչ պէտք էր ըլլայինք՝ եթէ հեթանոսաց եւ աղանդաւորաց մէջ ծնէինք . ո՞չ ասլաքէն կորուսաւ էր մեզի : Այլ նա ծնաւ զմեզ ուղղափառ հաւատոյ մէջ , եւ սուրբ աւազանին միջնորդութեամբը որդեգիր ըրաւ զմեզ , եւ իրեն աստուածային շնորհօքը հարստացուց : Ուրեմն ամենայն մարդ պարտական է միշտ ուրիշի տարաբաղդութեան վրայ նայելով՝ Աստուծոյ բարերարութիւնը չմոռնալ , եւ փառք եւ գոհութիւն տալ իրեն առանց երախտամոռութեան : Օր մը երկու հարուստ մարդ ճանապարհ կերթային . հանդիպեցան երկու աղքատի , մէկը կաղ եւ կոյր , միւսը խուլ եւ մունճ : Ասացին աղքատներուն . « Եթէ մէկը ձեզի կատարեալ առողջութիւն տար՝ ինչ կպա-

տասխանէիք արդեօք նորա բարերարութեան տեղը» : Ասացին աղքատները թէ « Մենք կճառայէինք նորա քանի որ կենդանի ենք հաւատարմութեամբ եւ բոլոր սըրտիւ » : Այն ատենը դարձաւ մէկ իշխանը ասաց իրեն ընկերին . « Տես, Աստուած ինչպէս կպահպանէ զմեզ առողջ մարմնով եւ հարստութեամբ, որ մեր տունը լի է Աստուծոյ ամենայն բարութեամբը, ուրեմն պարտական ենք, ասաց, միշտ Աստուծոյ բոլոր սրտով ծառայել, գովել եւ փառաւորել զնա : Այլ մենք ապերախտ ըլլալով՝ չենք մըտածեր Աստուծոյ անհուն բարերարութիւնները . այնպիսի խեղճերը երբոր տեսնենք՝ մեր միտքը չենք ուղղեր, եւ աշխարհիս հեշտութեան մէջ ընկղմելով՝ մեր երկնաւոր բարերարը կմոռանանք » :

Այլ եւ պարտական ենք ասպագայ բարութեանց համար գոհութիւն տալ Աստուծոյ որ խոստացեր է ի հանդերձեալը շնորհել մեզ : Արիք, ո՞վ սիրելի եղբարք, ճանչնանք Աստուծոյ անհուն բարերարութիւնը եւ խրնամքը, եւ սկսինք հաւատարմութեամբ ուղիղ սրտով ծառայել, օրհնել եւ գովել սուրբ անունը . ըսենք միշտ Դաւթի մարգարէին խօսքը . « Օրհնեցից զՏէր յամե-

նայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն  
նորա ի բերան իմ» :



Գ Լ Ո Ի Խ Լ Ա.

ՅԱՂԱԳՍ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՆԳ ԶԳԱՅՈՒԹԵԱՆՑ.



Մարդկային հինգ զգայութիւնքը եւ  
խորհուրդը ի մանկութենէ սովորած  
են չարին : Անոնց մէջ աչքը աւելի  
մեղանչող է, եւ հարկ է պահպանել  
զայն՝ չարէ հեռացընելով :

Քրիստոս սուրբ Աւետարանին մէջ կխրա-  
տէ ամենայն քրիստոնէից բոլոր զգայու-  
թեանց եւ անգամոց պահպանութեան  
համար : Եթէ, կըսէ, աչքդ կամ ձեռքդ  
եւ կամ ոտքդ եւ կամ ուրիշ զգայութիւն-  
ներդ գայթակղեցուցանեն դքեզ, « Հան զնա  
եւ ընկեա ի քէն . դի լաւ է քեզ միով ա-  
կամք կամ միով ձեռամբ եւ ոտիւք մտա-  
նել յարքայութիւն երկնից, քան երկուս  
աչս կամ ձեռս եւ ոտս ունել եւ ի դժոխս  
երթալ » . այսինքն թէ կանսնես օր այս կամ



այն զգայութիւնը կամ անդամներդ քեզ  
կգայթակղեցընեն, հեռացուր զանոնք չա-  
րէ, աչքերդ անարատ պահէ, գայթակղե-  
ցուցիչ բանի վրայ մի նայիր, բերանդ  
բամբասանքէ անէ ծքէ բարկութենէ եւ ա-  
մենայն չար խօսքէ հեռացուր, անկաջդ  
չար լուր լսելէ, ձեռքերդ չարագործու-  
թենէ եւ ոտքերդ չար ճանապարհէ ազատ  
պահէ, սրտով եւ ամենայն ջերմեռանդու-  
թեամբ Աստուծոյ հետ եղիր. այն ատենը  
մեզքը քեզմէն հեռու կըլլայ, չկրնար բզ-  
քեզ որոգայթի մէջ ձգել :

Ա. չ. 1.

Ո՛վ որ աչքը չար բաներ տեսնելէ հեռու  
կողահէ, ազատ կմնայ մեզքէ. վասն զի տե-  
սութեան զգայութիւնը ամէն զգայութեանց  
մէջ գերազանց է, եւ ամենէն շուտ եւ սաս-  
տիկ կվնասէ մեզանչելով. «Որ հայի ի կին  
մարդ, էրսէ Քրիստոս, առ ի ցանկանալոյ  
նմա, անդէն շնացաւ ի սրտի իւրում» :  
Աչքը մարմնոյն ճրագն է. պէտք է սուրբ  
պահել, գայթակղեցուցիչ բանի վրայ չը-  
նայիլ որ ցանկութիւն չընէ :

Ա. կ. ա. ճ. 1.

Ականջն ալ չարը լսելու շատ մօտիկ է .

վասն որոյ զգուշութեամբ պահելու է, զի միշտ բաց է, եւ փակ չունի աչքի նման, ոչ թէ միայն մէկ կողմէն կլսէ, այլ ամէն կողմէ: Դարձեալ ականջը աւելի պէտք է մեղքէ պահուի, վասն զի ականջով շատ կը մեղանչէ մարդս, բամբասանք ստախօսութիւն, բանսարկութիւն եւ ուրիշ շատ անիրաւութեան խօսքեր կլսէ. բայց պէտք է պահպանել մաքրութեամբ՝ որ միայն բարի խօսքեր լսելու ցանկութիւն ընէ:

Հ ո Տ Ո Տ Ե Ղ Ի Բ .

Քահանայն երախային գրոշմ տալու ատենը մեռնով երբոր հոտտելիքը, այսինքն քիթը կգրոշմէ, կըսէ. «Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի եղիցի քեզ հոտ անուշութեան կենաց ի կեանս», այն սուրբ անուշահոտութիւնը մտքերս բերելով՝ աշխատինք այնպիսի ցանկալի հոտեր առնուլ, ինչպէս խնկոյ, զմռոյ, եւ այլ զանազան ծխանելեաց՝ որ եկեղեցւոյ մէջ կդանուին, եւ ոչ թէ փոխանակ ասոնց՝ հեշտական հոտերու ցանկանալ:

Ճ ա շ ա կ Ե Ղ Ի Բ .

Ճաշակելիքը հարկաւոր է սուրբ եւ մաքուր պահել: Մարդս եթէ կերակուրը մի-

այն հեշտութեան համար ուտէ, մեծ մեղք կգործէ, եւ հոգեւոր եւ մարմնաւոր մահու կհանդիպի. քանզի մտածել պէտք է թէ ճաշակելով մահ մտաւ աշխարհս, եւ ամէնքս ալ անով մահացանք, միայն խոստովանութեամբ եւ ջերմեռանդն ապաշխարութեամբ կարող ենք փրկուիլ. ուստի պէտք է մեր ճաշակելիքը մաքուր պահել եւ չպղծել, զի բնակարան է Քրիստոսի:

Պ ա հ պ ա ն ու ը ի ռ ն շ ե գ ու ը ի .

Երանելին Դաւիթ կխրատէ զամենայն մարդ ասելով. « Լուեցն զլեզու քո ի չարութենէ, եւ շրթունք քո մի խօսեսցին զնենգութիւն »: Մարդոյս բարի կեանքը լեզուին պահպանութենէն առաջ կուգայ: Աստուած զմարդն լեզուաւ ուրիշ կենդանիներէն աւելի մեծարեց. վասն զի բաց ի մարդէն Աստուած մէկ ստեղծուածոյն լեզու չտուաւ. ապա սրբան ապերախտութիւն է լեզուն չարաչար ի կիր առնուլ:

Լեզուն ամենայն բարութեանց եւ առաքինութեանց պատճառ է՝ եթէ մաքուր պահպանուի. եւ նախ գործիք է բնականութեամբ վարուելու: Երկրորդ՝ լեզուն որ պահուի՝ հոգին ալ կը պահուի. եթէ լե-

դուն չպահօւի, հոգին ալ չպահօւիր, այլ կորուսա է. վասն զի անպարիսպ քաղաք է, առանց դռուի տուն է, անխուփ աման է. ձի է առանց սանձի եւ նաւ է առանց ղեկի (սիւմենի): Եթէ չպահպանուի լեզուն, շատ չար է եւ մահաբեր, եւ հօւր է ամենայն անօրէնութեան. վասն զի անով ամենայն մեղք կհատարուին, խիտա զօրեղ է վնասելու եւ ծանր կխոցուէ: Երրորդ, լեզուի պահպանութենէն մեծ օգուտ կլինի, զի առանց անոր պահպանութեանը չկրնար մարդ բարի ըլլալ: Թէպէտ եւ կրօնաւոր ըլլայ, եթէ լեզուն չպահպանէ՝ ի զուր է կրօնաւորութիւնը անոր: «Մահ եւ կեանք ի ձեռն լեզուի է» կըսէ սուրբ գիրքը. եւ Քրիստոս տէրն մեր կհաստատէ, «Ի բանից քոց արդարացիս, եւ ի բանից քոց պարտաւորեցիս» (Մատթ. ԺԲ. 37). ով որ խօսքով չմեղանչեր՝ նա է կատարեալ մարդ: Իմաստուն մարդը ժամանակին լուել կսիրէ:

Չորրորդ՝ ամենայն մարդ պէտք է գիտնայ իւրաքանչիւր մարդու հետ խօսիլ. զգոյշ կենայ որ լեզուաւը չբամբասէ. վասըն զի լեզուէն առաջ կուգայ ամենայն մեղք. հայհոյութիւնք, բամբասանք, սուտ վկայութիւնք, սուտ երգումն եւ այլն. «Ա-

սացի թէ պահեցի զճանապարհս իմ, զի մի մեղայց լեզուաւ իմով » :

Ամէն ժամանակ աղօթք ընելով՝ Աստուծոյ շնորհքը խնդրել պէտք է, եւ լեզուին ու բերանին պահպանութիւն մաղթել Դաւթի մարգարէին խօսքովը. « Դիր տէր պահպան բերանոյ իմոյ, եւ գուռն ամուր շըրթանց իմոց, զի մի խտտորեացի սիրտ իմ բանիւ չարութեան » :

Լուութիւն սիրել հարկաւոր է միշտ. ինչպէս Քրիստոս անմռունչ կեցաւ եւ չպատասխանեց Պիղատոսի եւ Հերովդէի առջեւը: Եթէ մարդս չզգուշանայ չար խօսքերէն, չկրնար սատանային յաղթել: Լուութիւնը խաղաղութիւն է, իմաստութեան նշան է. յիմարը եթէ լռէ, իմաստութիւն կհամարուի. ուրեմն գովելի է շատ լեզուի պահպանութիւն ունենալ, եւ լուութեամբ համբերել մեր հոգւոյ փրկութեան համար:



Գ Լ Ո Ի Խ Լ Թ.

ՅԱԴԱԳՍ ՄՏԱՆՄԱՆ ՄԵՂԱՅ.

Դաւիթ մարգարէն ճանչնալով իրեն մեղքը, եւ մեծապէս հոգ ընելով կը սէր. «Եւ ես հոգացայց վասն մեղաց խմոց:» Մենք ալ որովհետեւ մեղանչական ենք, միշտ հետեւելով նոյն մարգարէին հոգացողութեանը պարտաւոր ենք ամէն ժամանակ մտածել մեր մեղքերը, եւ հոգ ընելով ատել աշխարհիս հեշտասիրութիւնը եւ ցանկութիւնը՝ որ մեղաց պատճառ են մարդոյս:

Մեղքը անարգանք է առ Աստուած. ահոր համար Հայրն երկնաւոր դանկատելով մեղաւորներէն կըսէ. «Որդիս ծնայ եւ բարձրացուցի, եւ նոքա զիս անարգեցին» . (Եւայի, Ա. 1, 2): Ամբարիշտները կ'մեղանչեն ատելով թէ՛ Աստուած բարի է եւ երկայնամիտ է, չպատժեր զյանցաւորն. այսպէսով կուշանան մեղքի մէջ, եւ միշտ կ'նորոգեն իրենց մեղքերը առանց ապաշխարելու:

Ով որ մեզան չեղէն յետոյ Աստուծոյ ողորմութեանը կգիմէ ապաշխարելով, այնպիսին Աստուծոյ ողորմութեամբը կընդունի թողութիւն, եւ մշտնջենաւոր երանութեան արժանի կլինի. իսկ ով որ Աստուծոյ ողորմութեանը գիմելէն յետոյ միւսանդամ մեզան չէ, այնպիսին կուզէ որ Աստուծոյ ողորմութիւնը իրեն մեղաց գործակից չըլինի :

Մեզաւորը թէպէտ կհաւատայ Աստուծոյ ամէն տեղ լինելուն, բայց չվախնար, կանարգէ զնա լրբարար եւ նորա աչքին առջեւ չարաչար կմեզան չէ :

Մեզաւորը թող մեզան չէր՝ եթէ այնպէս տեղ գտնէր ուր Աստուած զինքը չիտեսնէր : Թագաւորին մէկը զինուորները կըամբաստէին. իշխանին մէկը ասաց անոնց. « Եթէ ձեր թագաւորը կըամբաստէք, հեռացիք աստէղէն որ թագաւորը չտեսնէ » : Անոնք տեղ կգտնէին իրենց թագաւորը բամբաստելու, որովհետեւ նա երկրաւոր թագաւոր ըլլալով՝ ամէն տեղ չգտնուիր. իսկ մեզաւոր մարդը ուր պիտի գտնէ այնպէս առանձին տեղ որ Աստուած իրեն չարարանութիւնը չլսէ, եւ անօրէնութիւնը չտեսնէ : Եթէ առն մէջ մեզան չէ, տունին պա-

տերը կաղաղակեն ասելով. քեզ պարկեշտօրէն բնակութեան համար Աստուած զմեզ կառուցեր է: եթէ բուրաստանի կամ պարտէզի մէջ մեղանչէ, ծաղիկները կամ ծառերուն պտուղները կաղաղակեն թէ Աստուած զմեզ քեզի վայելչութեան եւ ճաշակելու համար ըրաւ. եթէ ծովուն մէջը մանէ մեղանչելու, ձկները կաղաղակեն դանդառելով. եթէ ցերեկը մեղանչէ, արեգակը կաղաղակէ. իսկ եթէ գիշերը՝ լուսինը եւ աստղերը կաղաղակեն. ուր որ երթայ՝ Աստուած հոն է. թող գանէ մեղաւորը այնպիսի տեղ որ Աստուած չլինի, հրաման է մեղանչելու:

Աշխարհիս մէջը չկրնար մարդ մը դատաւորի առջեւ մեղանչել. բայց մեղաւորները գիտնալով երկնաւոր թագաւորին առջեւ կմեղանչեն չարաչար. չեն վախնար եւ չեն ամացեր Աստուծմէ, ուստի կգանդատի Աստուած ասելով՝ «Ի բարկութիւն շարժեն զիս առաջի երեսաց»: Գաւիթ մարգարէն լաւ կճանաչէր իրեն մեղքը, վասն որոյ կապաշխարէր, եւ ցաւագին սրտով կըսէր. «Քեզ միայն մեղայ տէր, եւ չար առաջի քո արարի»:

Տես ինչպէս ասերախա է մեղաւորը՝



անապատի չար գաղանները, անբան անասունները երախտիք գիտեն՝ իրենք թէպէս չար են, բայց իրենց բարերարութիւնընտաներուն բարիք կհասուցանեն, կամ կըծառայեն, եւ կամ ուրիշ բանով իրենց սարսքը կվճարեն. չգիտեմ թէ մեղաւոր մարդը ո՞ւմ կնմանի:

Մեղաւորը իրեն անօրէնութեամբը կըրկին կխաչէ զՔրիստոս, ինչպէս ինքը Քրիստոս կըսէ. երբօր քրիստոնեայք իրենց գըլուխը կըբարձրացընեն՝ հպարտութեամբ, իմ գըլուխ փշով կպտակին. երբօր ձեռքերը եւ ստըերը չարութեան կգործածեն. իմ ձեռքերս եւ ստըերս գամերով կգամեն. երբօր անյագ օրկրամուլութեամբ կամ արբեցութեամբ կուտեն կխմեն, ինծի քայախ եւ լեղի կխմցընեն. երբօր սրտերուն մէջ աշխարհիս սէրը եւ մարմնոյ հեշտութիւնը կընակի, իմ կողս կրկին կպատառեն: Քրիստոս ամենայն չարչարանք Հրեաներէն յօժարութեամբ յանձն առաւ մարդկային ազգի փրկութեան համար. բայց ինչ չարչարանք կամ տանջանք որ մեղաւոր քրիստոնեաներէն կըբաշէ, կարելի է ըսել թէ ակամայ է, որովհետեւ իրեն կամքին ընդդէմ է:



Գ Լ Ո Ի Խ Լ Գ.

ՅԱՂԱԳՍ ՆԵՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՎՇՏԱՅ.

Աստուած վիշա եւ նեղութիւն կուտայ մեզի երբեմն՝ մեր միտքը ուղղելու համար. վասն զի միայն աշխարհիս յաջողութիւնը եւ երջանկութիւնը զԱստուած եւ զյաւիտենական կեանքը մտնալ կուտան: Եթէ վիշաը եւ նեղութիւնը աշխարհիս երջանկութեան հետ չէր խառնած, մեք զԱստուած կմոռնայինք բոլորովին: Անոր համար Աստուած ամենաբարին՝ որովհետեւ գթած է եւ ողորմած, տեսնելով մեր մոլորիլը ուղիղ ճանապարհէ, վշտով եւ նեղութեամբ կսանձահարէ զմեզ, եւ նեղութեան դաւազանովը խրատելով՝ բարի ճանապարհ կձգէ: Ուրեմն Աստուծոյ խտուրտեամբ վարուիլը, եւ մեղաւորաց թոյլ չտալը իրենց փափաքին հասնելու եւ խկոյն վրէժ առնուլը, նորա մեծ բարեբաբութեան նշանն է:

Ագահք զԱստուած եւ իւր հօգին մտցեր է. իղձը եւ ցանկութիւնը բոլորովին սակիին եւ արծաթին համար է. Աստուած

անոր ձախարհութիւն տալով՝ կվերցընէ վր-  
րայէն հարստութիւնը, որ երկնային դան-  
ձը խնդրէ ապաշխարութեամբ եւ առաքի-  
նական գործքերով: Ասոր յայտնի օրինակ  
ունիմք անառակ որդին, որ իրեն կամքին  
հաւնելով՝ հեռացաւ հօրմէն, դնաց օտար  
երկիր եւ ինչպէս ինքը կը փափաքէր՝ այն-  
պէս կենցաղավարեցաւ, եւ ինչ որ ունէր  
վասնեց ամէնն ալ: Ո՞վ արդեօք զնա իրեն  
հայրենի տունը դարձուց, եթէ ոչ նորա  
աղքատութեան տառապանքը, ինչպէս որ  
խոստովանեցաւ ինքը ասելով. Մինչեւ երբ  
այստեղը սովամահ մեռնիմ. երթամ, ք-  
սաւ, հօրս տունը, ստքը ընկնիմ, մեղայ  
ըսեմ, գտնէ վարձկանի մը տեղ կնդունի  
զիս: Այս առաջադրութիւնը ոչ թէ սի-  
րով ըրաւ, այլ քաղցածութիւնը, մերկու-  
թիւնը եւ աղքատութիւնը զինքը իրեն տու-  
նը դարձուցին: «Բարի է ինձ, կըսէ Դա-  
ւիթ, զի խոնարհ արարեր զիս»:

Աստուած ամենաբարին որսորդի կնմա-  
նի. որսորդը երբ կամենայ որս բռնել, նեա  
կձգէ որ չկարողանայ որսը փախչիլ. անով  
կբռնէ՝ ձեռք կձգէ: Այսպէս Աստուած երբ  
կտեսնէ մեղաւորը իրմէն փախած, նորա  
դէմ կձգէ զօրեղ նեաեր, այսինքն դանա-

զան նեղութիւնք եւ վիշտք . անսնցմալ Աստուած իրեն կրօշէ զմեղաւորը :

Մեղաւորը սրբան նեղութեան մէջ մնայ, այնքան մեղքէ հեռու կըլլայ, եւ խոնարհութեամբ զԱստուած կաղաչէ, աղօթք կընէ որ իրեն օգնէ . վասն զի երբ յաջողութեան մէջ էր՝ զԱստուած մոռցեր էր . ինչպէս Դաւիթ կաղաղակէ . «Ջնեղութիւն եւ զանձկութիւն գաի, եւ զանուն Տեառն կարգացի » :

Վիշտը եւ նեղութիւնը օգտակար են՝ անցեալ մեղաց թողութիւն գտնելու, ներկային փառքը եւ շնորհքը ընդունելու համար, եւ ապագայ արքայութիւնը ժառանգելու համար : Ուստի այնպէս հաւատանք որ վիշտը եւ նեղութիւնը Աստուծմէ կուգան մեզի . թէպէտ մարդիկ կնեղեն զմեզ, բայց Աստուծոյ հրամանովը կընեն . վասն զի Աստուած կուզէ անսնց ձեռքովը նեղացնել զմեզ :

Ուստի մեղադրելի են անսնք որ կմեղադրեն իրենց նեղութիւն տուող մարդիկը : Այնպիսիները կնմանին այն շներուն՝ որ երբ քար ձգես, զքարը կխածտան . չգիտեն թէ մարդը որ քարը ձգեց՝ նա է պատճառը իրենց վնասուելուն, եւ ոչ թէ

քարը : Այլ եւ կնամանին այնպիսիները ա-  
նոնց՝ որ զգահիճը կմեղագրեն՝ որ դատա-  
ւորի հրամանով զյանցաւորը կտանջէ՝ չեն  
մտածեր թէ գահիճը չէ տանջանքին պատ-  
ճառը, այլ դատաւորը՝ որ դահճին կըհրա-  
մայէ տանջել զյանցաւորը : Ուրեմն հաս-  
կընալ պէտք է որ մարդ մը կարող չէ ա-  
ռանց Աստուծոյ կամքին մէկուն վնասել :  
Այս ճշմարտութիւնը Քրիստոս սորվեցուց  
մեզի : Հրեայք՝ որ զինքը կչարչարէին եւ  
կտանջէին, եւ աշակերտները ջանք կընէին  
նորա չարչարանքը եւ մահը խափանել,  
ասաց. «Բաժակը որ իմ Հայրս տուաւ ինձ՝  
չէք կամենար որ խմեմ» : Անոր համար  
պէտք է հաւատալ թէ Աստուած որ զմեզ  
կնեղէ, այնքան մեզի սէր ցոյց կուտայ՝  
որքան մեծ է մեր նեղութիւնը : Անստելի  
է Հոգւոյն սրբոյ խօսքը. «Զի զոր սիրէ  
տէր՝ խրատէ, տանջէ զամենայն օրդի զոր  
ընդունի» : (Եբրայ. ԺԲ. 6) :



Գ Լ ՈՒԽ ԼԳ.

Յ Ա Ղ Ա Գ Ս Ա Ղ Օ Ք Ի Յ.

**Ա**ղօթքը մարդուս աստուած սիրու թեան  
անդրանիկ ծնունդը կանուանի : Չը-  
կրնար մէկը իրեն անձը անմեղադիր  
ընել՝ եթէ զանցառու թեամբ աղօթք  
չընէ : Ամէն ժամանակ եւ ամէն տեղ՝  
ինչ վիճակի մէջ ալ ըլլայ մարդս, թէ  
առողջ եւ թէ հիւանդ, կարող է մաքին  
մէջ զԱստուած ունենալ, փառաւորել զնա,  
գովել եւ օրհնել. եւ այս խի աղօթք  
ընել է : Առաջ պէտք է Աստուծոյ փառքը  
եւ մեծութիւնը միտքը բերէ, գովէ եւ  
օրհնէ զնա, գոհանայ եւ շնորհակալ ըլլայ  
նորա անբաւ երախտեացը եւ բարերարու-  
թեանը համար : Երկրորդ, մեր նուաստու-  
թիւնը եւ սարտականութիւնը ճանչնալ,  
որ պէտք է մեզի միշտ խոնարհութեամբ  
եւ զգաստութեամբ եւ երկիրդիւ Աստուծոյ  
ծառայել, որովհետեւ մեր արարիչ եւ բա-  
րերարն է : Երրորդ, մտածել պէտք է մեզի  
մեր մեղքը եւ ապերախտութիւնը, որով

ընդդէմ Աստուծոյ մեծութեանը կմեղան-  
չենք :

Զորքորդ, մտածել Աստուծոյ երկայնմը-  
տութիւնը, եւ նորա գթութիւնը, որ մեր  
յանցանքին համեմատ չպատժեր զմեզ :  
Հինգերորդ, ի սրտէ զզջալ պէտք է եւ չը-  
մեղանչել, ապաշխարանաց լուծը քաշել, եւ  
մեղաց քաւութիւն եւ շնորհք խնդրել յԱ-  
ստուծոյ :

Աղօթքի սկիզբը պէտք է մեր միտքը  
միշտ ամփոփ պահել, եւ զգայարանքներուս  
դռները փակել արտաքին առարկայից դէմ.  
մաքին մէջ մէկ հայցման նպատակ մը ու-  
նենալ, ամէն բանէ առաջ Աստուծոյ ողոր-  
մութիւնը խնդրել, որ մեզքերուս թողու-  
թիւն առնունք, եւ երկնային փառքը ժա-  
ռանդենք :

Աղօթքներուն մէջ չկայ գերազանց ա-  
ղօթք քան զՀայրմերը, զոր Տէրն մեր Յի-  
սուս Քրիստոս ինքը սօրվեցուց. յետոյ  
Սաղմոսը, զոր Գաւիթ մարգարէն Հոգւոյն  
սրբոյ ազգամամբը գրեց. ապա եկեղեցական  
աղօթքներ եւ երգեր, զոր սուրբ հարք Հոգ-  
ւոյն սրբոյ շնորհօքը խորհրդաբար կարգե-  
ցին : Թէպէտ շատ աղօթքներ կան, այլ մեր  
ազգին մէջ սուրբ Գրիգոր նարեկացւոյն ա-

ղօթքի մատեանը արեգակի նման կըփայլի : Ազգու է եւ պարզ Հաւատով խոստովանիմը , որ սրբոյն ներսեսի Շնորհալոյ գրածն է , եւ ամէնքը պարտաւոր են սորվիլ , եւ անով աղօթք ընել առ Աստուած ուր որ գտնուին :

Կան մարդիկ որ չեն կրնար հասուլինել աղօթքի խօսքերուն իմաստին . անոնք թող չյուսահատին . միայն աղօթք ընեն հաւատով՝ յուսով եւ սիրով : Աստուած որ մարդուն ամենայն խորհուրդը գիտէ , կիմանայ եւ կընդունի աղօթողին խընդրուածքը , ամէն մէկուն ջերմեռանդութեան եւ բաղձանացը համեմատ շնորհք կուտայ , եւ խնդրուածքը կկատարէ :

Աղօթքը կլինի առանձնական եւ հրապարակական : Առանձնականը ո՛ր ժամանակ ալ լինի՝ կընդունի Աստուած . բայց աւելի ընարելի է գիշերային ժամանակը կամ առաւօտուն կանուխ , որ քնէն զարթի մարդըս , պէտք է աղօթքի կանգնի առ Աստուած , եւ գոհանայ նորա բարեգթութեանը համար , որ խաղաղութեամբ առաւօտու ժամուն հասուց . եւ խնդրէ աստուածային մարդասիրութեանէն որ առաջիկայ օրը առանց մեղքի՝ անխորձ եւ խաղաղ անցընէ :



Այնպէս ալ երեկոյին պէտք է աղօթք ընել առ Աստուած, եւ սուրբ խաչին նշանովը տեառնագրել երեսը. սուրբ Աստուածածնայ, հրեշտակներուն եւ սուրբերուն բարեխօսութիւնը խնդրէ եւ ապա քուն լինի:

Ծնողք, խոստովանահարք եւ ուսուցիչք պարտական են անչափահաս տղայքը կրթել՝ որ անոնք իրենց տղայական ժամանակէն ի վեր ոչ միայն աղօթքը, այլ եւ աղօթք ընելու կարգը, ժամանակը եւ բարեձեւութիւնը:

Աղօթքը որովհետեւ մտաց վերացումն է առ Աստուած, աղօթք ընելու ժամանակը պէտք է որ մարդուս միտքը ամենայն աշխարհային անարժան մտածմունքներէ հեռի մնայ, եւ կամքը բարի յօժարութիւն ունենայ:

Մտաց դիտաւորութիւնը եթէ աղօթքին ընկեր չլինի, լեզուն եւ բերանը ի զուր կշարժին. անպտուղ աշխատութիւն է առանց մտադրութեան աղօթքի կենալը:

Մարմնական տրամութիւնը եւ աշխարհիս հոգը՝ աղօթքի զօրութիւնը կխափանեն եւ անպտուղ կընեն. այլ տրամութիւնը որ մեզաց համար լինի զըջացեալ սրտով, աղօթքի զօրութիւն կուտայ եւ աղօթողը

արգիւնաւոր շնորհք կստանայ յԱստուծոյ :

Աղօթքը իբրեւ գեազան կամ աղաչաւոր հրեշտակ եւ միջնորդ է առ Աստուած . շատ ընդունելի է եւ զօրաւոր . երբոր համօրէն եկեղեցիէն խրկուի առ Աստուած , որ հրապարակական աղօթք կըսուի : Այն աղօթքը որ եկեղեցւոյ մէջ լինի բազմութեամբ ժողովրդոց՝ առանձնականէն աւելի նախապատիւ է , եւ խիստ օգտաւէտ , ըստ որում աղօթքի յատուկ տեղը եկեղեցին է , եւ այն տեղը ամենուն սիրտը եւ կամքը՝ Աստուծոյ փառաբանութեան մէջ միացած՝ երկնային փառաբանչաց նմանութիւն ունին . ուստի պարտաւոր են ամենայն հաւատացեալք անխափան եկեղեցի երթալ , հասարակ ժամերգութիւն լսել , ոչ թէ միայն տէրունական եւ հանգիստաւոր օրերը , այլ թէ հնար է ամենայն օր . վասն զի մէկ զօրաւոր պատճառ չունեցողը կանոնադրեալ ժամանակին որ եկեղեցի չերթայ , նա առանց մեղքի չկրնար մնալ , մանաւանդ եթէ սուրբ պատարագ կմատուցուի :

Առանձնական աղօթքը թէպէտ շատ հարկաւոր է , բայց պէտք է առաջ հրապարակականը կատարել եկեղեցւոյ մէջ , եւ ապա առանձնականը : Եթէ մէկը ծուլութեան

պատճառաւ եկեղեցի չգնայ, եւ առանձնական աղօթքով միայն յուօայ մեղքերէն ազատիլ, շատ անգամ կխարուի. եթէ կայ եկեղեցի, եւ կրնայ ինքը երթալ, զանց առնելովը կմեղանչէ չարաչար:

Ինչպէս կերակուրը մարդուս մարմնոյն սնունդ է, այսպէս աղօթքն ալ հոգւոյ սնունդ է. ապա ինչպէս կերակրով մարմինը կերակրուի, այնպէս ալ ամենայն օր պէտք է հոգին կերակրել աղօթքով. ապա թէ ոչ, հոգին կնուազի, կհիւանդանայ եւ կամ կըմեռանի:

Աղօթք ընողը պէտք է այնպէս ճանչնայ որ ինքը Աստուծոյ առջեւ կանգնած՝ հետը կխօսի. վասն որոյ զգոյշ կենալ հարկաւոր է որ անարժան բաներ չմտածէ եւ չխօսի:

Աղօթքը որ ջերմեռանդ սրտով լինի, խոնարհ հոգւով եւ մաքուր մտքով, ոչ միայն աշխարհիս զանազան փորձանքներէ կազատէ զմարդ, այլ եւ Աստուծոյ շնորհքը կաճեցնէ հոգւոյն վրայ. որով կկարողանայ մարդս օր ըստ օրէ առաքինական աշխատութեանց մէջ արիանալ եւ կատարելութեան ծայրը հասնիլ:

Աղօթքը այնքան հարկաւոր է փրկութեան համար, մինչ զի առանց աղօթքի

մէկ մը չկրնար փրկուիլ, որովհետեւ մեր ամենայն բարեգործութիւնները աղօթքով կարդիւնաւորին, եւ Աստուծոյ շնորհքովը մեզի յաւիտենական կեանք եւ փրկութիւն կպարգեւին: Աստուծոյ շնորհքն ալ մեզի աղօթքով կպարգեւի. «Խնդրեցէք եւ տացի ձեզ, հայցեցէք եւ դառնիք» . (Մատթ. և, 7):

Աղօթքի մէջ խնդրել հարկաւոր է ամէն բանէ առաջ իրեն համար արքայութիւն, ուրիշ բաները՝ որ երկնից արքայութիւնը ստանալու համար չեն կամ արքայութեան չեն վերաբերիր՝ խնդրել հարկ չէ: Եթէ մէկ մարդ մը կեանք կամ իմաստութիւն կամ զաւակ եւ կամ հարստութիւն խնդրէ, մտքին մէջը թող գնէ որ անոնցմով Աստուծոյ ծառայէ. ինչպէս, կեանք խնդրէ որ ապաշխարէ. իմաստութիւն, որ չսխալի եւ մեղքի մէջ չմնայ. զաւակ, որ գնա Աստուծոյ ծառայ ընէ. հարստութիւն՝ որ աղքատաց եւ կարօտելոց ողորմութիւն ընէ:

Աղօթքը միշտ եւ ամէն ժամանակ առ Աստուած պէտք է լինի. իսկ հրեշտակները կամ սուրբերը աղաչելը թէպէտ պէտք է, բայց որովհետեւ նորա ալ առանց Աստուծոյ հրամանին չեն կրնար օգնութիւն

ընել, անոնց միայն բարեխօսութիւնը պէտք է խնդրել առ Աստուած :

Ով որ աղօթք չընէ՝ Աստուծոյ խնամքէն եւ օգնականութենէն զուրկ կանայ. եթէ արդար է, իրեն արդարութիւնը կկորսընէ. վասն զի աղօթքը Աստուծոյ շնորհաց մէջ կպահէ զմարդ, եւ եթէ մեղաւոր է՝ չկրնար մեղքէ ազատիլ եւ արդարանալ, վասն զի աղօթքով կպարզեւի զլիցման շնորհքը :

Աստուած թէպէտ կշնորհէ մեզի ինչ բանի որ կարօտութիւն ունինք, այլ կկամենայ որ մենք ալ աղօթքով խնդրենք զանք, որպէս զի յայանուի Աստուծոյ բարերարութիւնը եւ գթութիւնը առ մեզ, եւ մեր կարօտութիւնը առ նա :

Աղօթքը զէն անպարտելի է ընդդէմ դիւտոց. վասն զի դեւերը գիտեն որ մարդիկ աղօթքով կյաղթեն իրենց. անոր համար աւելի ջանք կընեն զմարդիկ աղօթքէ եւ ուրիշ բարեգործութիւններէ խափանել. նեղութեան եւ ծանրութեան պատճառներ կղնեն սրտին մէջը, եւ ազգի ազգի չար խորհուրդներ կձգեն միտքը, որ աղօթքէ արգիլեն եւ անպտուղ թողցնեն : Ուստի երբ որ մէկուն աղօթքը ըրած ժամանակը վրան

Նեղութիւն եւ ճանձրութիւն գայ, թող  
հասկընայ որ դեւերուն որոգայթն է, ամե-  
նեւին թող չթուլանայ, այլ աւելի զօրանայ  
օգնութիւն խնդրելով յԱստուծոյ. վասն զի  
Աստուած անոնց մօտիկ է՝ որ բեկեալ սըր-  
տով կգիմեն իրեն. իսկոյն կհասնի նոցա  
օգնութեան. դեւերը այն տեղէն կհալածին  
եւ կչքանան:

Շատ անգամ Աստուած մեր խնդիրը չը-  
կատարելով՝ աւելի կողորմի մեզի՝ քան թէ  
կատարելովը. վասն զի անգիտութեամբ  
վնասակար բան որ խնդրենք, կարծենք թէ  
բարի է. երբոր Աստուած չկատարեր մեր  
այնպիսի խնդիրը, մեծ ողորմութիւն կընէ  
մեզի: Ասլա պէտք չէ տրտմիլ եւ տրանջալ  
եւ ասել թէ Աստուած մեր խնդրուածքը  
չկատարեց. այլ ուրախ սրտով Աստուծոյ  
ապաւինիլ. վասն զի միշտ մեր օգուտը կը-  
կամենայ նա, եւ իրեն բարերարութեամբը  
կպարգեւէ ինչ որ մեզի հարկաւոր է: Աս-  
տուած երբեմն անոր համար ալ կուշացընէ  
տալը ինչ որ մարդիկ կխնդրեն՝ որ պար-  
գեւաց յարգը ճանաչեն, եւ ինչ որ առ-  
նուն՝ անկորուստ պահեն. վասն զի սովոր են  
մարդիկ առանց աշխատութեան ստացած-  
ները անհոգութեամբ կորսընել:

Իմաստնոց եւ կատարելոց աղօթքը իբրեւ չափահաս մանկանց աղաչանք է. իսկ ռամկաց եւ տկարաց աղօթքը՝ իբր փոքր տղայոց լացն է: Ինչպէս ծնողք երբեմն չափահաս տղայոց խնդրուածքը զանց կառնեն կամ ուշ կկատարեն, փորձով գիտնալով անոնց արիութիւնը եւ քաջութեամբ համբերելը, իսկ փոքր զաւակաց խնդիրը շուտով կկատարեն՝ գիտնալով անոնց անհամբերութիւնը. այսպէս Աստուած ալ երբեմն կանուխ եւ երբեմն ուշ կկատարէ իրեն ծառաներուն խնդրուածքը, եւ քաջ գիտէ տալ հարկաւորը եւ վայելուչը եւ տալու ժամանակը:

Ամէն ժամանակ պէտք է աղօթք ընել. ձախորդութեան մէջ պէտք է աղօթք ընենք՝ որ նեղութենէ ազատինք. յաջողութեան մէջ պէտք է աղօթենք՝ որ փորձութեան կամ վտանգի մէջ չընկնինք: Յաջողութեան մէջ եղած աղօթքը նախապահոյ գեղ է. ձախորդութեան ատենի աղօթքը առողջացրնող գեղ է. ուրեմն պարտաւոր ենք ամէն ժամանակ աղօթք ընել որ մեր կեանքը խաղաղութեամբ անցընենք: Աղօթքը շատ հարկաւոր է՝ աստուածային շնորհքը ընդունելու եւ խնդրուածքը առնելու համար, եր-

բոր աղօթքը ըստ օրինի եւ խնդիրը աստուածային կամաց համաձայն է, եւ խնդրողին անարժանութիւնը չար գելուր խնդիրին կատարուի:

Պէտք է առանձնական աղօթքի մէջ զԱստուած աղաչել քրիստոնէական սուրբ հաւատոյ պայծառութեան համար, եկեղեցւոյ հաստատութեան, ազգին եւ բոլոր աշխարհի խաղաղութեան, մեղաւորաց դարձի եւ զղջման համար՝ որ չկորսուին նոցա հոգիները: Իւրաքանչիւր հաւատացեալ պէտք է աղօթք ընէ ընկերին համար եւ ամենայն հասարակութեան, եւ այսպէս ամէնն ալ մէկմէկու աղօթքէ կշահուին:

Աղօթքին մէջ հարկաւոր է եւ օգտակար՝ սուրբերը բարեխօս ունենալ առ Աստուած, մանաւանդ զսուրբ Աստուածածինը. անոր համար սուրբ եկեղեցին իրեն ամենայն պաշտամանց մէջ արժանաւոր մաղթանքներ կարգեց առ սուրբ Աստուածածինը՝ նորա հզօր բարեխօսութեանը ապաւինելով: Եթէ յաջողութեան ժամանակ Աստուծոյ պատուիրանացը կլսէ մարգոս, Աստուած ալ նորա նեղութեան ժամանակը կլսէ. իսկ ով որ յաջող վիճակի մէջ ականջը փակելով՝ Աստուծոյ պատուիրանքէն



դուրս ելլէ, Աստուած ալ չլսեր անոր երբոր աղաղակէ նեղութեան եւ տառապանաց վտանգի մէջ եղած ժամանակը :

Շատ պատճառներ կան որ աղօթքին զօրութիւնը կխափանեն, եւ չեն թողուր որ խնդրուածքը կատարուի . ասոնք են մեղք, չար խորհուրդ, երկբայութիւն, անվայել խնդիր, խտտաբառութիւն՝ որով մարդ ուրիշի յանցանք ներել չուզեր, անգթութիւն, անհամբերութիւն : Ասոնց համար սուրբն Յակոբոս առաքեալ կըսէ. «Խնդրէք եւ ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք» (Յակ. Դ. 3) Ապա ով որ Աստուծմէ բարիք կխնդրէ, արդեւիչ պատճառները թող վերցընէ . իսկ եթէ պատճառը չբառնայ, խնդիրն ալ չկատարուի . այնպիսին զԱստուած պէտք չէ բամբասէ՝ իրեն աղօթքը չլսելուն համար, այլ իրեն անձին մեղագիր լինի՝ որ չարաչար խնդրեց :



Գ Լ Ո Ի Խ Լ Ե .

Յ Ա Ղ Ա Գ Ս Պ Ա Հ Ո Յ .

**Ա**ստուած երբոր Ազամն ու Եւայն ըստեղծեց, եւ գրախտին մէջ գրաւ, պահք պահել հրամայեց անոնց՝ երբ ասաց. գրախտիդ մէջի ամէն ծառոց պտուղներէն կերէք, բայց գիտութեան բարւոյ եւ չարի ծառի պտուղէն չուտէք. եթէ ուտէք, ըսաւ, մահու կմեռանիք. այլ անոնք թելագորութեամբ օձին խաբուելով՝ պատուիրանազանց եղան Աստուծոյ, եւ պատժուեցան:

Ապա այժմ այն քրիստոնեաներն որ կրօնն թէ Աստուած պահք գրած չէ, ինչ կամենանք՝ զայն կուտենք, շատ կմեղանչեն: Անոնք չեն լսեր՝ չեն գիտեր արդեօք որ Աստուած ինչպէս որ գրախտին մէջ պահքը իբրեւ առաջին պատուիրանք գրաւ, նոյն տէրը երբոր մարմնառութեամբ ի կուտէն Մարիամայ աշխարհք եկաւ, պահք պահել հրամայեց, եւ Քառասնորդական պահքը ինքը Քրիստոս սահմանեց պահել սրբու-

թեամբ եւ ամենայն առաքինական բարեգործութեամբ. յետոյ սուրբ Հայրապետներն ալ կարգադրեցին եկեղեցական կանոնով պահել պահք: Իսկ այժմ պահք չպահողները իբրեւ աւելորդ ճգնութիւն համարելով պահեցողութիւնը՝ իրենք չեն պահեր, զուրիշներն ալ կգայթակղեցնեն, պահել չեն թողուր, իրենց հետ մեղսակից կընեն զանոնք ալ, ընդդէմ Աստուածային եւ եկեղեցական կարգադրութեանց:

Եթէ պահք պահելը հարկաւոր չէ, եւ աւելորդ առաքինութիւն կհամարուի, ապա ապաշխարութիւնը ինչո՞վ պէտք է լինի. ո՞չ ասլաքէն աղօթիւք, պահօք եւ ողորմութեամբ: Գիտեմ անոնց պատասխանը: Կըսեն թէ կերակուրը արդելուած չէ, ապաշխարութիւնը պահքով չլինիր. անոր տեղը աղօթք շատ կընեմք, աղքատաց ողորմութիւն կուտանք. պահքը ի՞նչ է, սէր տեղ դրած է կըսեն: — Եթէ պահքը սուտ առաքինութիւն է, ապաշխարութիւնը ինչո՞ւ ապա անով կկատարուի. եւ եթէ չպահուի, ապաշխարութիւնը անկատար կմնայ:

Պահքը ի՞նչ է, եթէ ոչ՝ մարմինը ներզայցնել, ախտաւոր կիրքերը եւ զգայարանաց անկարգ ցանկութիւնները մահացնել:

Եթէ ըսեն, պահք չենք պահեր, բայց ուրիշ բարեգործութիւններ շատ կընենք, սուտ է բոլորովին: Եթէ պահք չպահեն, իրենց ապստամբ ոչ մարմնովը աղօթք ընել կըրնան, ոչ ողորմութիւն աալ եւ ոչ ուրիշ առաքինութիւններ գործել, եւ բոլորովին անապաշխար կմնան:

Ամենայն քրիստոնեայ պարտաւոր է պահք պահել՝ եթէ առողջ է մամնով. իսկ եթէ վտանգաւոր հիւանդ լինի, բժիշկներու առաջարկութեամբ կարելի է պահքը լուծել. վասն զի այն ոչ թէ իբրեւ սնունդ է՝ այլ իբրեւ բժշկի դեղ: Զինի առողջութեան կրկին պէտք է պահել ապաշխարութեամբ: Բայց մենք կտեսնենք այժմ՝ շատ առողջ մարդիկ որ առանց պատճառի իրենց որովայնամուտութեամբը՝ ամենայն պահոց օրերը, թէ շաբաթապահքը, թէ չորեքշաբաթը, թէ ուրբաթը եւ թէ քառասնորդական երեւելի քրիստոսագիր պահքը բարեկենդանական ուրախութեամբ կուտեն, ոտնակոխ ընելով Աստուծոյ պատուիրանքը եւ հոյրապետաց կանոնները:

Դաւիթ Մարգարէն ապաշխարութեամբ պահեց, արդարացաւ, ինչպէս ինքը կըսէ, «Ես ի նեղել նոցա քուրձ զգենաւի, խանարհ

առնէի պահօք զանձն իմ » : Մովսէս մարգարէն պահքով ընդունեց աստուածային օրէնքները, եւ քառասնօրեայ պահոց մաքրութեամբ արժանացաւ Աստուծոյ հետ խօսելու : Եղիա մարգարէն պահօք եւ աղօթիւք երկինքը կբանար եւ կփակէր : Երեք մանկունքը կրակին մէջէն պահքով ապրեցան : Դանիէլ մարգարէն առիւծու բերնէն պահք պահելով ազատեցաւ : Նինուէացիք պահքով եւ ծովով ապաշխարեցին, կործանմանէ ազատեցան :

Ուստի ամենայն քրիստոնեայք պարտաւոր են պահքը պահել առանց լուծելոյ, հեռանալ պարարտ կերակուրներէ եւ ուրիշ զգայաբանքներով ամենայն մեղաց պատճառէ զգոյշ կենալ. վասն զի իւրաքանչիւր զգայութիւնքը մարգոյս կարող են բարի գործել եւ կամ չար առնել. մարգըս պէտք է նկատէ որ իրեն օգնեն, եւ Աստուծոյ համար բարիք գործել տայ իրեն ամենայն զգայութեանց :



Գ Լ Ո Ի Խ Լ Զ.

ՅԱՂԱԿՍ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ.



Մարմնաւոր ողորմութիւնը արտաքին եւ ստացական բարիքներով կլինի, ինչպէս է քաղցածը կերակրել, ծարաւին ջուր տալ, մերկը հագուեցընել, հիւանդին տեսութեան երթալ, օտարը տուն տանիլ, եւ բանտարկելոց այցելութիւն ընել, ինչպէս Քրիստոս կսովրեցրնէ մեզի սուրբ Աւետարանին մէջ. ասօնցմով մարդս իրեն պարտքը կվճարէ, զոր իրեն ստացուածքէն պարտական է Աստուծոյ:

Ողորմութիւնը թէպէտ աղքատաց կըտրուի, սակայն տուողին վախճանական գիտողութիւնը առ Աստուած լինելով՝ Աստուծոյ կվերաբերի. վասն զի ինչ որ աղքատաց կբաշխուի՝ տուողը այնպէս պիտի գիանայ որ Քրիստոսի փոխ տուաւ. «Որ ողորմի աղքատին՝ կըսէ Սողոմոն, փոխ տայ Աստուծոյ. (Առակ. ԺԹ. 19—17)», այսինքն իրեն գանձը երկրէս երկինքը կգանձէ, ինչպէս

Քրիստոս կհրամայէ . « Գանձեցէք ձեզ գան-  
ձըս յերկինս , ուր ոչ գող մերձենայ եւ ոչ  
ցեց ապականէ : »

Ողորմած մարդը պէտք է իրեն սիրան  
ու կամքն ալ արտաքին նուիրանաց հետ  
տայ . վասն զի այն ատենը ողորմութիւնը  
ընդունելի կլինի . երբոր սրտին ձեռքովը  
բաշխուի : Այն ողորմութիւնը չընդունիր  
Աստուած՝ որ մէկուն ձեռքը տայ եւ սիր-  
տը ուրանայ . Աստուած տուրքին չնայիր ,  
այլ տուողին սիրտը կնայի :

Ողորմութիւնը այն ատեն բարձրագլուխ  
կպարծենայ դատաստանի օրը՝ երբ տուո-  
ղին միտքը զուարթ է եւ կամքը յօժար .  
« Զտուրս զուարթառատս սիրէ Աստուած  
(Ք. Կորնթ. Թ, 7) » եւ այն տուրքը ողորմու-  
թիւն կըսուի՝ որ ի սէրն Աստուծոյ կարօ-  
տելոց կբաշխուի արդար վաստակէն : Եթէ  
մէկը հարստութիւն չունի , ու չկրնար լիա-  
ձեռն տալ , այնչափ թող տայ՝ որչափ կա-  
րողութիւնը կհասնի . եթէ միայն ջուր  
տայ , այն ալ ընդունելի է . « Որ արբուսցէ ,  
կըսէ Քրիստոս , բաժակ մի ջուր ցուրտ մի-  
այն՝ յանուն աշակերտի , ամէն ասեմ ձեզ ,  
ոչ կորուսցէ զվարձս իւր . (Մատթ. Ժ, 43 : Մարկ.  
Թ, 40) : Քաղաքական ատեանի մէջ դատա-

ւորնները միայն գողը եւ մարգասպանը կպատժեն, այլ ոչ ագահը եւ անգութը. իսկ Աստուած ոչ միայն գողը եւ մարգասպանը կպատուհասէ, այլ եւ ագահը եւ անգութը. վասն զի ագահը հասարակաց բարիքը իրեն սրտին մէջ ժողոված կպահէ, եւ անգութը ողորմութիւն չտալով՝ զմարդիկ կարօտութեան մէջ կըսպաննէ. ուրեմն անոնք իրաւամբ պատուհասակոծ կլինին Աստուծոյ արգարութեանէն շուտ կամ ուշ:

Կան այնպիսի մարդիկ որ ողորմութիւն չեն տար, սակայն խաղարկութեան տեղերը, գինետունները եւ խահուէնները արծաթը եւ ոսկին լիաձեռն կուտան. մարմնաւոր բարութիւնները որ նոցա Աստուծմէ պարգեւած է՝ սէտք է հոգեւոր օգտի համար գործածեն. բայց անոնք անպէտ եւ վնասակար տեղերը կմանեն, ընդդէմ սուրբ Աւետարանին Քրիստոսի որ կըսէ. «Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց, եւ արկանել շանց. (Մատթ. ԺԵ, 29)»:

Բայց անզեղջ մարդիկ թող չյուսան ամենեւին լսի ողորմութեամբ եւ տուրքով փրկկութեան հասնիլ. վասն զի յանդգնութիւն է ողորմութեան արգելանց ապաւինելով՝ ան-



խիղճ մեղանչել կամ դարձի դալ չու-  
ղել մեղք է. վասն զի ողորմութիւնը ծուռ  
իրաւանց կաշառ չէ, կամ Աստուծոյ ար-  
դարութիւնը խափանող չէ: Այն, ողորմու-  
թիւնը զմեզքը կքաւէ եւ Աստուծոյ բար-  
կութիւնը կցածցընէ. սակայն կատարեալ  
զղջում, խոստովանութիւն, աղօթք եւ պա-  
հեցողութիւն կպահանջէ. վասն զի Աստուած  
ոչ միայն ողորմած է, այլ եւ արդար  
է. ինչպէս որ ասաց Քրիստոս թէ «Տուք  
զողորմութիւն, եւ ամենայն ինչ ձեր սուրբ  
է (Ղուկ. ԺԳ, 41.)» եւ թէ «Զողորմութիւն  
կամիմ, եւ ոչ զպատարագ»: Այլ եւ նոյնը  
ասաց. «Եթէ ոչ ապաշխարիցէք, ամենե-  
քեան նոյնպէս կորնչիցիք»:


Շատ մեղաւորներ ողորմութեան պատճա-  
ռաւ ինչ որ տուին աղքատաց, նոցա աղօթ-  
քով եւ խնդրուածքովը աստուածային ողոր-  
մութեան արժանացան, իրենց մեղքերէն  
դարձան եւ արդարացան: Շատ մարդիկ  
մեծամեծ տառապանքներէ եւ նեղութիւն-  
ներէ ողորմութեամբ ազատեցան. հիւանդ-  
ները առողջացան, ցաւագարները բժշկուե-  
ցան, ձախորդները յաջողուեցան. այլ եւ  
մեռելները կենդանութիւն առին. ինչպէս  
Տաբիթան այրիներուն աղաչանքովը, որոնց

ողորմութիւն կընէր, ի մեռելութենէ կենդանացաւ, սրբոյն Պետրոսի առաքելոյն ձեռքովը :



### Գ Լ Ո Ւ Խ Լ Է.

ՅԱՂԱԳՍ ԻՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՊԱՇԻԱՐՈՒԹԵԱՆ.

 Սպաշխարութիւնը լալ ու ողբալն է անցեալ մեղքերուն համար՝ որ մտաց մոլորութեամբ եւ կամաց հաւանութեամբ կգործուին. անոր համար առաջ պէտք է ապաշխարողին մտքով առ Աստուած դառնալ, եւ կամքով Աստուծոյ սիրոյն հետեւիլ, այսինքն կորուսեալ սէրը կրկին խնդրել. եւ այս կլինի զըզմամբ :

Մարդս մեղքը սիրելով պարտաւոր կմնայ Աստուծոյ. անոր համար սահմանուած է որ խոստովանահայրը դատաւոր լինի Աստուծոյ եւ մեղաւորին մէջ, եւ զմեղաւորը Աստուծոյ հետ հաշտեցնէ. ինչպէս եսայի մար-

դարէն կըսէ. «Արք Յուզայ, այսինքն ս'վ  
խոստովանահարք, դատ արարէք ընդ իս եւ  
ընդ այգի իմ». անոր համար մեղաւորը  
երբ խոստովանութեան ատեանը կ'մտնէ,  
աստուածային օրէնքը նորա դէմ ամբաստա-  
նութիւն կընէ; եւ դատաւորէն (այսինքն  
խոստովանահօրէն) իրաւունք կ'խնդրէ. դա-  
տաւորն ալ խոստովանցներով՝ մեղաց պար-  
տականութենէն կազատէ; եւ ապաշխարել  
սովբեցընելով՝ կհաշտեցընէ զնա Աստուծոյ  
հետ:

Աստուած որովհետեւ մեղաւորին դա-  
տաստանը խոստովանահօր յանձներ է, որ  
երբ երկրիս վրայ արձակէ զնա մեղաց  
կապանքէն, — ինչպէս սուրբ Եկեղեցւոյ կա-  
նոնը կհրամայէ; — Աստուած ալ երկինքը  
կ'թողու նորա մեղքը եւ կարձակէ. «Եթէ  
ումեք թողուցուք զմեզս, կըսէ Քրիստոս,  
թողեալ լիցի նմա. եւ եթէ զուրուք ու-  
նիցիք՝ կալեալ լիցի»: 'Վասն զի մեղաւորը  
երբ խոստովանութեան ատեանին մէջ իրեն  
անձին դէմ՝ ամբաստանութիւն ընէ խոս-  
տովանահօր, եւ խոստանայ չմեղանչել միւս-  
անգամ, կարձակուի մեղաց կապանքէն,  
կազատի յաւիտենական պատժոց պարտա-  
պարտութենէն, եւ կ'մնայ միայն պարտական

ժամանակաւոր պատժոց, այսինքն ապաշխարութեան. ինչպէս մէկ հիւանդ մը որ երբ մահու վտանգէն ազատի, պարտաւոր կլինի միայն պահեցողութիւն ընելու եւ զօրացուցիչ դեղ առնելու որ կատարելապէս առողջանայ: Ատուած ի մեղաւորէն իբրեւ յանարժանէ կվերցընէ իրեն շնորհքը. ըստ այնմ. «Մի մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ՝ վասն լինելոյ դոցա մարմին». եւ դարձեալ կշնորհէ՝ երբ ապաշխարէ. «Փչեաց ի նոսա եւ ասէ. առէք Հոգի սուրբ»:

Քաղաքական օրինաց դատողութեան ատենին մէջ եւ եկեղեցական օրինաց մէջ զանազանութիւն կայ. քաղաքական օրէնքի մէջ երբ յանցաւորը խոստովանի իրեն մեղքը, չազատիր մարմնաւոր պատիժէ. իսկ եկեղեցական օրէնքի մէջ երբ խորհրդաբար խոստովանի խոստովանահօր առջեւը, յաւիտենական պատիժէ կազատի: Դարձեալ, քաղաքական օրէնքի մէջ յանցաւորը երբ չխոստովանի իրեն մեղքը, եւ վկաներով չստուգուի, դատապարտութենէ կազատի. իսկ եկեղեցական օրէնքի մէջ՝ որ աստուածային ատեանն է, եթէ յանցաւորը չխոստովանի ինչ որ գործեց, վկայ պէտք չէ.

վասն զի Աստուծոյ յայտնի է որ ամենա-  
տես է. ուստի այնպիսին հոգւով եւ մար-  
մնով կմեռանի յաւիտեան :

Բայց ոմանք գեւերէն կամ գիւարնակ  
աղանդաւորներէն խաբուելով, եւ կամ քա-  
հանայէն ամբջնալով, կամ ամբողջ եւ կա-  
տարեալ չեն ըսեր, եւ կամ երեւելի մեղ-  
քերը եւ մեղաց պարագաները կծածկեն.  
Վասն զի կգտնուին այնպիսի մարդիկ որ  
սրտերուն զղջումը բաւական կհամարին ի-  
րենց փրկութեան համար. ինչպէս որ չեն  
խոստովանիր, այնպէս ալ ապաշխարել չեն  
ուզեր. այլ ի դուր է այն լոկ զղջումը, ոչ-  
ինչ փրկութիւն չգործեր մահու չափ մե-  
ղանչողին : Անանք մարգարէին թող ահանջ  
դնեն որ կըսէ. « Ասա դու նախ զանօրէնու-  
թիւնս քո զի արգարացիս » :

Արդեօք ինչո՞ւ ոմանք խոստովանութեան  
եւ ապաշխարութեան խորհուրդէն կփախ-  
չին : Յայտնի է որ կամ չեն կամենար ար-  
դարանալ, եւ կամ խորհուրդին գերազան-  
ցութեանը չեն հաւատար. եթէ արգարա-  
նալ չեն կամենար՝ խելագար են, որ ի-  
րենց շահը եւ վնասը չեն գիտեր. եւ ե-  
թէ չեն հաւատար՝ անհաւատ են. վասն զի  
անհաւատները չեն հաւատար սրբարարու-

Թեան խորհրդոյ խոստովանու թեան որ Աստուծոյ կարգեալ է :



Գ Լ Ո Ի Խ Լ Ը.

ՅԱՂԱԳՍ ՀՐԱԻՐԵԼՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ ՁՄԵՂԱՌՈՐԾ

ՅԱՊԱՇԻԱՐՈՒԹԻՒՆ.



Ստուած այնքան սիրեց զմարդ՝ մինչեւ զնա թշուառութենէն ազատելու համար երկնքէն խոնարհեցաւ՝ երկիր իջաւ, սուրբ հուսէն մարմին առաւ, ծնաւ մաքրապէս, խաչեցաւ, թաղեցաւ, յարութիւն առաւ եւ համբարձաւ յերկինս : Ապա տեսէք նորա սքանչելի եւ անչափ մարդասիրութիւնը, որ ինչպէս կհրաւիրէ զմեզաւորն յապաշխարութիւն եւ սիրով կընդունի, եւ ինչպէս կլինի երբ ապաշխարութեան կարգ մանէ մեզաւորը : Մատթէոս երէկ մաքսաւոր էր, կողոպտիչ էր, անողորմ էր. կտեսնենք այսօր Հօր Աստուծոյ քովը նստած. Պետրոս որ զՏէրն ուրացեր էր, այսօր Մատթէոսի հետ Աստուծոյ

մօտ է բազմած. Պօղոս հայհոյիչ էր, հալածիչ էր եկեղեցւոյ, այսօր Աստուած նորա սրտին մէջ է բնակուած: Աստուած անոնց ապաշխարութիւնը ընդունելով՝ իրեն սիրելի ըրաւ, եւ յաւիտենական երանութեան հասուց. այնպէս ալ ամենայն մեղաւոր մարդկանց վրայ խնամք ունենալով, սիրով կընդունի զանոնք, երբ իրենց մեղքերը կատարելապէս ապաշխարեն:

Ո՛վ մարդ, ի՞նչ կուզես, ի՞նչ բանի կըփափաքիս: Հիւանդ ես. ես ճարտար բժիշկ եմ, եւ ձրի կըթշկեմ. միայն դեղը, այսինքն ապաշխարանք կուզեմ. ոչ դեղաւաճառի կղրկեմ կըսէ, եւ ոչ ծախք մը ընելու. այլ մտիր սենեակդ, եւ բեր ինձ արտասուք՝ որչափ որ ձեռքդ կհասնի. եթէ մէկ կաթ ալ է, բաւական է մկրտել զքեզ երկրորդ անգամ, եւ առաջին փառքը տալ քեզ: Եթէ մեղաւոր ես, ես ողորմած եմ. վասն զի ես աշխարհ եկայ որ զմեղաւորները կոչեմ, եւ ոչ արդարները. եւ ո՛վ որ ինձ եկաւ՝ չամաչեց, եւ մէկը չկտրաւ, այլ միայն ճշմարտութիւնը արհամարհողը: Մաքսաւորը մէկ խօսքով արդարացուցի իրեն արտասուքովը. Պետրոս որ զիս ուրացեր էր՝ երբ խոստովանեցաւ, զինքը մեղքէ:

արբեցի : Հրեայք զիս ծաղր ընելով՝ խաշին վրայ դատապարտեցին , արարածք կուլային կողբային , եւ ես անոնց համար աղօթք կընէի : Նոքա բարկութեամբ գլուխները կշարժէին , ես ողորմութեամբ թողութիւն կխոստանայի տալ անոնց : Հեթանոսները յորդեգրութիւն կոչեցի , օտար ոչխարները իմ գաւիթս բերի , մի հօտ եւ մի հովիւ ըրի : Ես դարձեալ այն ողորմածն եմ , փոխուած չեմ : Մարալի ես , ես աղբիւր կենաց . ըստ այնմ . « Եթէ ոք ծարաւի իցէ , եկեսցէ առ իս եւ արբցէ » : Եթէ քաղցած ես , « Ես եմ հացն կենաց » ինչպէս աւետարանիս մէջ ասեր եմ . ով ոք ուտիցէ ի հացէս՝ կեցցէ յաւիտեան :

Ո՛վ մեղաւոր , եթէ մերկ ես , ես քեզ պատմուճան եւ վերարկու կուտամ . միայն չար մի դործեր . ես քեզի առաջին հանդերձդ կհագցընեմ : Եթէ մեղաց ծառայ դարձար , ես զքեզ կազատեմ . « Որ առնէ զմեղս՝ ծառայէ մեղաց » : Ո՛վ մեղաւոր , եթէ կլախնաս իմ ահեղ զօրութենէս , մի վախնար . ես օտար չեմ , քու ազգականդ եմ . Դաւթի որդի եմ , Աբրահամու թոռն եմ . քեզ հետ խօսակից եմ եւ մարմնակից : Ապա ինչ կուղեա , ո՛վ մեղաւոր , քու ծա-



աագ եմ. ինչ բարի կկամենաս քեզ համար, դու հրամայէ տիրոջ պէս, կկատարեմ ծառայի նման. քանզի ես աշխարհք եկայ ոչ թէ անոր համար որ ինձ ծառայեն, հապա ես ծառայեմ մարդկանց: Ի՞նչ կկամենաս սիրելի. ստքերդ լուանամ, ետ մի քաշուիր: Ես սովոր եմ, Յուդայի ոտքն ալլուացի, որ ինձ մատնիչ էր:

Ո՛վ մեղաւոր, դու մէկ կաթ մը արտասուք թափէ իմ գոգս, ես անոր տեղը զքեզ Յորդանանու ջրովը կլուանամ, առաջին մկրտութենէն աւելի կպայծառացընեմ: Եթէ շատ մեղք գործեցիր, եւ կվախնաս որ ես էքննեմ, դու խոստովանէ քահանային, ես զքեզ կարձակեմ:

Ո՛վ մեղաւոր, կուզես քեզ հետ հաշտուիմ. դու չար մի գործեր: Դու կհարցընես թէ եօթն անգամ մեղանչողին թողութիւն կսյ թէ չէ. ես պատասխանեցի թէ եօթանասնեկին եօթնին կթողում. եւ ինչ որ իմ բերնէս կելնէ, չեմ ստեր կրսէ:

Ո՛վ մեղաւոր, ինչո՞ւ կփախչիս ինձմէ. եթէ շատ մեղք գործեցիր, ինձի արի որդեակ իմ ողորմելի. չեմ բարկանար, չեմ մեղադրեր զքեզ, վասն զի իմ արարածս ես, իմ ձեռքովս ստեղծեր եմ զքեզ. ա.

նոր համար իմ պատկերս չեմ ոչնչացնէր, իմ նմանութիւնս չեմ ապականէր:

Ո՛վ մեղաւոր, դժուար բան չեմ խընդրեր քեզմէ. ինչո՞ւ կտարակուսիս, միայն ինձ դարձիր, որ ես ալ քեզի դառնամ. միայն մեղքդ խօստովանէ, միայն ասպաշխարէ, մեղայ ասա, միայն իմ առջեւ անկանելով՝ ես զքեզ մեծ փառօք կպատուեմ. արի ինձ, մի ամաչեր. վասն զի ես զմեղաւորը չեմ յանդիմաներ, չեմ խայտառակեր շատ չարութիւններուն համար, չեմ մեղադրեր, այլ կողորմիմ նորա, եւ միշտ կենդանի կպահեմ:

Ո՛վ մեղաւոր, զիս մի արամեցնէր. իմ արարչական մարդասիրութիւնս մի ուրանար. իմ տաճարէս զիս դուրս մի պահեր. իմ քնակութենէս զիս մի զրկեր. իմ անգին գանձէս զիս մի կողոպտեր: Ես ուրիշ բանով չստացայ զքեզ, այլ իմ արիւնովս գնեցի: Ես այնպէս ծարաւի եմ քո փրկութեանդ՝ որպէս եղջերու յաղբիւրս ջուրց:

Ո՛վ մեղաւոր, ասա ինձ ինչ վնաս ըրի քեզի որ զիս սուգի մէջ ես թողեր, եւ միշտ կուլամ կողբամ քու չարութեանդ համար. այս մտածէ որ դու բան չէիր, ես զքեզ մարդ ըրի, անկենդան արարած.

ներէն զքեզ բաժանեցի, իմ պատկերիս նման ստեղծեցի, ձեռքս յօրինեցի, պատուեցի, իմաստութիւն տուի, իշխանութեամբ մեծցուցի. երկինքը իրեն լուսովը, օդը թռչուններով, ծովը ձկներով եւ երկիրս ամենայն կենդանիներով բոյսերով տունկերով քու վայելքիդ համար ստեղծեցի. այժմ կխոստանամ յաւ խտենական կեանքը տալ: Քեզի հարցընեմ քաղցրութեամբ, ո՞վ մեղաւոր, ասա ինձ. ես քեզ վնասապահրա եմ թէ երախտաւոր. եթէ արդարութեամբ ըսես, ես քեզ վնասապարտ չեմ, այլ երախտաւոր եմ: Իսկ եթէ երախտաւոր եմ, ապա ինչո՞ւ իմ թշնամուոյս՝ սատանային հետ միաբան կլինիս, զիս կխոցես ամէն օր քու մեղանչելովդ:

Ո՞վ մեղաւոր, իմացիր եւ գիտցիր որ մեղաւորաց մեղաց սուգը աւելի կխոցէ եւ կվիրաւորէ զիս՝ քան զայն որ խաչին վրայ տէգով (մզրախով) խոցուեցայ զինուորներէն, եւ խաչ հանողներէն տանջուեցայ՝ որ ստքերուս եւ ձեռքերուս գամ դարկին: Փուշ պսակ որ իմ գլուխս գրին, ուղեզս կսկծեցաւ. բայց մեղաց սուրը աւելի կը կսկծեցընէ զիս: Մեղաւորին մեղաց գարշահոտութիւնը աւելի է քան զլեզին

եւ զքացախն որ խաչին վրայ ինձ խմցուցին: Գիտեմ, դուն երբ կտեսնես, կատես զանոնք եւ կանարգես, կուզես սպաննել, անոր համար որ քու Տէրդ խաչ հանեցին. այդքան սիրոյդ շնորհակալ եմ. բայց դու անմտութեամբ ամէն օր նոցա գործը կը գործես չարաչար մեղանչելովդ, որ բոլորովին առ իս կվերաբերի. ուրեմն դադարէ չարութենէդ, զղջումի արի, սիրելի որդեակ իմ:

Ասացէք ինձ, ո՞վ մեղաւորք, ես ինչ չար ըրի մարդկանց որ այդքան զիս թշնամի ճանչնալով, դուք ինձմէ կփախչիք քաղցրութեամբ. կաղաչեմ զձեզ զղջման եւ ապաշխարութեան հաւանեցէք որ թողութիւն առնուք:

Ո՞վ մեղաւոր, իմ գառաստանս քու ձեռքդ տամ. դու իրաւունք արա. եթէ ես զքեզ չսիրեցի, յիրաւի դուն ալ զիս պիտի ատես. եթէ սիրեցի, ապա ինչո՞ւ ինձմէ կփախչիս. իսկ եթէ կըտես, կատարեալ չսիրեցիր, լսէ ո՞վ մեղաւոր. այդ կարծիքդ ճշմարիտ չէ. վասն զի ես բոլոր աշխարհքը քեզ համար ստեղծեցի. դրախտը քեզ համար յօրինեցի. արքայութիւնը քեզ համար ըրի, եւ այն տեղը սպարաւ-

տեր եմ՝ քեզ համար: Գու միայն մեղքէդ  
դարձիր, այն վայելչութիւնը քեզ կու-  
տամ: Տես եղբայր, քեզ համար երկնքէն  
խոնարհեցայ, երկիր իջայ, մարդ եղայ,  
չարագործի նման քեզ համար գատաստան  
մտայ: Հրեաներէն գատապարտուեցայ, Պի-  
ղատոսէն ծեծուեցայ, Հերովդէսէն արհա-  
մարհուեցայ, զինուորներէն ծաղր եղայ, ծա-  
ռաներէն ապտակ կերայ, Հրէից քահանա-  
ներէն երեսիս թուք ընկալայ, Ժողովուրդ-  
ներէն նախատուեցայ, քեզ համար խաչը  
ուսովս վերուցի, Գողգոթային վրայ հա-  
նեցի, քո սիրոյդ համար թշնամիներէս  
հայհոյուեցայ, խաչուեցայ, գամով գա-  
մուեցայ, աէգով խոցուեցայ, փուշ սրակ  
գլխիս ընկալայ, ջրի տեղ քացախ եւ լեզի  
խմեցի, աստուածային գլուխս խոնարհե-  
ցուցի, հոգիս Հօրս ձեռքը աւանդեցի,  
մարմնով գերեզման մտայ, երեք օրէն յե-  
տոյ յարութիւն առի: Դու մեղքով մեռած  
էիր, քեզի ալ յարութիւն տուի:

Ո՛վ մեղաւոր, իմացիր սրչափ սիրեցի  
զքեզ՝ երբօր Հրեայք թուրերով ու բիրե-  
րով եկան զիս բռնելու, չէին ճանչնար թէ  
սո՛վ եմ ես, այնքան ծարաւ էին իմ արեա-  
նըս որ թշնամիներս հնարը գտան, անծա-

նօթ մարդիկ խրկեցին որ անոնք իմ սքան-  
չելիքս չէին տեսած, անոր համար զանոնք  
խրկեցին որ ինծի չողորմին եւ չփախցը-  
նեն, իսկ ես անոնց քաղցրութեամբ կհար-  
ցընէի թէ զօվ կլինաուէք, զՅիսուս կուզէնք  
կըսէին, եւ իմ ասէս գետին ընկան, ես  
գթացայ անոնց, յարութիւն տուի, իսկ  
նորա ինձ չողորմեցան, Պետրոս առաքեա-  
լը շհամբերեց, թրով քահանայապետին  
ծառային ականջը կտրեց, իսկ ես Պետրո-  
սի թուրը ես գարձուցի, եւ կտրած ա-  
կանջը առի տեղը դրի եւ բժշկեցի, ասով  
ալ չողորմեցան նորա ինծի: Հրեայք եւ զի-  
նուորները ինչեք ըրին ինձ այն գիշերը,  
մեղաւորաց սիրոյն համար համբերեցի, եւ  
գու արգ ինձմէն երեսդ կգարձընես, եւ  
զիս սուգի մէջ կպահես:

Ո՛վ մեղաւոր, տես իմ սէրս քու վրագ,  
որ երբ զիս բռնեցին Հրեայք, աշակերտնե-  
րըս փախան, մինակ մնացի ես, դոմը մէկ  
էր, գայլերը շատ էին, ոչխարը մէկ էր,  
գազանները շատ էին, արդար աղաւնին  
մէկ էր, վայրենի թռչունները շատ էին:  
Հանեցին վրայէս անարգաբար անկար պատ-  
մուճանս եւ ուրիշ հագուստներս, գլուխս  
բացին, ձեռքերս ետեւս կապեցին, վիզս

չուան ձգեցին, զանազան տանջանքներով նախատինքներով Կայիափայի պալատը տարին: Ես այն ամէնն ալ քեզ համար յանձն առի: Եւ դու զիս կատես եւ չես ապաշխարեր:

Ո՛վ մեղաւոր, պալատը որ տարին զիս, ասացին անոնք. անիրաւաբար չդատենք զսա, այլ օրէնքով եւ դատաստանով: Ատեան կազմեցին, նստան քահանայապետները իրենց ծերերովը. սուտ վկաներ բերին, ըսին ինձ համար, Աստուծոյ հակառակ է, օրէնք խափանող է, շարաթ պահող չէ, տաճար քակող է, Աստուծոյ հայհոյիչ է, եւ ինքզինքը Աստուած կանուանէ, եւ այլ շատ մեղքեր վրաս գրին. յետոյ սկսան աղաղակ վերցընել թէ մահապարտ է, վասն որոյ խաչ հանել պէտք է: Կայիափայի պալատէն հանեցին, Աննայի պալատը տարին, անկից Պիղատոսի տունը, յետոյ Հերովդէի պալատը. անկից դարձեալ Պիղատոսի տունը բերին. այսպէս բոլոր գիշերը հանգըստութիւն չտուին ինձի որ մէկ բոպէ մը աչքերս փակել չկարողացայ:

Ո՛վ մեղաւոր, ասկից աւելի սէր ինչպէս կրնայ լինել որ մօրս՝ Մարիամ Աստուածածնին չողորմեցայ, նորա կսկծանացը չխնայ-

եցի. երբոր կտեննէր որ իրեն միածին  
որդին, երկինք եւ երկիր ստեղծողը, խա-  
չին վրայ մերկ մարմնով, արիւնով ներ-  
կուած, գամով ամբրցած, կողը ճղքուած,  
երեսին գոյնը փոխուած, գլուխը խոնարհե-  
ցուցած, հոգին աւանդած եւ խաչին վրայ  
մեռած. երբոր ասոնք մայրս տեսաւ, սր-  
քան կկսկծար, սրքան սիրտը կայրէր, սր-  
քան կխշխշար, եւ սրքան կհառաչէր. ինչ-  
պէս կողբար. ինչպէս արտասուք կթափէր:  
Եւ ես մօրս չողորմեցայ քեզ համար, սլ  
մեղաւոր. այժմ դու երեսդ կպահես, ե-  
րախտամուս կլինիս, եւ թշնամւոյդ՝ սատա-  
նային կողմը կդառնաս:

Ո՛վ մեղաւոր, իմացիր, այժմ քաղցրու-  
թեամբ կխօսիմ քեզի հետ, եւ դու չես  
լսեր ինձ. եթէ անզղջութեամբ մեռնիս,  
քու մեղացդ դիմացը ես զքեզ հազարապա-  
տիկ տանջել կուտամ անշէջ կրակի մէջ՝  
իմ երախտիքս, իմ չարչարանքս արհամար-  
հածիդ համար, եւ իմ մարդեղութիւնս  
ունայնացուցածիդ համար:

Ո՛վ մեղաւոր, ահանջ դիր որ սատանայ-  
ին չարութիւնը քեզի ցոյց տամ: Սատա-  
նայն չէր որ քու մայրդ եւան, օձին ընկե-  
րակցութեամբը խաբեց, այնպէս ալ զՍ.դամ:



Աստանայն չէր որ զնոսա լուսեղէն պատ-  
մուճանէն մերկացուց. սասանայն չէր որ  
զանոնք զուարճալի դրախտէն դուրս ըրաւ  
եւ Աստուծոյ երեսէն փախուց. եթէ քու հօ-  
րըդ մօրդ՝ Ազամայ եւ Եւայի այսպէս  
ըրաւ, քեզի ապա ինչ պիտի ընէ, որ այդ-  
քան կտիրես զնա: Նա կուզէ Աստուծոյ  
որդեգրութենէն հանել զքեզ, կուզէ որ  
Հոգին սուրբ քու սրտիդ մէջ չընակի, կը-  
ցանկայ որ իմ կենարար մարմինս եւ ա-  
րիւնս չճաշակես, կցանկայ որ կուսութեան  
լապտերդ մարի, կցանկայ որ երկնաւոր  
փեսայիդ առագաստին բաց դուռը փակուի  
քու դիմացդ, եւ դժօխքի կրակին մատ-  
նուիս՝ դիւաց բազմութեանը հետ:

Ո՛վ մեղաւոր, ինչո՞ւ իմ երախտիքս չես  
ճանչնար. սասանայն կջանայ որ զքեզ  
մեղքով մեռցընէ. ես իմ աներեւոյթ զօ-  
րութեամբս կհալածեմ զնա եւ հրեշտակ-  
ներս հրեղէն սուրերով կփախցընեն զնա որ  
քեզ վնաս չտայ. դու ինչո՞ւ քաղցր Քրիս-  
տոսէդ կփախչիս, զոր հրեշտակները ան-  
դադար տեսնելով, չեն կշտանար իմ քաղ-  
ցրութենէս: Ես այն եմ որ մոլորեալ եւ կօ-  
րուսեալը կինտուեմ եւ կգանեմ, ինչ վէրք  
որ ունենայ՝ կրժղկեմ, ծովու մէջ մնացու-

ծը ես նաւահանգիստ կհանեմ: Կուզեմ քու հիւանդութենէդ զքեզ բժշկել. կուզեմ յարութիւն տալ քեզի, որ մեղքով մեռած ես. կուզեմ դառն տրամութենէդ ազատել զքեզ. դու մեղքի չուանով կապուած ես, կուզեմ արձակել զքեզ. կմտածեմ որ հոգւոյդ աղտեղութիւնը լուանամ եւ դաստառակովս սրբեմ. կմտածեմ, ո՞վ մեղաւոր, որ ամէն չարիքդ ջնջեմ մարբեմ, եւ զքեզ առաջին փառքիդ հասցընեմ. միայն դու քու չար գործերէդ դարձիր, խոտտովանէ, մեղայ ասա, ես շատ մեղքերդ կջնջեմ:

Ո՞վ դասք արդարոց, հաւատարիմ ծառաներս, մի զարմանաք դուք իմ անտխակալութեանս, որով այնքան կկսկծի սիրտս եւ կտրտմի հոգիս մէկ անդարձ մեղաւորի վրայ, որ երկինքը երկնայիններովը, երկիրս երկրաւորներովը եւ ծովը ամենայն լրիւ ոջինչ կհամարուի աչքիս առջեւը: Վասն զի ես նորա համար երկնքէն երկիր իջայ, ի Կուսէն մարտին առի, երեսունեւերեք տարի երկրիս վրայ քալեցի, կենարար վարդապետութեամբս մեղաւորաց դարձ քարոզեցի աստուածային նշաններովս շատերը բժշկեցի: զանազան չարչարանքներ եւ նախա-

տինքներ կրեցի, խաչին վրայ բարձրացայ,  
իմ արիւնս թափեցի: Այս ամենայն մեղա-  
ւորաց փրկութեան համար էր: Եթէ մեղա-  
ւորը մեղքով մեռանի, իմ չարչարանացս  
պտուղը կկորսուի նորա համար. իսկ եր-  
բոր կզգջայ մեղաւորը մեղքէն, յուզու-  
թիւն կուգայ, կուրախանամ եւ կցնծամ,  
իմ Հայրս եւ փառակից Հոգիս ալ ինձ հեռ  
ուրախակից կլինին. այնպէս ալ ամենայն  
հրեշտակները եւ արդարոց դասքը կուրա-  
խանան:

Ո՛վ մեղաւոր, սիրէ դիս, որ ես զքեզ  
սիրեցի: Ձեմ գարշիր հողեղէն օթեւանէդ,  
աղքատութեանդ չեմ նայիր, մաքրէ սրբ-  
աիդ առադաստը. ես ալ երբ միւսանգամ  
գատաստան կուգամ, զքեզ կառնուամ, Հօրս  
առջեւը կտանիմ ուրախութեամբ, եւ կը-  
սեմ. «Ահաւասիկ ես եւ մանկունք իմ, զոր  
ետուր ցիս»:

Տես, ո՛վ մեղաւոր, ուրիշ արարածները  
ինչպէս կվախնան ինձմէ. երկիրը կգողայ,  
լեռները սարերը մոմի նման կհալին առ-  
ջեւս, ծովերը կցամաքին. սերովբէք եւ  
քերովբէք բոցանիւթ թեւօք իրենց դէմ-  
քերը կծածկեն իմ ահարկութենէս: Դու  
ինչո՞ւ չես գողար, Կներեմ քեզի, ո՛վ մեղա-

ւոր, զղջումի արի որ փրկուիս յաւիտենա-  
կան դժոխքէն :

Ո՛վ մեղաւոր, երբոր քեզ հետ քաղցրու-  
թեամբ կխօսիմ, մի վախնար ինձմէ, ողորմէ  
քեզի. եթէ իմ հրեշտակին չխնայեցի որ  
ինձ ընդդէմ հպարտացաւ, եւ անդունդը  
ձգեցի. նոյի ժամանակը առ հասարակ բազ-  
մութիւնը ջրհեղեղով խղզեցի. Սողոմ Գո-  
մորն բնութենէ դուրս չարիք գործեցին,  
կրակախառն անձրեւով կորուսի. գոռոզ  
Փարաւոնը ինձ ընդդիմացաւ, բազմութեամբ  
զօրքովը Կարմիր ծովուն մէջ խղզեցի. Կոր-  
խեանքն ու Աբիրոնեանքը երկու հարիւր  
յիսուն հոգի բուրվառի կրակով այրեցի. Ե-  
րիքով որ ինձ թշնամի դարձաւ՝ նորա պա-  
րիսպը ջրի պէս թափեցի, եւ ընակիչները  
Յեօուայ ձեռամբ սուրով մաշեցի: Սենեքե-  
րիմայ արքային Ասորեստանեայց զօրքը որ  
զիս հայհոյեցին՝ հարիւր ութսունհինգ  
հազար հոգի երուսաղէմ քաղաքին քով մէկ  
գիշերուան միջոց հրեշտակն իմ հրամանո-  
վըս սատակեց: Այսպէս, ո՞վ որ իմ կամքիս  
հակառակ կգործէ, չարաչար կպատուհա-  
սի: Նոյն Աստուածն եմ ես, եւ եթէ այժ-  
մեան քաղցրութեան ձայնս չլսէք, չզղջաք  
մեղքէ, չգառնաք առ իս, հարիւրապատիկ

աւելի կտանջեմ զձեզ, ինչպէս որ ասացի.  
«Դիւրագոյն լիցի յաւուրն դատաստանի  
Սողոմացոց եւ Գոմորացոց քան քաղա-  
քին այնմիկ:»

Ձրսես, սո՛վ մեղաւոր, թէ այսուհետեւ  
կտարսիմ կգողամ քու ահեղ զօրութենէդ.  
բայց ինչ ընեմ, տարակուսանքի մէջ եմ,  
մեղքս շատ է, ինչպէս կողորմիս եւ ինչպէս  
կգթաս: Ո՛վ մեղաւոր, իմ անուններս իմա-  
ցիր, ուրախ եղիր, մի տարակուսիր շատ  
մեղքերուդ համար: Անունս ողորմած է,  
երկայնամիտ է, բազումօղորմ է, անոխա-  
կալ է, անյիշաչար է, քաղցր է, մարդա-  
սէր է, բժիշկ հիւանդաց է, մահացելոց  
կեանք է, խաւարելոց լոյս է, դերելոց  
փրկիչ է, մոլորելոց գանոզ է. դու ինչո՞ւ  
կտարակուսիս շատ մեղքերուդ համար:

Որովհետեւ դու կխոստանաս այսուհետեւ  
վախնալ քու Քրիստոսէն եւ տարակուսանքդ  
մեղքիդ շատութենէն է, ես իմ սէրս  
կաւելցրնեմ քու վրադ եւ իմ գութս եւ  
ողորմութիւնս քու վրադ կլինի. խրատ  
տամ քեզի որ դու ինչ պիտի ընես: Այս  
միայն ըրէ, սո՛վ մեղաւոր, որ հրաժարիս  
հնազանդութենէ չար կամացն սատանայի,  
եւ հեռացիր պիղծ սովորութիւններէդ:

Զղջումի արի, ինչպէս անառակ որդին հօրը մեղայ ասաց, թողութիւն գտաւ. խոստովանէ շատ մեղքերդ, ինչպէս Դաւիթ մարգարէն. ապաշխարէ անօրէնութեանդ վրայ, ինչպէս Մանասէ թագաւորը. աղօթք քրէ առ Աստուած, «Քաւեան զիս տէր զմեղաւորս» ասելով, ինչպէս մաքսաւորը. արտասուք թափէ յանցանքիդ համար, ինչպէս Պետրոս. դագարէ չար գործերէդ, ինչպէս սլոնիկ կինը: «Յիշեան զիս, ասա, յարքայութեան քում» ինչպէս աւազակը:

Ո՛վ մեղաւոր, եթէ քու չարութիւնդ երկնքի աստղերէն շատ է, ծովու աւազէն անհամար է, անձրեւի կաթիլներէն աւելի է եւ ամենայն լեռներէն ծանր է, եւ անօրէնութիւնդ բարձրացած է մինչեւ երկինքը, զղջացածիդ պէս իմացիր որ ինչպէս աչքերդ շուտ կբանաս եւ կիսկես, ինչպէս շուտ շունչ կուտաս եւ կառնուս, արեգական նշոյլը ինչպէս որ շուտ կուգայ, միտքդ ինչպէս շուտ կքայէ, բիւրապատիկ աւելի շուտով մեղքերուդ թողութիւն կուտամ, վասն զի ամենակարող ստեղծող եմ:

Ո՛վ մեղաւոր, գիացիր որ դու մարդ ես, եւ մեղքերդ թէպէտ շատ կթուին քեզ, սակայն խոստովանէ, եւ իմ ծովացեալ ո-

ղորմութիւնս կձգես քու վրադ, մեղքերդ  
այնպէս կմարին՝ ինչպէս փոքր կայծը որ  
համատարած ծովուն մէջը ձգես :

Ինչպէս որ մեղքի ճանապարհները կերպ  
կերպ են, նոյնպէս ապաշխարութեան ան-  
ղերն ալ զանազան են. ոմանք խորգով եւ  
մոխրով արգարացան, ոմանք լալով եւ  
արտասուելով Աստուծոյ հետ հաշտուեցան,  
ոմանք պահօք եւ աղօթիւք միայն ապրե-  
ցան, ոմանք ողորմութեամբ ողորմութիւն  
գտան ինծմէն. ոմանք մարդասիրութեամբ  
եւ տկարներու ծառայելով, ոմանք խօնար-  
հութեամբ եւ հնազանդութեամբ թողու-  
թեան արժանացան : Դու, սիրելի, ասոնցմէ  
որն որ գիւրին եւ հեշտ է՝ ըրէ. որով կա-  
րողանաս մեղաց հիւանդութիւնդ բժշկել :  
Քանի որ կենդանի ես՝ ինչ որ կարողանաս՝  
խրկէ երկինքը, այսինքն աղօթք կամ տըք-  
նութիւն կամ սաղմոսերգութիւն կամ համ-  
բերութիւն, հետը խօնարհութիւն եւ կամ  
սէր անկեղծաւոր առ իս : Եթէ ասոնք եր-  
կինք խրկես, ուրախութիւն եւ հանգիստ  
կստանաս, եւ կլսես ինծմէ այն ձայնը թէ  
« Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք  
զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկըզ-  
բանէ աշխարհի » :

Գ Լ Ո Ի Խ Լ Թ.

ՋԱՆԱՉԱՆ ԽՐԱՏՔ ԸՈԳԵՇԱՀՔ.

Ա.



Քրիստոնեայ մը եթէ ոխը սրտէն չը-  
հանէ, կրսէ Տէրն մեր, եւ թշնամ-  
ւոյն բարիք չհատուցանէ, անոր բա-  
րեգործութիւնը չընդունուիր եւ  
մեղքերուն թողութիւն չլինիր:

Բ.

Ողորմութեան համար շատը կամ քիչը  
նայիլ պէտք չէ. հարկաւոր է բաշխել աղ-  
քատաց, բայց զուարթ երեսօք եւ ուրախ  
սրտով պիտի արուի որ Աստուած ի փառս  
իւր համարի. ինչպէս այն այրի կլինը որ  
երկու դրամով շատ մեծատանց յաղթեց՝  
երբ յօժարութեամբ եւ ուրախ սրտով ձը-  
գեց զայն գանձանակը: Այլ եւ արդար  
վաստակէն պէտք է տալ, եւ ոչ զրկանքէ.  
զի լաւ է մի փոզ կամ մի պատառ հաց՝  
արդար վաստակէն տալ, քան տասն փոզ  
կամ շատ հաց՝ զրկանքէ շնորհել, որ անըն-  
դունելի է:



Մեծատանց եւ աղքատաց մէջ այս տարբերութիւնը կայ արքայութեան փառաց եւ դժօխքի տանջանաց համար. ոչ ամենայն աղքատք արքայութիւն կմտնեն, եւ ոչ ամէնն ալ դժօխք կերթան. դարձեալ ոչ ամենայն մեծատունք դժօխք կերթան, եւ ոչ ամէնն ալ արքայութիւն կմտնեն: Այն աղքատները արքայութիւն կմտնեն որ իրենց վիճակէն դժ են, առանց արտընջալու կտանին իրենց աղքատութիւնը, եւ Աստուծոյ մշտապէս փառք տալով, աղօթքով եւ ամենայն առաքինութեամբ զարգարուած՝ օրերը կանցունեն, եւ հոգւով աղքատք կանուանին: Այս տեղը թէպէտ աղքատ են նոքա, չքաւոր են, անանկ են, բայց այն տեղը ի հանդերձեալը մշտնջենական հարստութիւն պիտի ունենան արքայութեան մէջ, եւ յաւիտենական ուրախութեամբ պիտի վայելեն Աստուծոյ ամենաուատ բարութիւնները: Անոր համար Քրիստոս այնպիսիներուն երանի տալով կըսէ. « երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւնն երկնից »: Նոքա այնպէս երջանկութեամբ կապրին հրեշտակաց եւ ամենայն սրբոց հետ՝ ինչպէս աղքատ Ղա-

զարսը, որ աշխարհիս մէջ մեծատան դըրան առջեւը անտանելի աղքատութեամբ կանցունէր օրերը, արքայութեան մէջ Արաճամու գողն էր հանգչած ամենայն ուրախութեամբ: Եւ այն աղքատները դժօխք պէտք է երթան՝ որ այս տեղը իրենց վիճակէն անգոհունակ են. տրանջալով՝ առանց Աստուծոյ փառք տալու եւ զանազան հայհոյութեամբ կտանին իրենց աղքատութիւնը, այսինքն սատանային խրատովը՝ աղօթքէ պահքէ եւ ամենայն բարեգործութիւններէ հեռու կենալով, անառակութեան, արբեցութեան եւ տեսակ տեսակ չարութեան կհետեւին: Ասոնք Աստուծոյ խնամքէն զրկուելով, երբոր կվախճանին՝ դժօխքի բաժին են, եւ այն տեղը պիտի մնան յաւիտենական անտանելի տանջանաց մէջ: Այս տեղը անոնք ինչպէս աղքատ էին եւ կարօտ, այն տեղն ալ յաւիտենական աղքատութեան եւ տառապանաց մէջ պիտի մնան դառնազոյն տանջանօք:

Այն մեծատունները կամ իշխանները արքայութիւն կմանեն՝ որոնք Աստուծմէ երկիւղ ունենալով՝ բարեպաշտ կլինին, առաքինի, աղօթասէր, ողորմած, բարերար, ընկերասէր, անոխակալ, անյիշաչար, ամե-

նայն բարեպաշտութեամբ զարգարեալ : Այնպիսիները , ինչպէս այս տեղը հարուստ են երջանկութեամբ , կուրախանան իրենց բարեկամաց հետ , այն տեղն ալ մշտնջենաւոր հարստութիւն պիտի ունենան , եւ հըրեշտակաց եւ ամենայն սրբոց հետ ուրախանալով յաւիտեանս յաւիտենից պիտի վայելեն . ինչպէս Աբրահամ , Յոր , Կուռնելիոս եւ այլ շատ նահապետներ եւ իշխաններ , որք այս տեղն ալ հարստութեամբ անցուցին իրենց կեանքը , այն տեղն ալ յաւիտենական կեանքի եւ փառքի մէջ են : Եւ այն մեծատունները կամ իշխանները դժոխք կերթան՝ որոնք այս տեղը աշխարհիս անցաւոր բարութիւնները անյազարար կ'վայելեն , բայց անուամբ միայն քրիստոնեայ լինելով՝ ոչ Աստուծմէ երկիւղ ունին եւ ոչ քրիստոսաւանդ պատուիրանները կը պահեն , այլ չարագործ են , անառակ են , արբեցող են , անողորմ են , ազահ են , ընչասէր՝ ռիակալ են , անհաշտ են , հայհայող են , խռովասէր են եւ բամբասող են : Այսպիսի իշխանները աշխարհիս մէջ թէ եւ հռչակաւոր հարուստ են , բանի կարօտութիւն չունին , այլ առաքինութիւն եւ բարի գործք չունենալներուն համար՝ զկնի

մահուան այն տեղը, այսինքն հանդերձեալ  
ժամանակին՝ մշանջենաւոր աղքատութիւն  
պիտի քաշեն, եւ դժոխքի մէջ պիտի մնան  
յաւիտենական դառն տանջանքով: Ինչպէս  
այն անողորմ մեծատունը որ աղքատ Ղա-  
զարօսի չողորմելուն համար՝ դժոխքի մէջ  
մէկ կաթ ջրոյ կարօտութիւն քաշելով՝ կը-  
պապակէր:

Գ.

Քրիստոս Տէրն մեր կհրամայէ թէ ո՛վ  
որ իմ Հօրս կամքը կատարէ, նա է իմ եղ-  
բայրս, քոյրս եւ մայրս: Գրիգոր Աստուա-  
ծաբանն ալ կըսէ թէ «կանայք, կոյս եղիք,  
որ Քրիստոսի մայր լինիք»: Այս խօսքը  
կանայք երբոր լսեցին, ժողվանցան իսկոյն,  
Գրիգոր Աստուածաբանի վրայ կռիւ գնացին  
եւ ասացին. Ո՛վ իմաստուն եւ մեծ վարդա-  
պետ, ահա սխալեցար, եւ չես իմանար  
թէ ինչ կխօսիս. եթէ կանայքս կոյս մնա-  
ցած լինէինք ըսին, Աստուծոյ օրհնութեան  
հրամանը ո՛վ պիտի կատարէր, այն որ ա-  
սաց թէ Աճեցէք եւ բազմացարուք. եւ  
մեր մայրը եւայն ո՛չ ապաքէն որդեճնու-  
թեան համար ստեղծեց Աստուած: Եթէ  
կանայքս կոյս մնայինք՝ զքեզ ո՛վ էր ծներ,  
կամ առաքեալները, մարգարէները, հայ-

բապեաները եւ վարդապետները, թագաւորները եւ իշխանները եւ արդարները, որ արքայութեան ժառանգորդ եղան» : Գրքի գոր Աստուածաբանը պատասխան տուաւ կանանց թէ « Այն, արդարութեամբ կխօսիք. ես ալ կհաւանիմ եւ կօրհնեմ զձեզ որ Աստուած ձեր արդանդէն է ստեղծեր զմեզ. բայց ես չեմ հրամայեր, ըսաւ, թէ մարմիններդ կոյս պահեցէք, այլ ձեր ուրիշ գործքերը բարի ըրէք. այրասէր եղէք, պարկեշտութիւն սիրեցէք, ձեր զաւակները առաքինութեամբ մեծցուցէք, կախարդութենէ, հպարտութենէ, ռիսակալութենէ եւ բարկութենէ հեռու պահեցէք՝ ինչպէս զձեզ, այնպէս եւ ձեր զաւակները. այն ատենը Քրիստոսի մայր կլինիք ըսաւ. ինչպէս Քրիստոս ինքը ասաց թէ « Ով որ իմ Հօրս կամքը կատարէ, նա է իմ եղբայրս, իմ քոյրս եւ իմ մայրս » (Մատթ. ԺԲ. 50) :

Ե.

Քրիստոս աշխարհք չեկած՝ առաջին ժամանակները էրիկ մարդիկ զկանայս մեծ անարգանօք կնախատէին, եւ արհամարհելով միշտ սանակոխ կանէին եւ կըսէին անոնց թէ դուք վերջէն ստեղծուած էք. Ազամոյ մարմինէն առաւ զձեզ Աստուած :

Նաեւ դուք եղաք պատճառ կըսէին՝ Ադամայ եւ նորա ծննդոցը կործանմանը, որով ազգ մարդկան զրկուեցան Աստուծոյ բարութենէն: Եւ այսպէս մեծ խռովութիւն կար արանց եւ կանանց մէջ մինչեւ Քրիստոսի գալուստը: Երբոր ծնաւ Բանն Աստուած՝ այր կատարեալ առանց մեղաց ի սուրբ կուսէն Մարիամայ, այն ատենը ազատեցան կանայք էրիկմարդոց նախատինքէն եւ անարգանքէն, վասն զի թէպէտ եւա կորուց զամենայն որդիս մարդկան, եւ օտարացուց Աստուծմէ, բայց Մարիամ սուրբ Աստուածածնի ծնունդը նորոգեց եւ լուսաւորեց զազգ որդւոց Ադամայ:

Պօղոս առաքեալն ալ կըսէ. «Որք ի Քրիստոս մկրտին՝ զՔրիստոս զգենուն, — թէ այր եւ թէ կին. — չիք խտիր ոչ արուի եւ ոչ իգի» (Գաղատ. Գ, 27): «Ոչ կինը կրնայ առանց առն կենալ եւ ոչ այր առանց կնոջ, զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս» (Կորնթ. ԺԱ, 11):

2.

Խոզին համար լաւ է ազրը եւ տիղմը քան զմարդարիւոր. այնպէս ալ ամենայն մարդ որ մեղք կսիրէ՝ սրբութենէ եւ Աստուծոյ ամենայն բարութենէ կփախչի:

Ե.

Մարգու որ պահէ չպահէ առանց զօրա-  
ւոր պատճառի մը, եւ աղօթքի ծոյլ լինի,  
Աստուծոյ արքայութիւնը չմաներ. զի պահ-  
քը եւ աղօթքը հոգեւոր նաւ է թեթեւըն-  
թաց. հրեղէն սանդուխ է եւ լուսեղէն ճա-  
նապարհ է որ ուղղակի գէպի առ Աստուած  
կառաջնորդէ զմարդն:

Ը.

Կիրակի օրը պէտք է պատուել եւ սուրբ  
պահել, ինչպէս Աստուած Մովսեսի ձեռքով  
հրամայեց մեզի թէ «Յիշեան զօր շաբաթուն  
զի սրբեցես», Հին օրէնքին ատենը շաբաթ  
օրը կպահէին, բայց նոր օրէնքով կիրակին  
է որ առաքեալքը փոխեցին կիրակի ըրին.  
պէտք է այն օրը պահել, ամենայն մար-  
մնաւոր գործքերէ ետ կենալ. հոգեւո-  
րով պարապիլ, Վեց օրը մարմնոյդ համար  
աշխատիս՝ բաւական է. Աստուած ալ արար-  
չագործութիւնը վեց օրուան մէջ կատա-  
րեց, եօթներորդ օրը հանգստացաւ: Աստու-  
ծոյ այս տնօրէնութիւնը օրինակ ունենա-  
լով՝ պէտք է ճանչնանք եւ սուրբ պահենք  
այն օրը որ մեզ Տէրունի է եւ թագաւո-  
րական:

Թ.

Սամենայն մարդ, թէ աղքատ եւ թէ մեծատուն, որ աշխարհիս մէջ կզրկուին մարմնաւոր իշխաններէ, գատաւօրններէ գողէ եւ կամ աւազակներէ, Աստուած կճանաչէ նոցա զրկանքը. ամենուն զրկանաց փոխարէնը կհատուցանէ իւր ամենառատ բարութիւններէն, զրկողներն ալ կպատժէ՝ ինչպէս ինքը կկամենայ, եւ ինչպէս Դաւիթ ալ կվկայէ ասելով թէ «Պահէ Տէր ճշմարտութեամբ զհամար զրկանացն, եւ առնէ իրաւունս զրկելոց». եւ Սողոմոն կըսէ. «Զնջան լինի արդարոյն անխրատն»: Մէկ մարդ որ ուրիշը զրկէ, այնպէս թողգիանայ որ զրկանաց հետ նորա մեղքն ալ ինքը կառնու:

Ժ.

Քրիստոս Տէրն մեր կհրամայէ իրեն սուրբ աւետարանովը թէ «Ով որ զիս կսիրէ, թող իմ խաչս վերցընէ, ետեւես գայ». ոչ թէ խաչին նիւթը, այսինքն երկաթը կամ արծաթը կամ փայտը եւ կամ քարը ըսաւ Քրիստոս՝ մեր ուսը առնուլ եւ երթալ նորա հետ, այլ խաչին խորհուրդը հրամայեց առնուլ եւ նորա հետ երթալ:



այն է աշխարհիս մէջի նեղութիւնը եւ  
չարչարանքը սիրով յանձն առնուլ եւ  
թշնամուռն բարիք ընել. եւ հոգեւոր առաջ-  
նորդները կամ խոստովանահայրը ինչ բեռ-  
որ ձեր վրայ դնեն՝ սիրով յանձն առնուք  
եւ համբերութեամբ տանիք. եւ ինչ բան  
որ ձեզ չար թուի՝ զայն ուրիշին չընէք.  
այս է նեղ դուռն եւ անձուկ ճանապարհն  
որ տանի ի կեանսն յաւիտենականս :

ԺԱ.

Սուրբ հրեշտակները Աստուծոյ հրամա-  
նովը Աստուծոյ երկիւղը կսերմանեն մարդ-  
կանց սրտին մէջ եւ առաքինութիւն կսով-  
րեցնեն. այսպէս եւ պղծագործ դեւերը  
չար վիշապին հրամանովը անգագար կքա-  
լին երկրիս վրայ եւ ծածկաբար կսերմանեն  
ամենայն մարդկանց մտքերուն մէջ ամէն  
չար եւ անօրէն պիղծ խորհուրդները եւ  
մտածութիւններ՝ որ Աստուած կատէ. իսկ  
մարդս անձնիշխան է. որը կամենայ եւ ո-  
րը սիրէ ախորժելով, թէ զչարը եւ թէ  
զբարին, անոր մէջ կաշխատի եւ այն կը-  
գործէ : Ինչ որ գործէ մարդ՝ զայն կժա-  
ռանգէ :

ՅԲ.

Որդիք, ձեր ծնողաց հնազանդ եղիք, եւ զանոնք մեծարեցէք: Ուլ որ ծնողքը կը պատուէ՝ զԱստուած կսիրէ. եւ ուլ որ ծնողքը կանարգէ, զԱստուած կատէ. վասն զի ծնողաց օրհնութիւնը եւ անէծքը իրենց որդւոց վրան է; ինչպէս Աստուծոյ օրհնութիւնը եւ անէծքը ամենայն արարածոց վրան է:

ՅԳ.

Արք, ձեր կանայքը սիրեցէք եւ նոցա խնամք տարէք, եւ ոչինչ տեղը զանոնք մի տրամեցընէք: Անոր համար Ադամայ մարմինէն առաւ Աստուած եւ զկինը ստեղծեց՝ որ խնամք տանի նորա, ինչպէս իրեն մարմնոյն: Եւ գուք կանայք՝ աննենգ սիրեցէք ձեր այրը, ձեր վարձահատոյցը Աստուած է:

Կամաւոր բարին կսիրէ Աստուած, եւ մեզմէն զայն կխնդրէ. բայց չարերը գէպ ի չարը կգառնան իրենց կամքովը, եւ Աստուծոյ կամքը որ ի բարին է՝ չուզեր որ այնպէս նորա մնան: Աստուծոյ կամքը այն է որ ամենայն մարդ բարի լինի, եւ մենք մեր կամքովը չարին աւելի կգիմենք քան թէ ի բարին: Երբոր մեր կամքը այս կեան-

քիս մէջ կատարուի, ապա վերջին օրը Աստուծոյ կամքը կկատարուի. վասն զի մեզքը եւ գիւական հակառակութիւնը կվերնայ այս կեանքէս, եւ սուրբերը արքայութիւն կմտնեն, որում արժանի ընէ Քրիստոս Աստուած մեր այս գիրքը շարագրողս եւ սիրով կարգացողները. նմա վառք յաւիտեանս. ամէն :





## Յ Ա Ն Կ Գ Լ Խ Ո Յ.

Գ Լ Ո Ւ Խ	Ա.	Յաղագս բարի խորհրդոյ . . . . .	1
—	Բ.	Յաղագս բարի մտածման . . . . .	6
—	Գ.	Յաղագս կարճութեան կենաց . . . . .	10
—	Դ.	Յաղագս բոլոր աւուրն ըստ հոգւոյ կե- ցութեան . . . . .	18
—	Ե.	Յաղագս հեշտասիրութեան . . . . .	22
—	Զ.	Յաղագս մարմնոյ . . . . .	26
—	Է.	Յաղագս աշխարհի . . . . .	30
—	Ը.	Յաղագս հետեւողութեան ընթացից Քրիս- տոսի եւ վասն ունայնութեանց աշ- խարհի. . . . .	34
—	Թ.	Յաղագս ինքնահաւանութեան . . . . .	36
—	Ժ.	Յաղագս ունայնութեան աշխարհի յուսոյ. . . . .	39
—	ԺԱ.	Յաղագս համբերելոյ փորձութեանց . . . . .	41
—	ԺԲ.	Յաղագս առանձնութեան եւ յապահո- վութեան. . . . .	45
—	ԺԳ.	Յաղագս բշտառութեան մարդկային կե- նաց . . . . .	49
—	ԺԴ.	Յաղագս փոփոխութեան մարդկային կե- նաց. . . . .	53
—	ԺԵ.	Յաղագս ծուլութեան . . . . .	56
—	ԺԶ.	Յաղագս քնոյ . . . . .	60
—	ԺԷ.	Յաղագս արբեցութեան . . . . .	63

— ԺԸ,	Յաղագս դատարկութեան . . . . .	68
— ԺԹ,	Յաղագս ազանութեան . . . . .	72
— Ի,	Յաղագս յափշտակութեան . . . . .	78
— ԻԱ,	Յաղագս վնասուց մեղաց . . . . .	81
— ԻԲ,	Յաղագս խոկման մահու . . . . .	85
— ԻԳ,	Յաղագս մտածութեան վերջին դատաս- տանի . . . . .	88
— ԻԴ,	Յաղագս դիմելոյ յապաշխարութեան . . . . .	91
— ԻԵ,	Յաղագս յախտնական կենաց . . . . .	93
— ԻԶ,	Յաղագս սիրոյ բշնամեաց . . . . .	95
— ԻԷ,	Յաղագս ջնաւատացողաց բէ զոյ յարու- բչան մեռելոց, եւ դժոխք մեղաւորաց . . . . .	98
— ԻԸ,	Յաղագս արքայութեան երկնից . . . . .	101
— ԻԹ,	Յաղագս փառաց արքայութեան երկնից . . . . .	103
— Լ,	Յաղագս բարերարութեանն Աստուծոյ . . . . .	106
— ԼԱ,	Յաղագս պանդխտութեան նինզ զգայու- թեանց . . . . .	110
— ԼԲ,	Յաղագս մտածման մեղաց . . . . .	116
— ԼԳ,	Յաղագս նեղութեան եւ վշտաց . . . . .	120
— ԼԴ,	Յաղագս աղօթից . . . . .	124
— ԼԵ,	Յաղագս պանոց . . . . .	136
— ԼԶ,	Յաղագս ողորմութեան . . . . .	140
— ԼԷ,	Յաղագս խոստովանութեան եւ ապաշ- խարութեան . . . . .	144
— ԼԸ,	Յաղագս նրաւիրելոյ Գրիտտոսի զմեղա- ւորս յապաշխարութեան . . . . .	148
— ԼԹ,	Զանազան խրատք հոգեշահք . . . . .	166





5n



923

002 7662

923

F. 4/1

